

6-53

Лицо
44

РФФИК СОВЕТСКОГО Союза

900

2000

ՀԵՅՏԻԿ ՎԱԽԱՐԱԿԵ

ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՅ ԱՐԵՎԱՆԻ

ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՅ ԱՐԵՎԱՆԻ

ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՅ ԱՐԵՎԱՆԻ

Հայ
44

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՅ ՀՐԱՏՎԱԿԱՆԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Գրքը

№ 134.

ՏԵՂՄԱԴՐ

900


ՎԵՆԵՏԿԻ ՎԱՃԱՌԱԿԱՆԸ

ԹԱՏՐԵՐԴՈՒԹԻՒՆ ՀԻՆԳ ԱՐԱՐՈՒԵԹԱԾ

ածո 7831 և ապագա 61-62 աշուբր լուսական օնտառոց

Թարգմ. անգլիերէնից

ՅՈՎՅ. ԽԱՆ ՍԱՍԵՅԵԱՆ



7681

ԹԻՖԼԻՍ

Տպարան Ա. Գ. Պոտինեանցի || Տիպոգրաֆія М. Д. Ротманца.
Голов. просп., д. № 41.

1897

ԵՐՄԱԿԻ ԱՐԴՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱՐԴՅՈՒՆ

Дозволено цензурою. Тифлисъ, 19-го февраля 1897 года.

ԱՐԴՅՈՒՆ ՎՐԱ ՏԱՐԾՈՒՅԹ



29-45

44-96



ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ

ՎԵՆԵՏԻԿԻ ԴՈՒԲՍԸ.

ԱՐԱԳՈՆԻ ԻՇԽԱՆԸ.

ՄԱՐՈԿԻ ԻՇԽԱՆԸ.

ԱՆՑՈՆԻԾ, ՎԵՆԵՏԻԿԻ մի վաճառական.

ԲԱՍՍԱՆԻԾ, մի խառացի ազնուական, ԱՆԱՊՈՆԻՕՂԻ բարեկամ:

ՍՈԼԱՆԻԾ

ՍԱԼԱՐԻՆԾ

ԳՐԱՅԻԱՆԾ

ԼՈՐԵՆՑԾ, ԶԷՄԻԿԱԼԻ սիրահարը.

ՇԱՅԼՈԿ, հարուստ հրէալ, ԶԷՄԻԿԱԼԻ հալրը.

ՑԻՒԲԱԼ, մի ալ հրէալ, Շալոկի բարեկամ.

ԼԱՆՍՈԼԾ ԳՈԲԲԾ, մի խեղկատակ, Շալոկի ծառան.

ԾԵՐՈՒՆԻ ԳՈԲԲԾ, Լաճուլոցի հալրը.

ԼՔՈՆԱՐԴԻԾ, Բասսանիօլի ծառան.

ԲԱԼԹԱԶԱՐ, ՊՈՐԳԻԱԼԻ ծառաներ.

ՍՑԵՖԱՆԾ,

ՊՈՐՅԻԱ, մի հարուստ օրիորդ.

ՆԵՐԻԱՍԱՆ, նորա նաժիշտը.

ԶԷՄԻԿԱ, Շալոկի գուսարը:

ՎԵՆԵՏԻԿԻ մագնիֆիքոները (առաջնակարգ մարդիկ և պետական ժողովի անդամներ), դատարանի պաշտօնեաներ, ծառաներ, բանտապահ, սպասաւորներ:

Տեսարանը տեղի ունի մասսամբ Վենետիկում եւ մասամբ
Բել'մինտում, (Պորցիայի դղեակը):

ՀԱՐԳՈՒԹ ՎԻՇՎԱՄ	0.13.000
ՀԱՐԳՈՒԹ ՎԻՇՎԱՄ	0.13.000
ՀԱՐԳՈՒԹ ՎԻՇՎԱՄ	0.09.000
ՀԱՐԳՈՒԹ ՎԻՇՎԱՄ	0.13.000
ՀԱՐԳՈՒԹ ՎԻՇՎԱՄ	0.09.000
ՀԱՐԳՈՒԹ ՎԻՇՎԱՄ	0.06.000

ան մատուցել և թրցնել բայց պատճենը գոյացած է
առաջնահանձնութեան մատուցութեան մասին ուժամբ
առաջնահանձնութեան մատուցութեան մասին ուժամբ

պատճենը մատուցել և թրցնել բայց պատճենը գոյացած է
առաջնահանձնութեան մատուցութեան մասին ուժամբ

ՎԵՆԵՏԿԻ ՎԱՃԱՐԱԿԱՆԸ

ԱՐԱՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

ՏԵՍԱԲԵՆ Ա.

ՎԵՆԵՏԿԻ. մի վաղոց. մանում ևն ԱՆՑՈՆԻՕ, ՍԱԼԱՐԻՆՕ
և ՍՈԼԱՆԻՕ.

ԱՆՑՈՆԻՕ. Ճշմարիտն ասած՝ չըգիտեմ ինչու
Սլուշափ տըլսուր եմ. դա ինձ տանջում է:
Ասացիք՝ վիշտը ձեզ էլ է տանջում.
Բայց որտեղից է այս տրտմութիւնը,
Որտեղից գըտալ, որտեղ ըստացալ,
Ինչ նիւթից է այս, ինչից է ծընուած—
Ալդ գեռ չըգիտեմ. ատկայն այս թախիծն
ինձ այն աստիճան տըլսմարտցըել է՝
Որ գըտուարութեամբ ճանաչում եմ ինձ:

ՍԱԼԱՐԻՆՕ. Զեր միտքն անդադար տարուբերում է
Ովկիանի վերալ. ձեր առգոսները *)
Իրանց վառահեղ առագաստներով
Նըրջում են այնտեղ՝ որպէս իշխաններ
և կոհակների ճախ քաղաքացիք.

*) Առգոս=Argosy. Ոտագուզակի մեծ վաճառականական նա-
ւերը:

Կամ, որպէս ծովի մեծաշուք զարդեր՝
Վերից նայում են փաճառականի
Չընչին նաւերին, որոնք գլուխ տալով
Թռչում անցնում են նոցա կողքերից
Հիւկէն թռերով:

ՍՈԼԱՆԻՕ.

Հաւատացէք ինձ,
Թէ ես էլ ձեր պէս իմ հարստութիւնս
Սլդպէս վրտանգի դըրած լինէի
Ըզգացմունքներիս լաւագոյն մասը
Կըլինէր հեռան, իմ լոյսերի մօտ:
Միշտ կըզբաղուէի խոտեր փըրցնելով,
Որ իմանալի քամին ուրկից է.
Քարտէզների մէջ միշտ կըդիտէի
Նաւահանգիստներն, ամբարտակները
Եւ կայսները. և ամեն մի բան,
Որ երկիւլ տար ինձ նաւերիս մասին՝
Անկասկած սաստիկ կըտըրտմեցնէր ինձ:
Այն, շունչս անգամ, որ սառեցնում է
Իմ արդանակը՝ ինձ սարսուռ կազդէր,
Երբ մըտածէի թէ ծովի վերալ
Շատ ուժին քամին ի՞նչ վնասներ կըտար:
Ես չէի կարող ժամացոյցի մէջ
Աւազի արագ հոսանքը տեսնել՝
Առանց լիշելու ծանծաղուտները
Եւ ծովամիջի խըճակոյտերը.
Եւ ինձ կերեար իմ հարուստ «Անդրէն» *)
Աւազում խըրուած, և ինձ կըթըւար
Որ իր մեծ կարծը նա կորացնում է
Յած, տւելի ցած՝ քան իր կողերը,
Եւ համբուրում է իր գերեզմանը:
Կարող էի ես եկեղեցի գնալ,
Տեսնել վիմաշէն սուրբ կառուցուածներ,

*) «Անդրէն» նաւի անունն է:

Եւ իսկոյն ևեթ չըմըտաբերել
Այն վրտանգաւոր ժայռերն ահագին,
Որոնք մի անգամ եթէ դիպէէին
Իմ քընքոյշ նաւիս գիւրտըեկ կողին՝
Բոլոր համեմներս ցըրիւ կըտային
Ծովի երեսին, իմ կերպասները
Կըհագցընէին գոռ ալիքներին:
Կարճ ասեմ, ինչ որ մի ըոպէ առաջ
Այնքան մեծ բան էր՝ այժըմ փուչ, ոչինչ:
Կարող եմ արդեօք խորհել այս մասին՝
Եւ չըմըտածել, որ այսպիսի բան
Եթէ պատահէր՝ ինձ կըտըրտմեցնէր:
Ի՞նչ հարկ կալ ասել. ինձ լաւ յայտնի է.—
Նորա համար է Անտոնիօն տըրտում՝
Որ մըտածում է իր ապրանքի վրայ:
Անջոնիօն Ոչ, հաւատացէք, պատճառըն այդ չէ.
Ես շնորհակալ եմ իմ ճակատագրից.
Իմ բոլոր բախտը մի միակ նաւի
Զեմ վրտահացել, ոչ էլ մէկ տեղի,
Եւ ոչ էլ բոլոր իմ ըստացուածներս
Այս ներկալ տարուայ բախտիցն են կախուած:
Ոչ, իմ ապրանքներս ինձ չեն տըրտմեցնում:
ԱԱԱԱՐԻՒՕ. Ապա ուրեմն սիրահարուած էք:
Անջոնիօն. Բահ, բահ:
ԱԱԱԱՐԻՒՕ. Այդ էլ չէ. թող ուրեմն ասենք,
Որ զուք տըխուր էք՝ քանզի ուրախ չէք:
Ուրեմն նոյնչափ գիւրին կըլինէր
Ծիծաղել, ցատկել, և լետոյ ասել
Որ գուք ուրախ էք՝ քանզի տըխուր չէք:
Ճիշդի նոր, երկդիմի Յանոսը *) վըկալ,
Բնութիւնն էլ երեմն սովոր է ստեղծել

*) Երդում է Յանոսով, որովհետեւ նորա երկու տարբեր երեսներից մէկը ժամանում էր, միաը ծիծաղում: Eccles.

Անսովոր մարդիկ. ոմանք անդադար
Թրանց աչքերը փոքրացընում են,
Եւ միշտ ծիծաղում, թութակի նըման
Երբ սա լըսում է մի պարկաբըզուկ.
Ուրիշներն այնպէս քացախ դէմք ունին,
Որ չեն կամենում ժըստելիս անդամ
Ցոյց տալ ատամներն, թէկուզ նեստորն էլ
Երդմամբ հաւաստէր, որ ծիծաղելու
Իրաւ տեղիք կալ^{*)}:

Մանում են Բասսանիօ, Լորէնցօ եւ Գրացիանօ =
ՍՈՂԱՆԻՕ.

ԱՀԱ Բասսանիօն,

Ազնուատոհմիկ ձեր ազգականը.
ԱՀԱ Գրացիանօն, նաև Լորէնցօն:

Թէհ, մընաք բարով. մենք ձեզ թողնում ենք
Մեզնից լաւագոյն ընկերների հետ:

ՍԱԼԱՐԻՆՕ. Ես կուգենալի այնքան մնալ այստեղ՝
Որ կարենալի ձեզ ուրախացնել,
Եթէ ինձանից լաւ բարեկամներ
Ինձ ըլկանխէին:

ԱԽԾՈՒԻՕ. Պարոն, իմ աչքիս
Ձեր բարութիւնը շատ թանկագին է.
Բալց ինձ թըլում է, որ դուք գործ ունիք,
Եւ պատեհ առժից օգուտ էք քաղում
Մեկնելու համար:

ՍԱԼԱՐԻՆՕ. Բարեւ, պարոններ:
ԲԱՍՍԱՆԻӨ. Պարոններ, ե՞րբ ենք զըւարձանալու.
Դէ ե՞րբ, ասացէք. բնաւ չէք երևում.

ՍԱԼԱՐԻՆՕ. Անպատճառ գնում էք:
ՄԵՐ ազատ ժամերն
Ձեզ կընըւիրենք:

Սալարինօ եւ Սոլանիօ դուրս են գնում:

^{*)} Նեստորը լինելով լուն հերաներից ամենից ծերը՝ ուրիշներնից քիչ արամազրուած պէտք է լինէր ծիծաղելու.

Clarendon.

ՀՈՐԷՆՅՕ. Սինիօր Բասսանիօ,

Այժըմ ո՞ր գըտաք դուք Անտոնիօին՝
Ես և Գրացիանօն ձեզ հըտժեշտ կըտանք.

Բալց ճաշի ժամին լիշեցէք թէ ուր
Ժամադիր եղանք:

ԲԱՍՍԱՆԻӨ. Ես չեմ մուանայ:

ԳՐԱՑԻԱՆԻՕ. Սինիօր Անտոնիօ, լաւ չէք երևում.

Շատ էք մըտածում աշխարհիս վերայ:

Ո՞վ աշխարհիս վրայ շատ է հոգս անում
Կորցնում է նըրան: Հաւատացէք ինձ,

Անչափ փոխուած էք:

ԱԽԾՈՒԻՕ. Լոիր, Գրացիանօ,

Ես այս աշխարհին այնպէս եմ նայում
Ինչպէս որ նա է.—մի բեմ, որի վրայ

Ամեն մարդ պէտք է մի դեր կատարէ:
Ինձ ընկած դերը մի տըխուր դեր է:

ԳՐԱՑԻԱՆԻՕ. Խեղկատակի դերն ինձ համար թողէք.

Թող ուրախութեան և ծիծաղի մէջ
Պատէ ճակատը ծերութեան կընճիռն.

Լաւ է որ լեարդըս գինով ջերմանայ՝
Քան սիրտըս սառչի մահաբեր վլշտից:

Ինչու պէտք է մարդ, երբ երակներում
Տաք արիւն ունի՝ ծուլանայ նըրսի

Իր պապի մարմար որձանի նըման.

Ինչու քընանայ արթուն ժամանակ.
Շատ մոթմոթալով դեղնութիւն բերէ^{*)}:

*.) Այս բոլոր հատուածում մարմնի և հոգու միջն գտնուու սերտ չարակցութիւնը ձգրիտ բնախօսական ձշմարտութեամբ նկարագրուած է: Հողու ազդեցութիւնը մարմնական հիւանդութիւն առաջ բերելու մէջ՝ շատ հետաքրքիր կերպով նկատուամ է «դեղնութիւն» կոչուած հիւանդութեան դէպում, որ արդիւնք է վշտի և մեծ գուղմունքի: Շատ անդամ պատահած է, որ մի վատ լուր մի քանի ժամուակ ընթացքում դեղնութիւն է արտադրել: Այս հետաքրքիրելի

Լըսիր, Անտոնիօ. — Ես քեզ սիրում եմ
Եւ իմ սէրս է ալժմ որ քեզ հետ խօսում է:
Մի կերպ մարդիկ կան, որոնց երեսներն
կարծես լրճացած աւազանի պէս
Նեխուռմ են մընում, և յօժար կամքով
Անշարժանում են՝ որպէսզի դրանով
Խելքի, լըրչութեան, խորամըտութեան
Համբաւ ըստանան, կարծես ուզում են
Ասել. «Ես՝ պարոն պատգամախօսն եմ,
Եւ երբ որ բանամ իմ շրթունքներս՝
Թող շուն չըհաջէ»: Օ՛հ, իմ Անտոնիօ,
Ես ճանաչում եմ այնպիսի մարդիկ,
Որ խելօք մարդու համարում ունին
Լոկ այն պատճառով՝ որ բնաւ չեն խօսում,
Որոնք, վըստահ եմ, եթէ խօսէին՝
Գատաղարտութեան կարժանացնէին
Ունկնդիքներին, ստիպելով նըրանց
Յիմար անուանել իրենց եղբօրը *):
Այս մասին յետոյ երկար կըխօսեմ.
Բայց դու մի որսար տըրտմութեան խալծով
Տիմարութեան ձուկ, կամ մի վատ համբաւ:
— Եկ, գնանք, Լորէնցօ. — առ ալժմ, մնաս
բարով.
Քարոզիս վերջը ճաշելուց յետոյ:

բժշկական իրողութիւնը Շէկսպիր շատ ճշտութեամբ նկարագրել է.
Նույնպէս զինու աղղեցութիւնը լեարդի լերաւ և արտօնութեան ազ-
դեցութիւնը սրտի վերապէ անվիճելի բյշկական իրողութիւններ են:

Bucknill.

*) Աւտինքն կան մարդիկ, որոնք իմաստում են համարւում՝
քանի որ լուս են, և երբ որ բանան իրանց բերանը, այնպէս ան-
միտ բաներ կամեն, որ լսողները կստիպուին նորանց վիմար ան-
ուանելու, և այդ կերպով կարժանանան Աւետարանի մէջ (Մատթ.
Պլ. Ե. 22) նշանակուած դատապարտութեան:

Theobald.

ՀՈՐԻՆՅՈ. Լաւ, ցըտեսութիւն մինչ ճաշի ժամը:
Երևի ես էլ այդ միւնոյն համը
ինելոքներից եմ. քանզի Գրացիանոն
Ինձ թոյլ չէ տալիս մի հատ բառ խօսեմ:
ԳՐԱՑԻԱՆՈ. Լաւ, երկու տարի ինձ հետ կենակցիր,
Յետոյ եթէ դու քո ձայնըդ լըսես՝
Էլ չես ճանաչի: Եղանական որով
ԱՆՑՈՒՅԻՈ. Լաւ, գընաք բարով:
Ուրեմն ես էլ պէտք է ձեր նըման
Նատախօս դառնամ:
ԳՐԱՑԻԱՆՈ. Աւելի լաւ է:
Վահ, լուսութիւնը լաւ բան է, միայն
Անվաճառելի աղջըկալ համար,
Կամ կովի լեզուի ապուխտի համար:
Գրացիանո եւ Լորէնցօ դուրս են գնում.
ԱՆՑՈՒՅԻՈ. Այս բոյորի մէջ կայ արդեօք մի միտք:
ԲԱՍՍԱՆԻՈ. Ամբողջ Վենետկում մէկ հոգի չըկայ, որ Գրա-
ցիանով չափ անմիտ խօսքեր խօսի: Նորա իմաստաւոր
խօսքերը նման են երկու ցորենահատի, որոնք թագնուած
են երկու գրիւ լարդի մէջ. պէտք է ամբողջ օրը որոնէք,
մինչեւ որ կարողանաք գտնել. իսկ երբ որ գտնէք՝ կտես-
նէք, որ փնտուել էլ չարժէք:
ԱՆՑՈՒՅԻՈ. Լաւ, ասացէք ինձ, այն բնչ տիկին է,
Որի մօտ գաղտնի ուխտ էք գընալու
Եւ որի մասին խոստայաք պատմել:
ԲԱՍՍԱՆԻՈ. Անտոնիօ, արդէն ձեզ քաջ յախտնի է,
Որ ես վատնել եմ իմ հարըստութիւնս,
Պահ մի ցոյց տալով աւելի մեծ շուք՝
Քան ներում էին անզօր միջոցներս.
Ինձ համար ցաւ չէ, որ պէտք է թողնեմ
Այս փարթամ կեանքը. այլ մեծ ցաւս այն է,
Որ պատուով դուրս գամ պարտքերիս տակից,
Որոնց մէջ ընկալ շըռալ կենցաղով:

Բարի Անտոնիօ, ես ամենից շատ
Զեզ եմ պարտական գըրամտ և սէրըս.
Եւ ձեր սիրոյ վրայ վըստահանալով՝
Ուզում եմ ալժըմ բանալ ձեր առջե
Այն բոլոր մտքեր ու ծրագիրներս,
Որոնց շընորհիւ լուս ունիմ փրկուել
Բոլոր պարտքերից։

Անձոնիօ. Սիրելի՛ Բասսանիօ,
Յալտնեցէք, խընդըեմ. Եթէ դա դուրս չէ
Պատուի սահմանից, որպէս չէք և դուք՝
Հաւաստի եղէք, որ իմ քսակըս
Անձըս և բոլոր իմ միջոցներըս
Պատրաստ եմ զոհել ձեր ծառայութեան։

ԲԱՍՍԱՆԻՕ. Երբ որ գըպրոցի աշակերտ էի՝
Ինձ պատահում էր կորցընել մի նետ.
Իսկոյն նոյն թռիչքով և նոյն ուղղութեամբ
Ես արձակում էի մի ուրիշ նետ էլ,
Միայն առելի ուշադիր աչքով,
Որ միւսը գըտնել կարողանալի։
Այսպէս երկուսն էլ բախտին յանձնելով՝
Յաճախ երկուսն էլ ես գըտնում էի։
Թէ մանկութիւնից այս փաստն եմ բերում։
Պատճառը այն է, որ ասելիքը
Շատ անմիտ բան է։ Ես ձեզ շատ եմ պարտ-
Բայց շնորհիւ շըստալ իմ պատանութեան՝
Ինչ որ տուել էք՝ կորած գնացած է։
Բայց թէ հաճէիք մէկ նետ էլ ձըգել
Նէնց նոյն ուղղութեամբ, ուր արձակեցիք
Առաջին նետը՝ ես հաւաստի եմ,
Որ լաւ նայելով նըրա թըոիչքին՝
Կարող եմ գըտնել երկու նետելն էլ,
Կամ գէթ յետ բերել այս վերջին նետը,

Եւ երախտապարտ կըմընամ ընդ միշտ
Առաջնի համար։
Անձոնիօ. Բասսանիօ, դուք ինձ լաւ ճանաչում էք,
Եւ զուր վատնում էք ունայն ժամանակ՝
Պըտոյտ գործելով իմ սիրոյ շուրջը
Այդ ուրը մոլոր պատճառանքներով։
Իմ գէմ աւելի մեղանչում էք դուք
Զեր կասկածներսվ, տարակուսելով
Իմ անծալըածիր զահողութեան վըրայ՝
Քան եթէ բոլոր իմ ըստացուածքըս
Վատնած լինէիք։ Ասացէք միայն,
Ինչ ալէտք է անեմ, որ ձեր կարծիքով
Կարող եմ անել, — և ես պատրաստ եմ։
Ուրեմն խօսեցէք։

ԲԱՍՍԱՆԻՕ. Կայ Բելմոնտի մէջ
Մեծ հարըստութեան ժառանգ մի աղջիկ,
Որ գեղեցիկ է, և գեղեցկագոյն
Քան թէ այդ բառը *), իր սքանչելի
Առաքինութեամբ։ Նորա աչքերից
Երբեմըն քընքոյց, անխօս պատգամներ
Հատացել եմ ես. անունն է Պորցիա,
Ուշնչով պակաս քան կատոնի դուստր
Բիուտոսի Պորցիան։ Աշխարհը գիտէ
Նորա արժէքը, և քառեակ հողմերն
Ամեն ծովափից փըչում բերում են
Փառք ու պատուի տէր թախանձարկուներ։
Եւ գեղաճաճանչ նորա գանգուրներն
Կախուած են նորա սիրուն քունքերից՝
Որպէս ոսկի գեղմ. և այդ դարձնում է
Բելմոնտ ամրոցը Կողքիսի ծովեղը,
Եւ շատ Յասոններ գալիս են այնտեղ

*.) Ալմինքն ագեղիցիկ բառը բաւական չէ նորա կատարելու-
թիւնը սահմանելու համար։
Eccles.

Որ նըրան գրաւեն: Օ, իմ Անտոնիօ,
Թէ ունենալի միայն միջոցներ
Նրանց հետ մըրցելու՝ սիրտը ասում է ինձ
Որ լաղթանակը ես կըտանէի,
Եւ անտարակոյս կերջանկանալի:

Անձո՞նիօ. Գիտէք, որ բոլոր հարըստութիւնը
Ծովի վերալ է. ոչ դրամ ունիմ ես,
Ոչ էլ միջոցներ, որոնցով իսկոյն
Մի գումար ճարեմ. ուրեմքն, գընա,
Փորձէր թէ իմ վարկս այս քաղաքի մէջ
Ո՞րչափ ոյժ ունի. և ես պատրաստ եմ
Չըգել այդ վարկը մինչեւ վերջին ծալը,
Որ քեզ լաւ օժտած բել' մոնտ ուղարկեմ,
Քո գեղեցկուհի Պորցիալի մօտ:
Դէհ, գընա իսկոյն, հարց ու փորձ արա, —
Նոյնն էլ ես կանեմ, — թէ որտեղ դրամ կալ,
Եւ անտարակոյս կըտանամ ես այն,
Լինի իմ վարկով, լինի իմ սիրով *):

Գուրս են գնում:

*) Ալսինքն դրամ փոխ կառնեմ կամ իմ վարկովս կամ ի սէր
աին բարեկամութեան, որ փոխատուն կարող է ունենալ գէպի ինձ:

Հայ ոյ յեկան չո ՏԵՍԱՐԱՆԻ ին բայր չո ոյ
Ճաւարժանիալ զզնոյ յանու մարտի սժանա
մի այս ք մատն ուստացեալ ուզնա ոչ ճաւան
Բել' մինտ. մի սենեակ Պորցիալի տան մէջ:

Ճարդ է բան Մանում են ՊՈՐՑԻԱԼ և ՆԵՐԻԱՍԱ:

ՊՈՐՑԻԱԼ. Հաւատա, Ներիսսա. իմ փոքրիկ անձս այս
մէծ աշխարհից տաղտկացել է:

ՆԵՐԻԱՍԱ. Դուք իրաւունք կունենալիք, անուշիկ օ-
րիորդ, եթէ ձեր դժբախտութիւններն այնքան բազմաթիւ
լինէին, որքան ձեր յաջողութիւնները: Բայց ինչպէս տես-
նում եմ՝ մարդիկ յափրութիւնից նոյնչափ հիւանդանում են՝
որչափ սովատանչները: Ուրեմն, փոքր երջանկութիւն չէ
միջակ լինելը. փարթամութիւնը շուտ է ստանում սպիտակ
մազեր. չափաւորութիւնն աւելի երկար է ապրում:

ՊՈՐՑԻԱԼ. Լաւ սկզբունքներ, և լաւ արտասանուած:

ՆԵՐԻԱՍԱ. Սւելի լաւ կլինէին՝ եթէ լաւ հետեղ
ունենալին:

ՊՈՐՑԻԱԼ. Եթէ անելը նոյնչափ գիւրին լինէր, որչափ
գիւրին է իմանալը, թէ ինչ բան լաւ է անել՝ այն ժամա-
նակ մատուռները եկեղեցիներ կդառնալին, և տղատ
մարդկանց խրճիթները՝ իշխանական պալատներ: Լաւ քա-
րողիչը նա է, ով որ կհետեւ իր քարոզներին: Ես աւելի
գիւրութեամբ կարող էի քսան հոգի սովորեցնել, թէ ինչ
բան լաւ է անել, քան թէ լինել այդ քսանից մէկը և իմ
սեփական խրատներիս հետեւլ: Ուզեղը կարող է օրէնք-
ներ հնարել արեան համար. բայց տաք բնաւորութիւնը
ցատկում անցնում է սառն կանոնի վերալից. գժութիւնը,
երիտասարդութիւնը մի նապաստակ է, որ ժուզում է հաշ-
մանդամ բարի խրատի լարած թակարդի վրալից: Բայց այս
խորհրդածութիւնն այժմ անտեղի է, երբ պէտք է մի ամու-
սին ընտրել ինձ համար: — Վայ ինձ համար: — Վայ ինձ, այդ «ընտրել» բառը:

Յս ոչ կարող եմ ընտրել իմ ուզածիս, ոչ մերժել իմ չսիլածիս. այսպէս՝ կենդանի աղջկայ կամքը կաշկանդուած է մեռած հօր կամքով։ Միթէ դժբախտութիւն չէ այս, ներիսսա, որ ոչ սիրածիս կարող եմ ընտրել, ոչ ատածիս՝ մերժել։

ՆԵՐԻՍՍԱ. Զեր հալը միշտ աւագինի մարդ է եղած. իսկ սուրբ մարդիկ մահուան տնկողնում լաւ ներշնչումներ են ունենում. ուրեմն այն վիճակախաղը, որ նա սարքել է այս երեք արկղիներով, ոսկէ, արծաթէ և կաղարէ, (որով նա միայն ձեզ կնութեան կառնէ, ով որ նորա վճռածն ընտրէ), այն արդիւնքը կունենալ, որ անպատճառ ձեզ շահողը նա կինի, որին դուք ձեր սիրով արդէն շահուած կը լինիք։ Բայց արդեօք տածում էք դուք չերմ սէր դէպի որեիցէ մէկն այս իշխաններից, որոնք եկել են ձեր ձեռքը խնդրելու։

ՊՈՂԾԻԱ. Խնդրեմ, կրկնիր մէկ մէկ նոցա անունները. և երբ դու անուններն ասես՝ ես քեզ համար կնկարագրեմ նորանց, և ըստ իմ նկարագրութեան՝ դու կհասկանաւ իմ սէրս։

ՆԵՐԻՍՍԱ. Ամենից առաջ նապոլիտան իշխանը։

ՊՈՂԾԻԱ. Ա՛հ, նա կատարեալ քուուակ է, որովհետեւ ոչինչ անել չփիտէ՝ եթէ ոչ խօսել իր ձիու վրայ. և իր համար մի մեծ բարեմտսնութիւն է համարում, որ կարող է իր ձեռքով պայտել նրան։ Շատ եմ վախենում, որ նորայարգելի մայրը մի գարբնի հետ անհաւատարմութիւն գործած լինի։

ՆԵՐԻՍՍԱ. Յետոյ Պալատին կոմար։

ՊՈՂԾԻԱ. Նա միայն գիտէ ճակատը կնձուել. կարծես ուզում է ասել. «Եթէ ինձ չէք ուզում՝ հոգ չէ»։ Երբ որ նա լսում է ծիծաղաշարժ պատմութիւններ՝ մինչեւ անզամ չէ ժպտում։ Վախենում եմ, որ երբ ծերանայ՝ մի լաւկան փիլսոփիա (գառնալ *), քանի որ իր երիտասարդութեան

^{*)} Ալպինքն մի այլ Հերակլիոսու.

Ժոմանակն անգտմ այսքան լի է անվայել տրտմութեամբ։ Ես կզերադասէի ամուսնանալ մի մեռեալի գլխի հետ՝ մի ուկորը բերանում, քան թէ այս երկուսից մէկի հետ։ Աստուած ֆըկէ ինձ այս երկուսից։

ՆԵՐԻՍՍԱ. Ի՞նչ էք ասում ֆրանսիացի պարոնի, Մօմիէօ Լը Բօնի մասին։

ՊՈՂԾԻԱ. Աստուած է նրան ստեղծել, ուրեմն թող մարդ համարուի։ Ճշմարիտ, գիտեմ որ ծաղրելլը մեղք է, բայց նա. — նա մի ձի ունի նապոլիտանի ձիուց լաւ. ճակատը կնճռելու մոլութեան մէջ Պալատին կոմսից գերազացում է. նա ամեն մարդ է՝ առանց մի մարդ լինելու. եթէ մի տորդիկ երգէ՝ նա իսկոյն կակսի թռչկոտել. իր սեփական ստուերի հետ ուզում է մենամարտել։ Եթէ ես նորահետ ամուսնամամ քսան մարդու հետ ամուսնացած կլինիմ։ Եթէ ինձ քամահրէ՝ ես նորան կներեմ. որովհետեւ եթէ ինձ մինչեւ խելագարուելու աստիճան սիրէ՝ դարձեալ չեմ կարողանայ փոխարէնը հատուցանել։

ՆԵՐԻՍՍԱ. Ի՞նչ էք ասում Ֆալկոնբըինի, Անգլիոյ երկտասարդ բարոնի մասին։

ՊՈՂԾԻԱ. Դու գիտես, որ ես նորա հետ հազիւ թէ խօսում եմ. նա ինձ չէ համարեանում, ոչ էլ ես նըան. ոչ լատիներէն գիտէ, ոչ ֆրանսերէն, ոչ իտալերէն. իսկ ինձ գալով՝ դու կարող ես մտնել գատարան և երդուել *), որ ես մէկ գրօշի անգլիերէն չգիտեմ։ Մի շնորհքով մարդու պատկեր ունի. բայց աւազ, ով կարող է խօսակցել մի մընդկատակի հետ։ Ի՞նչ զարմանալի ձեռք է հագնուած. կարծեմ նա իր բաճկոնը իտալիայում է գնել, անգլագարտիքը՝ Փրանսիայում, գլխարկը՝ Գերմանիայում և բարք ու վարքը՝ ամեն տեղ։

ՆԵՐԻՍՍԱ. Ի՞նչ էք մտածում նորա դրացի Սկովտիական լորդի մասին։

ՊՈՂԾԻԱ. Ա՛յն, որ նա իր մէջ դրացիական ընկերսի-

^{*)} Ալպինքն մի այլ Հերակլիոսու.

բուժիւն ունի. որովհետև նա փոխ առաւ անգլիացուց մթ ապտակ, և երդուեց որ երբ կարողանայ յետ կդարձնէ. կարծեմ ֆրանսիացին էլ երաշխաւոր եղաւ և խոստացաւ կը ք կինը հատուցանել *):

ՆԵՐԻՍՍԱ. Իսկ այն երիտասարդ գերմանացին, Սաքսոնի դուքսի եղբօրորդին, նրան ինչպէս էք գտնում **):

ՊՈՐՑԻԱ. Շատ հակակրելի է առաւտաները՝ երբ նա գինովացած չէ, և աւելի հակակրելի կէսօրից յետոյ՝ երբ որ խմած է. իր ամենալաւ ժամանակը ադամորդուց մի քիչ վատ է, իսկ ամենավատ ժամանակը՝ գաղանից մի քիչ լաւ: Որքան որ էլ բանս վատ լինի՝ յոյս ունիմ մի հնարք կը գտնեմ նրանից ազատուելու:

ՆԵՐԻՍՍԱ. Եթէ նա գայ վիճակ հանելու և շահող արկղը ընտրէ՝ դուք չէք կարող չընդունել նրան, ապա թէ ոչ ձեր հօր կտակը բեկած կլինիք:

ՊՈՐՑԻԱ. Ուրեմն այդ փորձանքից ինձ ազատ պահելու համար՝ խնդրեմ մի մեծ բաժակ ձռենոսի գինի դնես ձախորդ արկղի վրայ. որովհետև եթէ այդ արկղի մէջ մի դե էլ լինի, և արկղի վրայ այդ փորձութիւնը՝ նա դարձեալ հէնց այն կընտրէ: Ներիսսա, ինչ ասես կանեմ, բայց մի սպոնդի հետ չեմ ամուսնանայ:

ՆԵՐԻՍՍԱ. Մի վախենաք, տիկին. այդ պարոններից ոչ մէկի հետ չէք պսակուի. նոքա ինձ յայտնել են իրանց որոշումը. նոքա կամենում են վերադառնալ իրանց հայրենիքը և այլ ևս ձեզ չձանձրացնել իրանց հարսնախօսութեամբ. միայն թէ կարելի լինի ձեզ մի այլ կերպով ստանալ, բացի ձեր հօր որոշած արկղերի վիճակախաղից:

*) Սա մի ծաղր է աճն իրողութեան, որ ֆրանսիացիները միշտ խոստանում էին օգնել սկովտիացիներին աճն կոխների: մէջ, որ ունէին անգլիացիների հետ և չէին օգնում:

Wantage

**) Կարծում է, որ Պորցիալի սիրահարների այս շարաւարումը մի ակնարկութիւն է Եղիսաբեթ թագուհու սիրահարներին.

Johnson.

ՊՈՐՑԻԱ. Եթէ ես ալնքան պառաւեմ, որքան Սիբիլ-լան՝ *) դարձեալ ես Դիանայի նման ողջախոհ կապրեմ և ուրիշ ձեռվ մարդու չեմ գնայ, բացի իմ հօր կտակած ձեւից: Ես ուրախ եմ, որ այս բոլոր փեսալացուները այդքան խելացի մարդիկ են. որովհետև դրանց մէջ մէկը չկայ, որի բացակայութիւնն ինձ չհիացնէ, և ես մաղթում եմ նորանց բարի ճանապարհ:

ՆԵՐԻՍՍԱ. Զեք լիշում, օրիորդ, ձեր հօր կենդանութեան ժամանակ մի Վենետիկեցի. մէ ուսեալ մարդ, որ զինուորական էր և շատ անգամ գալիս էր ալստեղ ՄոնՓէրայի ուարքիզի հետ:

ՊՈՐՑԻԱ. Այս, այս, Բասսանիօն. որչտի լիշում եմ այդպէս էր նորա անունը:

ՆԵՐԻՍՍԱ. Ճիշդ է, օրիորդ. բոլոր մարդկանց մէջ, որ երբեկցէ տեսել են լիմար աչքերս՝ ամենից աւելի նա էր արժանի մի գեղեցիկ օրիորդի փեսան լինելու:

ՊՈՐՑԻԱ. Նրան լաւ մտաբերում եմ և լիշում եմ, որ նա արժանի է այդ գովեստին: — Ի՞նչ կայ, ի՞նչ լուր...
(Մոնում է մի ծառայ):

ԾԱՌԻԱՅ. Օրիորդ, այն չորս օտարականներն ուզում են տեսնել ձեզ և մնաք բարով ասել. նոյնպէս մի սուրհանդակ է եկել մի հինգերորդից, Մարոքի իշխանից, և լուր է բերել, որ իշխանն, իր տէրը, այս գիշեր ալստեղ կլինի:

ՊՈՐՑԻԱ. Եթէ կարողանալի նոյնպէս ուրախ սրտով «բարով եկաք» ասել հինգերորդին, որպէս «երթաք բարով» կասեմ միւս չորսին՝ ես ուրախ կլինէի, որ նա գալիս է. եթէ նա սրտով սուրբ է, դէմքով սատանա՝ ես աւելի կուզէի, որ նա իմ խոստովանահայրը լինէր քան իմ խօսնալը: Եկ, Ներիսսա: — (Ծառային) Այս տղայ, եկ առջեկց գնա: — Դեռ մէկին չճանապարհած՝ միւսը դուռն է ծեծում:

(Դորս են գնում):

**) Այն մասնաւոր Սիբիլան, որ Ապոլոնից խնդրեց իրան աճնչափ տարիներ տալ՝ որչափ աւագ կար իր ձեռքի մէջ. Օվիդ պատմած է այս պատմութիւնը:

Rolfe.

Դիմայ մազյո նմանուր մուզկու ու վել ահասա
և նմանուր չույս ՏԵՍՍՐԱՆԻ Գուշացար (* մայ
-ման տարած յօւ և կուրա նաև տարած խուճ դպու
մազքու դպամ առաջանայած յաս գու և նա պայտա մի Յի ։ Յի կա բարձաւ ի կա բա բա բա բա բա առաջան գայթի պատասխանակա Մասնում և ԲԱՍՍԱՆԻ ՀԱՅԼՈՒ (՝*).

ԾԱՅԼՈԿ. Երեք հազար դուկատ, — լաւ:

ԲԱՍՍԱՆԻ Այս պարոն, երեք ամիս ժամանակով:

ԾԱՅԼՈԿ. Երեք ամիս... լաւ:

ԲԱՍՍԱՆԻ Օրի համար, ինչպէս ասացի՝ Անտոնիօն երաշխաւոր կլինի:

ԾԱՅԼՈԿ. Անտոնիօն երաշխաւոր կլինի... լաւ:

ԲԱՍՍԱՆԻ Արդեօք կամք ունիք ինձ օգնելու. այդ հաճուքը կարող էք պատճառել ինձ. կարող եմ իմանալ ձեր պատասխանը:

ԾԱՅԼՈԿ. Երեք հազար դուկատ, երեք ամսով, և Անտոնիօն երաշխաւոր:

ԲԱՍՍԱՆԻ Ի՞նչ պատասխան էք տալիս:

ԾԱՅԼՈԿ. Անտոնիօն լաւ մարդ է:

ԲԱՍՍԱՆԻ Երեկից մի վատ բան լոել էք նորա մասին:

ԾԱՅԼՈԿ. Օ՛չ, ո՛չ, ո՛չ, ո՛չ. Երբ որ ասում եմ լաւ մարդ է ուզում եմ ասել որ ունեոր է. բայց դարձեալ, նորա հարստութիւնը վտանգի ենթակայ է: Մի նաւ ունի որ գնացել է Տըխոլի, մի ուրիշը՝ որ գնացել է Հնդկատան. բայց դբանցից, ես Որիալոյում լսեցի, որ նա մի եր-

(*) Ծայլոկ ներս է մտնում դանդաղ, անկանոն քալուածքով, անհանդար շաբթուածքով, աչքերը կիսաբաց. մէկ ձեռքով գաւա զան բռնած, իսկ միւտի մատները միշտ շարժուն, կարծես սովորած լինելով խաղալ գովածների հետ. խօսում է չափական, բիրու ձանով.

ըորդ նաւ ունի Մէկսիկալում և մի չորրորդը որ Անգլիա է գնում. ուրիշ ապրանքներ էլ ունի, ամեն կողմ ցրուած: Բայց նաւերը՝ լոկ տախտակներ են. նաւաստիները՝ միայն մարդիկ. կան ցամաքի մկներ, կան և ջրի մկներ. ջրի գողեր և ցամաքի գողեր. ուզում եմ ասել լելուզակներ. և լետոյ կայ ջրերի, հողմերի, ժայռերի վտանգը: Բայց այդ բոլորով հանդերձ՝ մարդը կարողութիւն ունի... երեք հազար դուկատ (*)... կարծեմ կարող եմ ընդունել նորա երաշխաւութիւնը:

ԲԱՍՍԱՆԻ Վստահ եղէք որ կարող էք:

ԾԱՅԼՈԿ. Ես էլ եմ ուզում վստահ լինել որ կարող եմ. բայց վստահ լինելու համար պէտք է լաւ մտածեմ: Կարող եմ իսուել Անտոնիօյ հետ:

ԲԱՍՍԱՆԻ Եթէ կբարեհաճէք՝ եկէք մեզ հետ ճշելու:

ԾԱՅԼՈԿ. Հա, որ խոզի մսի հոտ առնեմ, որ ուտեծ այն բնակարտնից, որի մէջ ձեր մարդարէն, նազովրեցին, դևին ներս մտցրեց: Ես ձեզ հետ առուտուր կանեմ, ձեզ հետ կիսուեմ, ձեզ հետ ման կդամ և ալն. բայց ձեզ հետ չեմ ուտի, ձեզ հետ չեմ խմի, ոչ էլ ձեզ հետ կաղօթեմ: Ի՞նչ լուր կայ Որիալոյում. այս ո՞վ է գալիս:

(Մտնում է Անտոնիօն):

ԲԱՍՍԱՆԻ Սինիօր Անտոնիօն է:

ԾԱՅԼՈԿ. (առանձին). Ի՞նչպէս վիզագքուշ մի մաքսաւորի

Կերպարանք ունի. նըրտն ատում եմ

Որ քրիստոնեալ է, բայց առաւել ևս՝

Որ նա իր անարգ պարզամըտութեամբ

Առանց տոկոսի դրամ է փոխ տալիս,

Եւ Վենետիկի մէջ տոկոսի չափը

Ցած է իջեցնում: Թէ կարողանամ

(*) «Երեք հազար դուկատ» բառերը արտասանում է շատ ծանր, որպէս թէ զբաղուած է չահի կամ վնասի հաւաճականութիւնքը հաշուելով:

Հ ամիսն յո Մի անգամ նըրան իմ ճանկըս ձըգել՝ այս բայց
ծառայք երա կաւագուշը կըտամ իմ այն հին պիսին եւու՞
մային ցղանք Որ ունիմ նըրա դէմ: Նա մեր սուրբ ազգին՝
ոք դիջ դն Սաստիկ ատում է, և այն տեղերում,
մի և դնեն Ուր ժողովւում են վաճառականներն՝
ող բա Աս լարձակում է իմ դէմ, տուետրիս,
դարս զնու Եւ բոլոր արդար վաստակներիս դէմ,
Որ վաշխառութիւն անուանում է նա:
Թող բոլոր ցեղըս անիծեալ լինի, : Թող բոլոր
Թէ ներեմ նորան *):

ԲԱՍՍԱՆԻՕ. Շայլոկ, լսում ես:
ԾԱՅԼՈԿ. Խորհում եմ, որչափ պատրաստ գրամ ունիմ:
Եւ լիշովութեանս մօտաւոր հաշուով
Չեմ կարող իսկոյն երեք հազարը
Լըրիւ հայթայթել, բայց վընաս չըկար:
Տուբալ, ցեղակիցս, հարուստ հըրէան,
Կարող է գտնել... բայց նախ ասացէք, ու
Քանի ամիս է ձեր ցանկացածը:

(Անտոնիոյին)

Ողջոյն ձեզ, Սինիօր. Հենց այժըմ և եթ
Չեր յարգութեան վրալ խօսակցում էինք:
Շայլոկ, թէւ ես ոչ փոխ եմ տալիս,
Ոչ փոխ եմ առնում, ոչ վաշխ եմ առնում,
Ոչ վաշխ եմ տալիս՝ բայց բարեկամիս
Անլապաղելի պէտքերի համար
Ես բեկանում եմ սովորութիւնը:

(Բասսանիոյին)

Արդեօք սա գիտէ որչափ ենք ուզում:
Այս, գիտեմ ես, երեք հազար գուկատ:

*) «Թող բոլոր ցեղըս...» և ալն, պէտք է ասուի ցած ձանով:
Հրէան տեսնելով որ Անտոնիօն գալիս է՝ կոճակը զարձնում է նորա
կողմը, և ձեացնում է որպէս թէ հաշիւ էր անում, թէ որչափ պա-
տրաստ դրամ ունի.

Booth.

ԲԱՍՍԱՆԻՕ. Եւ երեք ամսով: Մոռացել էք.
ԾԱՅԼՈԿ. Հա, երեք ամսով. ալդպէս ասացիք:
Լաւ. ձեր մուրհակը. Հա, թողէք տեսնեմ:
Ականջ դըրէք ինձ. կարծեմ ասացիք,
Որ գուք տոկոսով ոչ փող էք առնում,
Ոչ փող էք տալիս:
ԱՆՑՈՒԻՕ. Այս, ալդպէս է:
ԾԱՅԼՈԿ. Երբ որ Յակոբը Լաբան հօրեղբօր
Հօտերը տանում արածացնում էր՝
Յակոբ, (շընորհիւ իր խելացի մօր
Գործ դըրած հնարքին) հայր Աբրահամի
Երլորդ ժառանգն էր, այս, երրորդը...
ԱՆՑՈՒԻՕ. Բայց մեր գործի հետ նա բնչ կապ ունի.
Նա վաշխ էր առնում:
ԾԱՅԼՈԿ. Ոչ, վաշխ չէր առնում,
Ոչ ճիշդ ալն, ինչ որ վաշխ էք անուանում.
Տեսէք թէ Յակոբ ինչպէս էր անում:
Յակոբ և Լաբան պալման կապեցին,
Որ բոլոր պիսակ խատուտ գառնուկներն
Լինին Յակոբի բաժինն ու վարձը:
Երբ մաքիները աշնան վերջերին
Ըսկըսան ընկնել խոյերի ետև,
Եւ մինչ ասրտմորթ ծընողների մէջ
Զարմային գործը գըլուխ էր գալիս՝
ծարպիկ հովիւը ճիւղեր կեղեւեց,
Եւ ճիշդ սեռական գործի ժամանակ՝
Գըցեց հեշտամոլ մտքիների դէմ,
Որոնք լուցան և ձագ բերելիս՝
Ծընան խատուտիկ գոյնըզգոյն գառներ,
Եւ դոքա եղան Յակոբի բաժին:
Դա հարցատութիւն պարգևեց նորան,
Եւ Յակոբ օրհնուեց. և օրհնութիւն է

Հարըստութիւնը՝ երբ գողացուած չէ:
Անջոնիօ. Յակոբի շահը մի բախտի խաղ էր.
Փա կտիսում չունէր Յակոբի կտմքից,
Այլ տընօրինուած և գողացուած էր
Երկնային ձեռքով. միթէ գա վաստ է,
Թէ վաշխառութիւնն արդար վաստակ է.
Միթէ ձեր ոսկին և ձեր արծաթը
Մաքի կամ խոյ են:

ԾԱՅԼՈԿ. Զեմ կարող ասել.
Բայց իմ ոսկուս էլ նորնչափ շատ ձագեր
Բերել եմ տալիս. բայց լըսեցէք ինձ,
Սինիօր Անտոնիօ:

ԱՆՑՈՒԻՕ. Տեսէք, Բասսանիօ,
Սատանան անգամ իր շահի համար
Գիտէ ոուրբ Գըրքից օրինակ բերել:
Զարամիտ հոգին, երբ որ բերում է
Սուրբ վըկայութիւն՝ նըման է ժըպտող
Մի չարագործի, —սիրուն խընձորի,
Որ ներաից վըտած ասպականուած է:
Օ՛հ, ի՞նչ գեղեցիկ արտաքին ունի
Խարդախութիւնը:

ԾԵՅԼՈԿ. Երեք հագար դուկատ.
Կըլոր գումար է, և երեք ամսով.
Լաւ, հիմայ տեսնենք տոկոսն ի՞նչքան է:
ԱՆՑՈՒԻՕ. Շալոկ, կամք ունիք մեզ ալդ շնորհն անել:

ԾԱՅԼՈԿ. Սինիօր Անտոնիօ, շատ և շատ անգամ
Ոիտլ'տօյի մէջ ինձ հայհոյել էք
Իմ գըրամների և վաշխի համար:
Ես միշտ տարել եմ, և համբերութեամբ
Ուսերըս ցընցել. համբերութիւնը
Մեր բոլոր տոհմի յատկանիշըն է:
Գուք ինձ կանչում էք «անհաւատ», «գող», «շուն».
Թըքում հրէական վերաբկուխ վըալ.

Եւ ալդ բոլորը լոկ այն պատճառով,
Որ գործածում եմ այն՝ ինչ որ իմս է:
Լաւ, երկում է որ իմ օգնութեան
Կարօտ էք դուք ալժմ. իսկոյն ելնում էք,
Գիտիս էք ինձ մօտ և ինձ տսում էք.
— Այսա՛նալոկ, մեզ համար փող է հարկաւոր»:
Այլդ դուք էք ասում, դուք, որ ձեր ժուքը
Մօրուքիս վերալ ըսպառում էք.
Դուք որ քացիով ինձ օտար շան պէս
Զեր գըրան շեմքից վըռընդում էք.
Այժմ վող էք ուզում. լաւ, ձեզ ի՞նչ ասեմ.
Արդեօք չասեմ ձեզ, «շունը փող ունի»:
Կարելի՞ բան է, որ մի քոսոտ շուն
Ենթէք հազար դուկատ պարտք տալ ուրիշն.
Կամ թէ պէտք է ես, խոր գըլուխ տալով
Ան Սուրուկի նըման, և շունչըս բըռնած,
Խոնտրհութեամբ լի մըրմունջով ասեմ.
«Յարգելի՞ պարոն, չորեքշաբթի օր
«Թըքեցիք իմ վըալ, և կամ այս ինչ օր
«Ա.քացի տըւիք, և մի այլ անգամ
«Ինձ «շուն» կոչեցիք. և ի փոխարէն
«Քաղաքավարի ալս վարմունքների՝
«Այս ինչ չափ դըրամ ձեզ փոխ եմ տալիս»:
ԱՆՑՈՒԻՕ. Հէնց ալժմ էլ գուցէ քեզ նոյնպէս կոչեմ,
Թըքեմ քո վերալ, քացիով զարկեմ:
Եթէ կամք ունիս ալդ դրամը փոխ տալ՝
Փոխ մի տար որպէս մի բարեկամի.
(Բարեկամութիւնն ի՞նչպէս կարող է
Իր բարեկամից ամուլ մետաղի
Զարմեր պահանջել). այլ փոխ տուր դըրամդ
Որպէս թըքնամուգ, որ կարողանաս,
Եթէ նա օրին ըլհատուցանէ՝
Համարձակ դէմքով տուգանք պահանջել:

ԾԱՅԼՈՒ. Վահ, ինչու ալդպէս սաստիկ բարկացաք:
Ուզում եմ ձեզ հետ բարեկամ լինել,
Ձեր սիրտը շահել, մոռացութեան տալ
Այն անարգանքը, որ ինձ արել էք.
Հայթալթել այժմեան ձեր կարեքները,
Եւ մի գրոշ տոկոս չառնել ձեզանից.—
Եւ դուք մինչև իսկ չէք ուզում լրսել:
Վահ, ես հօ ձեզ հետ շատ լաւ եմ վարւում:
ԲԱՍՍԱՆԻՈ. Խսկապէս շատ լաւ:
ԾԱՅԼՈՒ. Ես ձեզ ցոյց կըտամ իմ բարութիւնը.
Եկէք, միտսին գնանք նոտարի մօտ.
Այնտեղ կընքեցէք ձեր մի մուրհակը.
Եւ, իբրև կատակ, նըշանակեցէք,
Որ եթէ դուք ինձ չըհատուցանէք
Այս ինչ օր, այս ինչ տեղ, այն ինչ գումարը
Կամ գումարները, որոնք գըլուած են
Պարտամուրհակում՝ դուք իբրև տուգանք
Ինձ կըվրճարէք ձեր ճերմակ մըսից
Լիովին մի ֆունտ, որ ես կըկրտրեմ
Կառնեմ ձեր մարմնի որև է մասից
Որ ինձ հաճոյ է:
ԱՆՑՈՒԻՈ. (Քասսանիոյին) Լաւ, համաձայն եմ.
Ես կըստորագրեմ ալդպիսի մուրհակ
Եւ կասեմ, հրէան շատ բարեսիրտ է:
ԲԱՍՍԱՆԻՈ. Ո՞չ, դուք ինձ համար չըպէտք է կընքէք
Ալդպիսի մուրհակ. տւելի լաւ է
Որ կարօտ մընամ:

Վահ, միամիտ կաց.
Ես ժամանակին կըհատուցանեմ:
Մինչ երկու ամիս, ալսինքն մի ամիս
Պարտամուրհակի պալմանից առաջ՝
Ես ըսպասում եմ ալդքան գումարի
Եռապատիկի եռապատիկը:

ԾԱՅԼՈՒ. Ո՞վ հայր Աբրահամ. ի՞նչ տեսակ մարդ են
Քրիստոնեաները. երբ իրանք չար են՝
Ուրիշների վրայ կասկած են տանում:
Ասացէք խընդրեմ, եթէ նա օրին
Չըհատուցանէ՝ ես ի՞նչ կըշահեմ
Եթէ պահանջեմ ալդպիսի տուգանք:
Մի ֆունտ մարդու միս, մի մարդուց կտրած,
Ոչ այնքան լաւ է, ոչ էլ պիտանի՝
Որքան ոչխարի, կովի, ալծի միս:
Ես նորա սիրտը շահելու համար՝
Ուզում եմ անել այս լաւութիւնը:
Եթէ կուգէ՝ լաւ. թէ ոչ՝ մնաք բարով.
Եւ գէթ, ի սէր իմ, ինձ մի նեղացնէք:
ԱՆՑՈՒԻՈ. Ես կըստորագրեմ մուրհակը, Շայլոկ:
ԾԱՅԼՈՒ. Գընացէք ուրեմն նոտարիուսի մօտ:
Ինձ ըսպասեցէք. նորան գրել տըւէք
Այդ զուարճալի պարտամուրհակը.
Իսկ ես կըգնամ և դուկատները
Կըբերեմ իսկոյն. տանս էլ կընալիմ,
Որ ես թողել եմ մի փուչ ծառալի
Շատ երկիւզալի պահպանութեան տակ,
Եւ անմիջապէս կըլինիմ ձեզ մօտ:
ԱՆՑՈՒԻՈ. Դէհ, աճապարիը, սիրելի հրէայ:
Շատ կարելի է այս եբրայեցին
Քրիստոնեայ դառնայ. լաւ մարդ է դառնում:
ԲԱՍՍԱՆԻՈ. Ինձ հաճելի չեն քաղցրախօս բառեր՝
Մի չար հոգու հետ:

ԱՆՑՈՒԻՈ. Եկ, երկիւղ ըլկայ:
Պտղմանաժամից մի ամիս առաջ
Իմ նաւերս այստեղ հասած կըլինին:
(Դուրս են գնում):

Ասեմ, օրիմրդ, իմ կերպարանքը
սոգով Շատ քաջ մարդերի սարսափի է ազգել.
Իյան ծեւ երդւում եմ ես իմ սիրոյա վերայ՝

Չն Մեր կլիմաների ամենից յարգի

Օրիորդները սիրել են սըրան:

Չէլ յօժարի այս գոյնըս փոխել

Բայց միայն որ ես գրաւել կարենամ

Ճի Զեր սըրտի սէրը, քաղցրիկ թագուհիս:

ԴՈՐՅԻԱ. Իմ ընտրութեան մէջ առաջնորդ չեն ինձ

Լոկ խըստավահանջ կուսական աչքեր.

Բացի գորանից բախտիս վիճակը

Խըլած է ինձնից ազատ ընտրութեան

Իրաւունքները, բայց եթէ հալըս

Ինձ չէր սահմանել իր իմաստութեամբ

Լինել կին նորա, ով որ ինձ շահէ

Այն կերպով միայն որ ձեզ ասացի՝

Այն ժամանակ զուք, մեծանուն իշխան,

Նոյնչափ իրաւունք պիտ' ունենալիք

Իմ սիրայ որչափ բոլոր նրանք՝

Որոնք մինչև այժմ եկել են այստեղ:

ՄԱՐՈԿԻ ԻՇԽԱՆ. Դորա համար կսկ շընոբհակալ եմ:

Ուրեմն խնդրեմ տռաջնորդէք ինձ

Այդ արկղերի մօտ, որ բախտը փորձեմ:

Այս սուրբս վըկայ, (որ խողխողել է

Սոփիին և մի պարսիկ իշխանի,

Տարել է սուլթան Սուլեյմանի գէմ

Երեք լաղթութիւն), որ ես պատրաստ եմ

Ամենագաժան հայեացքի ընդդէմ

Խըստալ հայեացքով. ամբողջ աշխարհի

Ամենախիզախ սիրաը սոսկացնել.

Խըլել էզ արջից ծըծկեր ձագերը,

Եւ մինչև անգամ ծաղըել առիւծին՝

Երբ մըունչում է զոհի ետևից,

ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ Ա.

Բելմինտ. մի սենեակ Պողցիայի տան մէջ:

Փողեր. մտնում են ՄԱՐՈԿԻ ԽՇԽԱՆԸ հետեւորդներով, ՊՈՐՑԻԱ,
ՆԵՐԻՍՍԱ և ՍՊԱՍՈՒՀԻՆԵՐԻ

ՄԱՐՈԿԻ ԻՇԽԱՆ. Մի խորշէք ինձնից գոյնիս պատճառով,
Որ մուժ ըզգեստ է փայլուն արևի,
Որի գըրացին և ազգականն եմ:
Բերէք ամենից ըսպիտակ մարդուն,
Հիւսիսում ծընուած, ուր գժուարութեամբ
Փերոսի հուրը հալեցընում է
Սառցակոլտերը, և ժող, ի սէր ձեր,
Կըտրենք մեր մորթը և ապացուցենք,
Որիս արիւնն է աւելի կտրմիր,
Ի՞մը թէ նորա *):

*) Այս հատուածը հասկանալու համար պէտք է վիշել, որ կար-
միր արիւնը քաջասրտութեան մի աւանդական նշան է: Այս պատ-
ճառով Մակրեթ իր սարսափած զինուորներից մէկին անուանում է
«շուշանալեարդ տղալ»: Դարձեալ «Մակրեթի» մէջ երկչուներին վե-
րագրուած է «կաթի պէս սպիտակ լեարդ»:

Johnson.

Քեզ, ով օրիորդ, շահելու համար։
Բայց աւաղ. երբ որ Ներկուլ և Լիւքաս
Վիճակ են ձըգում, թէ ով է մեծ մարդ՝
Կարող է լինել որ բախտի բերմամբ
Թոյլ ձեռքը ձըգէ մեծագոյն թիւը.
Նոյնպէս Ալկիդէս կարող է յաղթուել
Իր մանկաւիկից. և նոյնպէս ես էլ,
Երբ որ կոյը բախտը առաջնորդէ ինձ՝
Գուցէ կորցնեմ այն՝ ինչ որ կարող է
Ինձնից անարժան մի մարդ ձեռք բերել,
Եւ վըշտից մեռնեմ։

ՊՈՐՅԻԱ. Զեզ հարկաւոր է ձեր բախտն ընդունել.
Կամ ամենեկին վիճակ չըփորձել,
Կամ երդում անել ընտրելուց առաջ,
Որ եթէ սըխալ ընտրութիւն անէք՝
Ապա այնուհետ ոչ մի տիկնոջ հետ
Ամուսնութեան վրայ չըխօսէք ալլես։
Ուրեմն խորհեցէք։

ՄԱՐՈԿԻ ԻՇԽՆԱՆ. Լաւ, ընդունում եմ.
Եկէք, տարէք ինձ դէպ իմ վիճակը։

ՊՈՐՅԻԱ. Առաջ ուղղակի գընացէք տաճար.
Իսկ ճաշից լետոյ վիճակ կըհանէք։

ՄԱՐՈԿԻ ԻՇԽՆԱՆ. Ե'կ, ուրեմն, ով բախտ. դու ինձ կըդար-
ձնես
Ամբողջ մարդկութեան երջանկագոյնը,
Եւ կամ ամենից անբախտ էակը։

(Դուրս ին գնում. փողեր)

Տա ըմբ մուշը այսպազան ու մասանու ցամաց
Տիյծոսի իոց ՏԵՍԱՐԱԿԱՆ միաւն
Դա համար ու ամառն ամառն ին սպասնարի
Վենետիկի կ. Մի փողոց.
Մասում է ԱՆՍԸԸԼՈ ԳՈԲԲՈ.

ՀԱՆՍԸԸԼՈ. Ճար չկայ. պէտք է խղճմտանքս ինձ թոյլ
տայ փախչել այս հրէալ տիրոջս մօտից։ Սատանան արմու-
կիս տակն է և ինձ փորձութեան է ենթարկում, ասելով.
«Գոբբօ, Լանսըլօ Գոբբօ, բարի Լանսըլօ, կամ բարի Գոբբօ,
կամ բարի Լանսըլօ Գոբբօ, ոտքերդ գործի դիր. մէկ ոս-
տիւն գործիր և փախիր»։ Խսկ խղճմտանքս ասում է. «Ո՛չ.
զգոյշ կաց, պարկեշտ Լանսըլօ. զգոյշ կաց, պարկեշտ Գոբբօ,
կամ (ինչպէս ասացի)՝ պարկեշտ Լանսըլօ Գոբբօ, մի փախ-
չիր. հեռու կաց այդ մտքից»։ Լաւ, յետոյ քաջասիրտ սա-
տանան ինձ հրամայում է կապոցս կապել. «Հայդէ, ասում է
սատանան, փախիր, ասում է սատանան. երկինք վկայ, ա-
սում է սատանան, քաջութեամբ մի որոշում տուր, ասում է
սատանան, և փախիր»։ Միւս կողմից, խղճմտանքս սրտիս
վզից կախ ընկնելով՝ շատ խոհեմարար ինձ ասում է. «Իմ
պարկեշտ բարեկամ Լանսըլօ. դու մի պարկեշտ մարդու զա-
ւակ, կամ աւելի ճիշտն ասած՝ մի պարկեշտ կնոջ զաւակը լի-
նելով... որովհետեւ, ճիշտն ասած, իմ հայրս այնքան էլ բարի
պտուղ չէր, մի քիչ այրուածի համ ունէր... լաւ, խղճմտանքս
ասում է, Լանսըլօ, մի շարժուիր։ Սատանան ասում է, «փա-
խիր»։ խղճմտանքս ասում է, «մի փախչիր»։ Ես էլ ասում եմ,
խղճմտանք, քո խորհուրդդ լաւ է. յետոյ ասում եմ, սատա-
նայ, քո խորհուրդդ վատ է. եթէ խղճմտանքիս հնազանդիմ՝
պէտք է մնամ իմ հրէալ տիրոջս մօտ, որը (հեռու ձեզանից)
ինքն էլ մի տեսակ սատանալ է. խսկ հրէալի տնից փախչել
նշանակում է հնազանդել սատանալին, որը (ներողութիւն)

հէնց ինքը սատանան է։ Անտարակոյս, հրէան հէնց սատանաի մարմնացումն է։ և, խղճմտանքով խօսելով՝ իմ խղճմտանքս մի տեսակ պինդ խղճմտանք է, որ ինձ խորհուրդ է տալիս մնալ հրէայի մօտ։ Սատանան աւելի բարեկամական խորհուրդ է տալիս։ Ես կփախչեմ, սատանակառաքերս քո հրամանի տակ են. ես կփախչեմ...

(Մտնում է ծերունի Գորքոն մի գամբիւղով):

ԳՈՐԾՈ. Ա. պարոն, երիտասարդ, հէ. ինդրեմ ասացէք, ո՞րն է պարոն հրէայի տան ճանապարհը։

ՀԱՆՍԼՂՈ (առանձին). Տէր Աստուած, սա իմ հարազատ հայրս է. նա կարճատես լինելով, —ինչ եմ ասում, —ուղղակի կոյր լինելով՝ ինձ չէ ճանաչում։ Հիմալ նորա հետ տես ինչ կատակներ եմ անելու։

ԳՈՐԾՈ. Պարոն, երիտասարդ պարոն, ինդրեմ ասէք, ո՞րն է պարոն հրէայի տան ճանապարհը։

ՀԱՆՍԼՂՈ. Ուղղակի գնացէք, յետոյ առաջին անկիւնին որ հասնէք՝ գէպի աշ թեքուցէք. և յետոյ որ կըկին մի անկիւնի հասնէք՝ գէպի ձախ. իսկ յետոյ միւս անկիւնին հասնելիս՝ ոչ մի կողմ մի գառնաք, այլ անուղղակի կերպով գարձէք գէպի հրէայի տունը։

ԳՈՐԾՈ. Ի սէր Աստուծոյ, շատ դժուար կլինի ալդ ճանապարհը գտնել. կարող էք ասել ինձ, որ այն Լանսը-լոն որ նորա մօտն է լինում, նորա մօտն է թէ ոչ։

ՀԱՆՍԼՂՈ. Այս երիտասարդ պարոն Լանսըլօյնն էք ասում։ (Առանձին) — Հիմալ ինձ նախցէք, ջրերը խառնելու եմ։ — Երիտասարդ պարոն Լանսըլօյնն էք ասում։

ԳՈՐԾՈ. Նա պարոն չէ, պարոն. այլ մի խեղճ մարդու որդի է. նորա հալը (թէւ ես չալէտք է ասեմ) մի պարկեցտ և չափազանց չքաւոր մարդ է. բայց, փառք Աստուծոյ, երկար կեանք ունի ապլելու։

ՀԱՆՍԼՂՈ. Լաւ, նորա հալը ինչ կուզէ թող լինի. մենք խօսում ենք երիտասարդ պարոն Լանսըլօյի վերալ։

ԳՈՐԾՈ. Այն, ձերդ յարգութեան բարեկամի, Լանսըլօյի վերալ, պարոն։

ՀԱՆՍԼՂՈ. Բայց խնդրում եմ ձեզ, ergo *), ծերուկ, ergo, աղաջում եմ ձեզ, ասացէք, արդեօք երիտասարդ պարոն Լանսըլօյի մասին էք խօսում։

ԳՈՐԾՈ. Այն, Լանսըլօյի վերալ, եթէ տհաճելի չէ ձերդ յարգութեան։

ՀԱՆՍԼՂՈ. Ergo, պարոն Լանսըլօյ, մի խօսէք այսուհետեւ պարոն Լանսըլօյի մասին, հայր. որովհետեւ այդ երիտասարդ պարոնը (Չնորհիւ բախտի և ճակատագրի և այդ տեսակ տարօրինակ անունների, Չնորհիւ երեք Քոյրերի և գիտութեան այս ինչ և այն ինչ ճիւղերի), իսկապէս վախճանուել է, կամ աւելի պարզ խօսելով գնացել է երկինք։

ԳՈՐԾՈ. Վահ, Աստուած ոչ անէ. այդ տղան իմ ծերութեանս գաւազանը, իմ միակ նեցուկն էր։

ՀԱՆՍԼՂՈ. Արդեօք ես մի փայտի, գերանի, գաւազանի կամ նեցուկի նման եմ։ — Ինձ չես ճանաչում հայր։

ԳՈՐԾՈ. Վահ իմ կաշուս, ես ձեզ չեմ ճանաչում, երիտասարդ պարոն. բայց ասացէք ինդրեմ, արդեօք իմ որդիս (Աստուած հոգին լուսաւորէ) կենդանի է թէ մեռած։

ՀԱՆՍԼՂՈ. Ինձ չես ճանաչում, հայր։

ԳՈՐԾՈ. Աւաղ, պարոն. ես կէս կոյր եմ. ձեզ չեմ ճանաչում։

ՀԱՆՍԼՂՈ. Բահ, ճշմարիտ, եթէ աչքեր էլ ունենայիր՝ էլի դու ինձ ճանաչել չէիր կարող. շատ իմաստուն է այն հայրը, որ կարողանում է ճանաչել իր զաւակին։ Լաւ, ծերունի, ես քեզ որդուդ մասին տեղեկութիւններ կտամ. օրհնիր ինձ. ճշմարտութիւնը յայտնի կլինի. սպանութիւնը երկար ժամանակ ծածուկ չի մնայ. մի մարդու տղան ծածուկ կարող է մնալ, բայց վերջ ի վերջոյ ճշմարտութիւնը երեւան կգալ։

*.) Ուրեմն։

ԳՈԲԲՕ. Խնդրեմ, պարոն, վեր կացէք. Ես վստահ եմ,
որ դուք իմ որդի Լանսըլօն չեք:

ՀԱՆՍՈՂԸՆ. Խնդրեմ, վերջ տանք այս կատակին. տուր
ինձ քո օրհնութիւնը. Ես նոյն Լանսըլօն եմ, որ ձեր տղան
էր և ձեր որդին է, և ձեր զաւակը պէտք է լինի:

ԳՈԲԲՕ. Ես չեմ կարող մտածել, որ դուք իմ որդին էք:

ՀԱՆՍՈՂԸՆ. Իսկ ես չգիտեմ, թէ ինչ պէտք է մտա-
ծեմ, այնքան միայն գիտեմ, որ ես Լանսըլօն եմ, Հրէալի
ծառան, և վստահ եմ, որ Մարգարիտը, ձեր կինը, իմ
մարու է:

ԳՈԲԲՕ. Ճիշտ է, նորա անունը Մարգարիտ է. Ես կա-
րող եմ երգուել, որ եթէ դու Լանսըլօն ես՝ ուրեմն իմ
սեփական միսս և արիւնս ես: Աստուած իմ, այս ինչ մեծ
մօրուք ունիս. կզակիդ վերայ աւելի մազ ունիս՝ քան թէ
Դոբրինը, իմ սալիս ձին, իր պոչի մէջ *):

ՀԱՆՍՈՂԸՆ. Ուրեմն երևի Դոբրինի պոչը ներսի կող-
մից է դուրս գալիս. Ես վստահ եմ որ վերջին անգամ որ
նրան տեսալ նա աւելի մազ ունէր իր պոչի մէջ՝ քան թէ
ես երեսիս վերայ:

ԳՈԲԲՕ. Տէր Աստուած, որքան փոխուել ես: Ի՞նչպէս
ես տիրոջդ հետ. Ես նորա համար մի լաւ ընծայ եմ բերել:
Հիմայ ի՞նչպէս էք միմեանց հետ:

ՀԱՆՍՈՂԸՆ. Լաւ, լաւ. բայց գալով ինձ՝ քանի որ ես
վճռել եմ փախչել ալստեղից՝ ես չեմ հանգստանայ մինչեւ
որ բաւական ճանապարհ կտրած չլինիմ: Իմ տէրս մի կա-
տարեալ Հրէալ է: Նորան ընծայ տաս. մի չուան տուր, որ
դնայ կախուի. նորա ծառայութեան մէջ ես սովից մեռնում

*) Թատրոնական աւանդութիւն է եղած, գուցէ հէնց Շէկսպիրի
ժամանակից, որ այս կէտին Լանսըլօ ծունկ է չոքում, կոնակը ղար-
ձրած դէպի իր կոլը հայրը. սա, շօշափելով նորա երկար մազերը
որոնք ետեից կախ էին լընկած՝ կարծում է թէ նորա մօրուքն է,
այս ինչ ամենեին մազ չկայ որդու կզակի վերայ:

Եմ. մատով կարող ես կողքիս ոսկորները հաշուել: Հայրիկ,
ուրախ եմ, որ դու եկար. այդ բերած ընծադ լաւ կանես՝
տանես տաս մի ինչ-որ պարօն Բասսանիօլի. ահա քեզ մարդ,
ես իմ հոգիս. նա սքանչելի նոր համազգեստներ է տալիս
իր ծառաներին: Եթէ նորա ծառայութեան մէջ չմտնեմ՝ ես
կփախչեմ այնքան հեռու, որ տարածում է Աստուծոյ գե-
տինը: — Օ՛հ, ինչ բարեբախտութիւն. ահա նա ինքն է. ես
հրէալ գառնամ, եթէ այսուհետ հրէալի մօտ ծառայութիւն
անեմ:

(Մտնում են Բասսանիօ, Լէօնարդո եւ այլ ծառաներ):

ԲԱՍՍԱՆԻՕ. (Սի ծառայի) Կարող էք ալդպէս անել, բայց
շտապեցէք, այնպէս որ ընթրիքը ամենաուշը ժամը հինգին
պատրաստ լինի: Այս նամակներն ուղարկել տուր ուր
պէտք է. համազգեստներ տուր պատրաստեն և Գրացիա-
նուից խնդրիր, որ իսկոյն և եթ գայ իմ մօտ:

(Ծառան դուրս է գնում):

ՀԱՆՍՈՂԸՆ. Մօտեցիր, հալրիկ:

ԳՈԲԲՕ. Աստուած օրհնէ ձերդ յարգութիւնը:

ԲԱՍՍԱՆԻՕ. Նատ շնորհակալ եմ. բան ունիս ինդրելու:

ԳՈԲԲӨ. Սա իմ որդիս է, պարօն. մի խեղճ տղայ է...

ՀԱՆՍՈՂԸՆ. Ո՛չ, պարօն. խեղճ տղայ չէ, այլ այն հա-
րուստ հրէալի ծառան է և կամք ունի, պարօն, ինչպէս
հալրս ձեզ կմակաբերէ... *):

ԳՈԲԲӨ. Պարօն, սա, ինչպէս ասում են՝ մեծ ախտ
ունի ծառայելու...

ՀԱՆՍՈՂԸՆ. Ճիշտ է, խօսքի սկիզբը և վախճանն այն է,
որ ես ծառայում եմ հրէալի մօտ և փափաք ունիմ, ինչպէս
հալրս ձեզ կմակաբերէ...

ԳՈԲԲӨ. Սա և իր տէրը (համարձակութիւն չլինի ա-
սել) տինպէս են՝ ինչպէս շուն և կատու:

ՀԱՆՍՈՂԸՆ. Կարձն ասեմ, բուն ճշմարտութիւնն այս է,

*) Հալր և որդի աշխատում են որպէս թէ բարձր ոճով խօսէլ
և տեղի անտեղի ամեն բառ գործածում են:

որ հրէան ինձ հետ վատ վարուած լինելով՝ ինձ պարտաւորեցնում է, ինչպէս իմ հայրս, իբրև ծեր մարդ, ձերդ մեծապատութեան կհատուցանէ...¹⁾:

ՔՈԲՅՕ. Ես մէկ լաւ աղունիկի կերակուր եմ բերել, որ ուզում եմ շնորհել ձերդ մեծապատութեան, և իմ խընդիրքս այն է...

ՀԱՆՎԼՅՕ. Մէկ խօսքով, սորա աղաճանքը ինձ համար շատ յամառութիւն ²⁾ ունի, ինչպէս ձերդ մեծապատուութիւնը կարող է տեղեկանալ այս պարկեշտ ծեր մարդուց, որը, թէե ինձ չի ընկնի ասել՝ թէեւ ծեր մարդ է, բայց խեղճ մարդ է և իմ հայրս է:

ԲԱՍՍԱՆԻՕ. Թող ձեզնից մէկը խօսի երկուսի տեղ. — ինչ էք կամենում:

ՀԱՆՎԼՅՕ. Ձեր մօտ ծառալել, պարո՞ն:

ԳՈԲՅՕ. Ալն, պարոն, հէնց ալդ է մեր աղաճանքի տապանտկը ³⁾:

ԲԱՍՍԱՆԻՕ. ճանաչում եմ քեզ և ընդունում եմ
Արած խընդիրքը. Շայլոկ, քո տէրը,
Հէնց ալսօր ինձ հետ խօսեց քո մասին.
Նա էլ է յօժար որ առաջանաս,
Թէ առաջանալ կարող ես հաշուել
Հարուստ հրէալի ծառալութիւնից
Դուրս գալ և լինել ըսպասաւորը
Ինձ նըման աղքատ աղնըւտականի:

ՀԱՆՎԼՅՕ. Հին առածը շատ լաւ կիսուած է իմ տէր Շայլոկի և ձեր միջև, պարո՞ն: Դուք ունիք Աստուծոյ ողորմութիւնը, իսկ նա ունի բաւական ⁴⁾:

¹⁾ Ուզում է ասել «կծանուցանէ»:

²⁾ Յարմարութիւն:

³⁾ Նպատակը:

⁴⁾ Արքն բաւական դրամ—հարստութիւն, Առածը ալսպէս է.

«The grace of God is enough». Աստուծոյ ողորմութիւնը բաւական է:

Թ. Փ.

ԲԱՍՍԱՆԻՕ. Շատ լաւ ասացիր: — Գնա հալո, որդուդ հետ:
— Քո հին տիրոջից արձակուրդ խընդրիր
Եւ յետոյ հարցրու իմ ընակարանը:

(Եր ծառաներին)
Տըւէք այս մարդուն մի ձեռք համազգեստ,
Աւելի պըճնած՝ քան ինչ որ ունին
Իր ընկերները. հալդէ, շուտ տըւէք:

ՀԱՆՎԼՅՕ. Զայրիկ, տեսար. դու էիր ասում, որ ես չեմ կարող պաշտօն գտնել. Հիմայ կարող եմ թէ ոչ. դու էիր ասում, թէ բերնիս մէջ լեզու չկայ: — Լաւ, (նայելով իր ձեռքի տփին) կայ արդեօք մի մարդ Իտալիայում, որ ինձնից աւելի գեղեցիկ սեղան *⁵⁾ ունենայ. Ես կարող եմ երդուել սուրբ Գրքի վերալ, որ պէտք է լաւ բախտ ունենամ. ահա քեզ մի պարզ կետնքի գիծ. ահա քեզ կնիկների մի փոքրիկ աննշան խումբ *⁶⁾: Աւաղ, տասն և հինգ կին մեծ բան չէ. տասն և մէկ ալրի և ինն աղջիկ, հազիւ բախտական է մարդուս ախորժակը բանալու համար. և յետոյ՝ երեք անգամ ջրի մէջ խեղդուելուց ազատուել և կեանքս վտանգի ենթարկել մի փետուրէ անկողնի *⁷⁾: ափին՝ դոքա փոքրիկ վտանգներ են, որոնցից հեշտ է ազատուել: Լաւ, իթէ բախտը մի կի՞ է՝ այդ հաշուով մի բարի աղջիկ է:

*⁵⁾ Անդան, ձեռնահմարութեան մի բառ. է. սեղանի գիծ, կամ բախտի գիծ ան գլծն է, որ ձգում է ցուցամատից և անցնում է միւս երեք մասերի տակով. բնական գիծ ան գլծն է, որ ձեռքի ափի մէջ տեղից ծուռում է դէպի միւս կողմ. կեան քիցիծն ան կլոր գիծն է, որ պտտում է բոլթի բլրակի շորջը: Առաջին երկու գծերի մէջ տեղ զտնուած միջոցը կոչում է սեղան,

Staunton.

*⁶⁾ Վեներակի բլրակից (բոլթի գնդակը) դէպի կեան քիցիծը ձգուող փոքրիկ գծերը նշանակում են՝ թուով նոխչակի կանաք: (Ալսինքն որչափ մի մարդ ազդ գծերից ունի իր ձեռքի վրան՝ այն քան անգամ կամուսնանայ):

Staliwell.

*⁷⁾ Փետուրէ անկողին նշանակում է ամուսնութիւն:

Warburton.

Եկ, հալըիկ. Ես մէկ ակնթարթում հրէային մնաս բարով
կասեմ:

(Լանսոլո իւ ծերունի Գործո դուրս ևն զնում):

ԲԱՍՍԱՆԻՕ. Աղաչում եմ քեզ, բարի Լէօնարդօ,
Խորհիր այս մասին: Երբ այս բաները
Առնես և կարգով դընես իրանց տեղ՝
Խոկոյն յետ դարձիր. այս երեկոյեան
Ամենից յարգի իմ ծանօթներիս
Խընջոյք եմ տալու. ըշտապիր, գընա:

ԼԷՕՆԱՐԴՈ. Բոլոր եռանդըս ես գործ կրդընեմ:
(Մտնում է Գրացիանօ).

ԳՐԱՑԻԱՆՈ. Ո՞ւր է քո տէլըգ:

ԼԷՕՆԱՐԴՈ. Ախտել է, պարոն,
Նա ման է գալիս:

(Լէօնարդո դուրս է զնում):

ԳՐԱՑԻԱՆՈ. Սինիօր Բասսանիօ:

ԲԱՍՍԱՆԻՕ. Գրացիանօ:

ԳՐԱՑԻԱՆՈ. Զեզնից մի խընդիր ունիմ:

ԲԱՍՍԱՆԻՕ. Ես կատարեցի.

ԳՐԱՑԻԱՆՈ. Չըպէտք է մերժէք.

Պէտք է անպատճառ ձեզ հետ Բել'մոնտ գամ:

ԲԱՍՍԱՆԻՕ. Շատ լաւ, եկ. սակայն, լսիր, Գրացիանօ,
Դու շատ խիստ, բիրտ ես և ազմուկ սարքող.

Գոքա այնպիսի յատկութիւններ են,

Որոնք բաւական յարմարում են քեզ,

Եւ մեր աչքերին արտա չեն թըւում.

Բայց այն մարդկանց մօտ, որոնց ծանօթ չես՝

Գոքա չափազանց ազատ կերևան:

Խընդըռում եմ ուրեմն, նեղութիւն քաշիր

Եւ համեստութեան սառն կաթիլներով

Ամոքիր մի քիչ վառվրուուն ոգիդ.

Մի գուցէ քո այդ անզուսպ վարժունքով

Նաև իմ մասին վատ կարծիք կազմեն,

Եւ իմ յոյսերըս ի դերև հանես:

ԳՐԱՑԻԱՆՈ. Սինիօր Բասսանիօ, ականջ գըրէք ինձ.

Եթէ ցոյց չըտամ մի լուրջ կերպարանք,

Յարգանքով չխօսեմ, (երբեմըն միայն

Հայկոյանք տալով), և միշտ չըպահեմ

Եւ չըձեացնեմ խոհական մի դէմք,

Եւ մինչև անգամ Հայր-մեր ասելիս

Այսպէս գըլխարկով դէմքըս չըծածկեմ *),

Եւ ախ չըքաշեմ և «Ամէն» չասեմ,

Եւ չըկատարեմ բարեկըրթութեան

Բոլոր ծէսերը, այն մարդու նըման

Որ իր մեծ մօրը գիւր գալու համար

Թախծալից մարդու դէմք է ստանում:—

Ապա այնուհետ ինձ մի հաւատաք:

ԲԱՍՍԱՆԻՕ. Շատ լաւ, կըտեսնենք ինչպէս կըվարուիս:

ԳՐԱՑԻԱՆՈ. Լաւ, բայց այս գիշեր բացառութիւն է.

Ինչ որ այս գիշեր գործելու լինինք՝

Չըպէտք է առնեք որպէս գրաւական:

ԲԱՍՍԱՆԻՕ. Ո՛չ, ճըշմարիտ է. ափսոս կըլիներ.

Այլ մինչև անգամ քեզնից կըխընդըմ,

Ամենայանդուգն քո ուրախութեան

Հանդերձը հագնես. չէ՞ որ այս գիշեր

Մենք հիւրեր ունինք՝ որոնք ուզում են

Լաւ զըւարձանալ. բայց գընաք բարով,

Մի քիչ գործ ունիմ:

Ես էլ պէտք է գնամ

Լորէնցօլի մօա և ուրիշների.

Ընթրիքի ժամին ձեզ մօտ կըլինինք:

(Գուրս են զնում):

*.) Պէտք է գիտենալ, որ Շէկսպիրի դարում մարդիկ ընթրիքի

ժամանակ իրանց զլխարկը չէին հանում: Malone.

Հայ գչողը ջնալաւ օդմասաւ զօյմը ՍՈՅԱՑԱՆ
գմացարդիլ նոր մե նորու ուր ՀԵՅ
մատին մշնոցը, նոսով խոցմարդան
և մարդ ոչը և այսու գմայութաւ

ՎԵՆԵՄԻԿ. Մի սենեակ Շայլոկի տան մէջ.

ՄԹԽՈՒՄ ԲՆ ԶԵՍԻԿԱ և ԼԱՆՍԸՆՈ.

ԶՀՄԻԿԱ. Եթաշտ ցաւում եմ, որ իմ հօր տանից
Ալսպէս գընում ես. մեր տունը գժոխք է,
Սակալն գու, որպէս մի ուրախ գեիկ՝
Քիչ ցըրւում էիր նորա տաղտուկը:
Բայց գընաս բարով, առ քեզ մի դուկատ:
Լըսիր, Լանսըլօ, հէնց ալժմ, ընթրիքին,
Դու Լորէնցօյին անշուշտ կըտեսնես.
Նա քո նոր տիրոջ հիւրն է այս գիշեր:
Խընդըն նորան տաս այս իմ նամակը.
Բայց գաղտնի կերպով: ԴԻՀ, Սստուած քեզ հետ:
Ես չեմ կամենում հայրը տեսնէ ինձ
Քեզ հետ խօսելիս:

ԼԱՆՍԸՆՈ. Մնաք բարով. թող արտասուքներս խօսեն
իմ լեզուիս աեղ: Գեղանի հեթանոսուհի, անոյշ հրէուհի.
Եթէ մի քրիստոնեալ մի կախարդութիւն արած և քեզ աշ-
խարհ բերած չըլինի՝ ես ոչինչ չեմ հասկացել: Բայց մնաք
բարով. այս լիմար արտասուքները մի քիչ ջրահեղձ են ա-
նում իմ ալրական ոգիս: Մնաք բարով:

ԶՀՄԻԿԻԱ. Գընա, տէր ընդ քեզ, բարի Լանսըլօ:
Աւաղ, ի՞նչպէս ժանտ մի մեղք է իմ մէջ,
Որ ամաչում եմ իմ հարազատ հօր
Զաւակը լինել. սակայն թէպէտե
Ես արեան կողմից նորա աղջիկն եմ:
Բայց բընաւ երբէք բարքերի կողմից:

Ո՛՛, իմ Լորէնցօ, թէ խօսքը պահես՝
Ես կըվերջացնեմ այս պալքարները.
Աշոյցն մէջ Քրիստոնեալ կըլնիմ և քեզ սիրող կին:
(Պուրս է զնում)՝
Այդց չաղին զու նոյն այցինց լար զմայր այս պահեան



ՄԹԽՈՒՄ ԲՆ ԳՐԱՑԻԱՆՈ, ԼՈՐԷՆՑՈ, ՍԱԼԱՐԻՆՈ և ՍՈԼԱՆԻՈ.

ԼՈՐԷՆՑՈ. Լաւ, մենք խոյս կըտանք ընթրիքի պահուն.
Կերթանք իմ տունը, կըդիմափոխուինք,
Եւ մի ժամից յետ կըրկին կըդառնանք:
ԳՐԱՑԻԱՆՈ. Մենք գեռ չենք տեսել լաւ պատրաստութիւն:
ՍԱԼԱՐԻՆՈ. Եւ ջահակիրներ մենք գեռ չենք վարձած:
ՍՈԼԱՆԻՈ. Դա ոչինչ չարժէ, թէ լաւ ճաշակով
Զըկարգադրուել. և կարծեմ լաւ է,
Որ բաց թողնենք ալդ:

ԼՈՐԷՆՑՈ. Դեռ ժամի չորսն է.
Երկու ժամ ունինք, որ լաւ պատրաստուինք:
(Մթխում է Լանսըլօ մի նամակով)՝

Սիրելի Լանսըլօ, Բնչ լուր ես բերում:
ԼԱՆՍԸՆՈ. Թէ բարեհաճէք կնիքը բեկանել՝
Կիմանաք Բնչ լուր:
ԼՈՐԷՆՑՈ. Գիրն ինձ ծանօթ է:
Ճշմարիտն ասած՝ գեղեցիկ գիր է:
Իսկ սիրուն ձեռքը, որ գըրել է այս՝
Թըղթից ճերմակ է:
ԳՐԱՑԻԱՆՈ. Սիրալին նամակ:

ՀԱՆՍԸՂԼՈ. (ուղելով մնկնել) Թոյլ տրւէք, տէր իմ:

ՀՈՐԷՆՑՕ. Այդ ուր ես գընում:

ՀԱՆՍԸՂԼՈ. Ո՞ւր. գնում եմ հրաւիրել իմ հին տիրոջս,
հրէալին, որ այս գիշեր գալ ընթրելու իմ նոր տիրոջ, քըիս-
տոնեալի տանը:

ՀՈՐԷՆՑՕ. (Լանսըլօյին՝ ցած ձայնով եւ դրամ տալով):

Կեցիր և առ այս. և յետոյ ասս
Քաղցրիկ Զէսիկալին, որ անշուշտ կըդամ.
Բայց գաղտնի ասես. դէհ, գնա:

(Լանսըլօ. զնում է):

Պարոններ,

Արդեօք կամք ունիք այս գիշեր գընանք
Այդ մասկարադին. ջահակիր գըտայ:

ՍԱԼԱՐԻՆՕ. Այս, անպատճառ. իսկոյն գընում եմ.

ՍՈՂԱՆԻՕ. Ես էլ նմանապէս:

ՀՈՐԷՆՑՕ. Մի ժամից յետոյ
Եկէք ուրեմըն Գրացիանօյի մօտ.
Թէ նա և թէ ես ալնտեղ կըլինինք:

ՍԱԼԱՐԻՆՕ. Այդպէս շատ լաւ է:
(Սալարինօ եւ Սողանիօ դուրս են զնում):

ԴՐԱՑԻԱՆՕ. Նամակն ումից էր. սիրուն Զէսիկալից:

ՀՈՐԷՆՑՕ. Ես այդ բոլորը քեզ պէտք է պատմեմ.
Նա ինձ գըրել է, թէ ինչպէս նըրան
Պէտք է փախցընեմ նորա հօր տընից.

Թէ ո՞րչափ ոսկի և ո՞րչափ գոհար
Առել է իր հետ. թէ մանկլաւիկի

Ո՞րպիսի լըզեստ պահել է պատրաստ:

Թէ երբ և իցէ իր հայրը, հրէան,
Արքալութիւն զնայ՝ այդ պէտք է լինի
Իր այն գեղանի աղջրկայ շնորհիւ.

Եւ ամենեն անքախտութիւնը

Զէր համարձակուի դըպչել նրա ոտքին՝
Եթէ ոչ միայն այն պատըրուակով,

Որ նա աղջիկն է մի պիղծ հրէալի:
Գընանք, եկ ինձ հետ, և ճանապարհին
Կարդա այս. Պէտք է սիրուն Զէսիկան
Զահակիրս լինի:

(Դուրս են գնում):

ՏԵՍԱՐԱԿԵ.

ՎԵՆԵՏԻԿԻ. Շայլոկի աւան առջեւ.

Մանում ևն ՇԱՅԼՈԿ և ԼԱՆՍԸՂԼՈ:

ՇԱՅԼՈԿ. (Լանսըլօյին) Լաւ, դու կըտեսնես, ինքը կըդատես,
Թէ ինչ աստիճան տարբերութիւն կայ
Ռեր Շայլոկի մէջ և Բասսանիօյի:
— Ի՞նչ է, Զէսիկա: — Զես կարող այլ ևս
Կոկորդը լըցնել ինչպէս իմ տան մէջ...
— Վահ, հօ, Զէսիկա... — և քընել, խըռռալ,
Եւ լզգեստները կտոր կտոր անել...
Հալդէ, Զէսիկա, քեզ հետ եմ խօսում:

ՀԱՆՍԸՂԼՈ. Օհօ, Զէսիկա:

Քեզ ով է ասում

Որ նըրան կանչես. ես քեզ չասացի:

ՀԱՆՍԸՂԼՈ. Զերդ մեծապատութիւնը միշտ ինձ կշտամ-
բում էր, թէ ես ոչինչ չեմ անում՝ մինչեւ որ ինձ չեն ասում:
(Մտնում է Զէսիկա):

ԶԷՍԻԿԱ. Պուրք էիք կանչում. ի՞նչ էք կամենում:

ՇԱՅԼՈԿ. Ես հրաւիրուած եմ գուլսը ընթրելու,
Զէսիկա, ահա բանալիները: —

Բայց ինչու գընամ. սկրելով չէ որ
Ինձ հրաւիրում են. նոքա ուզում են
Շողոքոթել ինձ. բայց այնու հանդերձ
Ես պէտք է գընամ իմ ոխից գըրգուած,
Եւ պէտք է շըռալ այդ քրիստոնեալի
Հացով սընանուիմ: — Ձէսիկա, դուստր իմ,
Լաւ նալիր տանը: — Սիրտըս ասում է
Մի գընար տինտեղ. մի ինչոր չար բան
Նիւթւում է կարծես հանգիստ կեանքիս դէմ,
Քանզի այս գիշեր ոսկու քըսակներ
Տեսայ երազում ^{*)}):

ՀԱՆՍԸՂԼՈ. Աղաչում եմ, տէր իմ, գնացէք. իմ երիտա-
սարդ տէրս սպասում է ձեր բացակայութեան ^{**) :}

ՇԱՅԼՈԿ. Ես էլ նմանապէս:

ՀԱՆՍԸՂԼՈ. Եւ նոքա միասին խորհուրդ էին սարքել. —
Հեմ ասում որ դուք դիմակտհանդէս էք տեսնելու. բայց
Եթէ տեսնէք՝ յետոյ հշասկանամ, թէ ինչու համար անցած
Աւագ երկուշաբթի քթիցս արիւն եկաւ, առաւօտուալ ժամը
չորսին, և այդ լինում էր ուղիղ չորս տարի այն տարուանից
որ վերջին անգամ քթիցս արիւն եկաւ չիք-չորեքշաբթի
օրը ^{***) :}

ՇԱՅԼՈԿ. Ի՞նչ. մասկալանդ կալ. լըսիր, Ձէսիկա,
Դըռները փակիր. և երբ որ լըսես
Թըմբուկների ձախ, և զիլ ճիշերը
Կեռավիզ սընդի՛ չենես բարձրանաս
Պատուհանի մէջ, կամ գլուխըդ հանես
Փողոցի վերալ, ներկած դէմքերով

*) Ուկի տեսնելը երազում վատ նշան է (Clarendon), և երազ-
ների հակառակն է միշտ կատարում:

Farness.

**) Ներկալութեան:

***) Քթից անակնկալ կերպով արիւն դալը մի նշան էր համար-
ում, որ կամ մի տարօրինակ բան կպատահի, կամ մի մեծ փորձանը
կդալ:

Staliwell.

Քրիստոնեաներին նայելու համար ^{**) .}
Ս. Աղ ամուր խըցիր տանս ականջները,
Ուզում եմ ասել պատուհանները.
Մի թոյլ տար տըխմար խենթութեանց ձախնը
Իմ առաքինի տան մէջ մուտք գործէ:
— Երգւում եմ Յակոբի գաւազանի վրայ,
Որ փափաք չունիմ խընչոյք գնալու,
Բայց պէտք է գընամ: — Դու առաջ գընա,
Այ տղայ, և ասա որ ես գալիս եմ:
ՀԱՆՍԸՂԼՈ. Լաւ, ես գընում եմ:
(Ցած, Ձէսիկային):
Ականջ մի՛ գըներ,

Օրիորդ, նայիր պատուհանից դուրս.
Եւ մի քրիստոնեայ այնանդից կանցնի
Սիրուն հրէուհու աչփին արժանի:

(Լանսլո գնում է):

Հագարի զարմ խենթն բնչ էր ասում քեզ:
Նա միայն ասաց, Մնաս բարով, օրիորդ,
Եւ ուրիշ ոչինչ:

ՇԱՅԼՈԿ.

Անպիտան տըղան

Բաւական լաւ է, բայց խիստ շատակեր.
Գործի մէջ ծոյլ է որպէս մի խըխունջ,
Եւ նա քընում է օրը ցերեկով

Աւելի՝ քան թէ վայրենի կատուն ^{**) :}

Իշամեղուներ պէտք չեն իմ տան մէջ.

Եւ դորա համար նըրան թողնում եմ,

Եւ ուղարկում եմ նըրան մէկի մօտ՝

Որին կուզէի որ նա աջակցէր,

Նորա փոխ առած հարըստութիւնը

*) Խտալիու մէջ սովորութիւն է եղած մասկարադների ժամա-
նակ դէմքը ներկիւլ,

Ծ. Թ.

**) Վալբենի կատուն ցերեկը քնում և գիշերը մըոււմ է որս է
անում:

Clarendon.

Վատնելու համար:—Ներս գնա, Զէսիկա:
Գուցէ շատ շուտով տուն վերադառնամ:
Ինչպէս ասացի՝ դու ալնպէս արա.
Դըռները ամուր փակիր ետեից.
Ինչ որ պինդ պահես՝ դու շուտ կըդըտնես.
Խնայողի համար լաւ առակ է այդ:
(Դուրս է գնում)։
ՔԷՄԻԿԱ. Լաւ, երթաս բարով. թէ բախտը բերէ՝
Ես մի հայր կկորցնեմ, իսկ դու մի աղջիկ:
(Դուրս է գնում)։

Տ Ե Ս Ա Ր Ա Ն ք.

Նոյն տեղ.

Մտնում են ԳՐԱՅԻԱՆՈ և ՍԱԼԱՐԻՆՈ, դիմակներով.

ԳՐԱՅԻԱՆՈ. Լորէնցօն խընդրեց՝ այս ծածկոցի տակ
Նորան ըսպասենք:

ՍԱԼԱՐԻՆՈ. Բայց ժամն անցել է:

ԳՐԱՅԻԱՆՈ. Զարմանալի է, որ ուշացել է.
Սիրահարները միշտ ժամացոլցից
Առաջ են վագում:

ՍԱԼԱՐԻՆՈ. Տասն անգամ արագ
Թըռչում են Սստղիկի աղաւնիները
Սիրոյ նոր կապեր կընքելու համար,
Քան ուխտեալ սիրոյ վաղեմի կապերն
Անխախտ պահելու ^{*)}:

*) Պէտք է նկատել, որ ոչ թէ աղաւնիներն են կնքում սիրոք:
Կապերը, այլ Սստղիկն ինքը,

Heath.

ԳՐԱՅԻԱՆՈ. Դա միշտ ալդպէս է.
Ո՞վ է խընջուքի սեղանից ելնում
Նոյն ախորժակով՝ որով նըստել էր.
Ո՞րտեղ է այն ձին, որ գնացած շաւղից
Յետ դառնայ կըրկին նոյն խանդ ու բոցով
Որով գնացել էր: Ամեն բանի մէջ
Հետապնդումը աւելի քաղցը է
Քան վայելումը: Ո՞րչափ նըման է
Մի անփորձ տղայի, անառակ որդու,
Այն փոքրիկ նաւը, ծփուն գրօշակով,
Որ գուրս է գընում մայրենի ծոցից,
Եւ պոռնիկ քամին գրկում է նըրան
Եւ համբուրում է. որչափ նըման է
Անառակ որդուն, երբ լետ է գալիս,
Զարդուած կողերով և պատառոտուն
Առագաստներով, հիւծուած, զախճախուած
Եւ պոռնիկ քամուց ուժասպառ եղած:

(Մտնում է Լորէնցօ):

ՍԱԼԱՐԻՆՈ. Ահա Լորէնցօն, այս մասին լետոյ:

ԼՈՐԷՆՑՈ. Ներեցէք, սիրելի բարեկամները,
Որ ալսքան ուշացայ. ոչ ես, իմ կամքով,
Սլլ իմ գործերս սպասեցրին ձեզ.
Երբ գուք էլ ուզէք կընոջ գոզ դառնալ՝
Ես էլ ձեզ համար նոյնչափ ժամանակ
Պատրաստ եմ հըսկել:—Մօտեցէք, եկէք.
Ալստեղ է բնակում իմ աներ հըսան:
Ե՞լ, ով կալ ալդտեղ:

(Զէսիկա երեւում է վերեւից տղայի զգեստով)։

ՔԷՄԻԿԱ. Ո՞վ էք, խօսեցէք,

Որ ևս աւելի ապահով լինիմ,
Թէկ երդուում եմ, որ ես ձեր ձախնը
Լաւ ճանաչում եմ:

ԼՈՐԷՆՑՈ. Լորէնցօն եմ ես, քո սիրականը:

ՀԵՍԻԿԱՆ. Լորէնցօն, անշուշտ, և սիրականըս,
Քանզի ում երբէք սիրել եմ այդքան:
Բայց այժմ, Լորէնցօ, ուրիշ ով գիտէ
Բացի քեզանից, որ ես քոնըդ եմ:
ՀՈՐԷՆՑՕ. Երկինքը միայն և քո խոհերըդ
Վկալ են, որ դու ինձ ես պատկանում:
ՀԵՍԻԿԱՆ. Բըռնիր այս արկղը. առնելուն կարժէ.
Ես շատ ուրախ եմ, որ գիշեր է այժմ
Եւ ինձ չես տեսնում. խիստ ամաչում եմ
Իմ այս ծըպտումից. բայց սէրը կոյլ է.
Սիրտհարները չեն կարող տեսնել
Այն հիտնալի խենթութիւնները,
Որ նրանք գործում են. թէ կարենալին
Կուպիդոնն անգամ պիտի ամաչէր,
Ինձ մի պատանի դարձած տեսնելով:
ՀՈՐԷՆՑՕ. Ցած իջիր. այսօր դու պէտք է լինիս
Իմ ջահակիրըս:

ՀԵՍԻԿԱՆ. Ալդ ինչ ես ասում.
Ե՞ս ճըրագ պահեմ ինքս իմ զիկնանքիս.
Նա արդէն ինքնին շատ ակներև է:
Վահ, իմ սիրական, անկարելի է.
Դու ուզում ես, որ ինքըս ինձ յալտնեմ,
Իսկ ես ուզում եմ անծտնօթ մընալ:
ՀՈՐԷՆՑՕ. Հոգ չէ, սիրուհիս, դարձեալ անծանօթ
Կարող ես մընալ, մինչև իսկ տղայի
Սիրուն ըզգեստով. բայց եկ, շուտ արա,
Փակ գիշերն ահա փախուստ է տալիս
Եւ Բասսանիօլի խընջուքի համար
Մեզ ըսպասում են:

ՀԵՍԻԿԱՆ. Իսկոյն դըռները ամուր կըփակեմ,
Ինձ կոսկեզօծեմ նոր գուկատներով
Եւ կըգամ քեզ հետ:

(Վերեւից հեռանում է).

ԳՐԱՑԻԱՆԾՕ. Գրլիսարկըս վըկալ,
Հըէուհի չէ սա. ինչպէս սիրուն է:
ՀՈՐԷՆՑՕ. Անիծուած լինիմ՝ թէ բոլոր սրտով
Զեմ սիրում նըրան. նա խելացի է,
(Որչափ որ նըրան կարող եմ գտատել),
Եւ գեղեցիկ է, (եթէ աչքերըս
Ճըշտարխոս են), և հաւատարիմ,
Ինչպէս որ նա ցարդ հանդիսացել է.
Այսպէս ուրեմըն, ճիշդ ինչպէս որ է,
Խելացի, սիրուն և հաւատարիմ
Նա պէտք է իշխէ իմ հոգուս վերալ:
(Մանում է Զէսիկա ցածից).
Ինչ. արդէն եկամբ: — Հայդէ, պարոններ.
Այժմ մասկարագի մեր ընկերները
Հսպասում են մեզ:
(Գնում է Զէսիկայի եւ Սաւարինօյի հետ).
(Մանում է Անտոնիո):

ԱՆՑՈՒԻԾ. Ո՞վ է:

ԳՐԱՑԻԱՆԾՕ. Սինիօր Անտոնիօ:

ԱՆՑՈՒԻԾ. Բահ, բահ, Գրացիանօ,
Ուր են միւսները. ժամը ինն է այժմ.
Բարեկամներըս ձեզ են ըսպասում.
Եւ մենք այս գիշեր մասկարագ չունինք. —
Հողմը բարձրացաւ, Բասսանիօն իսկոյն
Նաւ է նըստելու. քըսան ծառաներ
Ուղարկել եմ ես, որ ձեզ որսնեն:

ԳՐԱՑԻԱՆԾՕ. Ես շատ ուրախ եմ. ինձ համար չըկալ
Մեծագոյն հաճուք՝ քան թէ նաւ նըստել
Եւ հէնց այս գիշեր այստեղից մեկնել:
(Դուրս են գնում).

ՏԵՍԱՐԱՆ Ե.

ԲԵԼՄԻՆՈՒ. մի սենեակ Պորցիայի տան մէջ.

Փողերի ձախեր. մանում է ՊՈՐՑԻԱ. և նորա հետ ՄԱՐՈԿԻ ԽՇԱՆԸ,
և նոցա հետնորդները:

ՊՈՐՑԻԱ. Գնացէք, քաշեցէք վարագոլները.
Ապա ցոյց տըսէք ազնիւ իշխանին
Տարբեր արկղերը: — Այժմ, ընտրեցէք:
ՄԱՐՈԿԻ հՇԽՆԱՆ. Առաջին արկղը մի ոսկի արկլ է,
Այսպէս մակագրած. «Ով որ ինձ ընտրէ՝
Կըստանայ ինչ որ իղձն է շատերի»:
Երկրորդն արծաթ է և այս խոստումը
Գրուած է վերան. «Ով որ ինձ ընտրէ՝
Կըստանայ որքան ինքն արժանի է»:
Իսկ այս երրորդը, անպիտան կապար՝
Նոյնչափ էլ կոպիտ մակագիր ունի:
«Ով որ ինձ ընտրէ՝ պէտք է վտանգէ
Եւ տայ ամեն քան ինչ որ նա ունի»:
Ինչպէս իմանամ թէ ճիշդ եմ ընտրել:
Նորանց մէկի մէկի մէջ կալ իմ պատկերը,
Եւ եթէ, իշխան, այն մէկը զատէք՝
Ես այն ժամանակ ձեզ կըպատկանիմ:
ՄԱՐՈԿԻ հՇԽՆԱՆ. Թող ինձ մի աստուած իմ ընտրու-
թեան մէջ

Ուղեցոյց լինի. թոլլ տըսէք նայեմ,
Եւ կարդամ կրկին մակագիրները.
Լաւ, ինչ է ասում կապարեալ արկղը.
«Ով որ ինձ ընտրէ՝ պէտք է վտանգէ

Եղանեւ տայ ամեն քան ինչ որ նա ունի»:
Տալ, ինչք համար. կապարք համար.
Պէտք է վըտանգէ կապարք համար:
Ոչ, այս արկղիկը ըսպանալիք է.
Եթէ կան մարդիկ, որոնք ամեն ինչ
Բախտին են յանձնում նրանք անում են այդ
Մեծ վաստակների ակընկալութեամբ.
Մի ոսկեալ հոգի ցած չի կորանալ
Մի այնչափ անարդ մետաղի համար.
Ես էլ ոչ մի բան բախտին չեմ յանձնի,
Եւ ոչ էլ կըտամ կապարի համար:
Լաւ, հիմայ տեսնենք, թէ ինչ է ասում
Արծաթ արկղիկը իր կոյս երանգով.
«Ով որ ինձ ընտրէ՝ կըստանայ որքան
Ինքն արժանի է»: Որքան արժան է:
Կեցիր, ով Մարոկ, և մի լաւ կըշուր
Քո արժանիքը անաչառ ձեռքով:
Եթէ քո աչքով քեզ գընահատես՝
Դու բաւական շատ արժանիք ունիս.
Սակայն ունենալ շատ արժանիքներ՝
Զէ նըշանակում այս օրիորդին
Արժանի լինել. բայց և կասկածել
Արժանիքիս վրայ՝ նշանակում է
Թուլասըրտութեամբ ինքս ինձ քամահրել:
Ըստանալ որքան ինքս արժանիք եմ,
Ուրեմն ասել է հէնց օրիորդին:
Թէ իմ ծնունդով արժան եմ նորան,
Թէ հարստութեամբ, թէ իմ ձիքերով,
Թէ իմ բարեկիրթ յատկութիւններով.
Սակայն աւելի քան այս բոլորով՝
Ես իմ ջերմ սիրով արժան եմ նորան:
Ել ինչ հեռու գնամ, հէնց այս մէկն ընտրենք:
Բայց մէկ էլ կարդամ այն ոսկի արկղի

Մակագրութիւնը. «Ով որ ինձ ընտրէ՝
Կըստանայ ինչ որ իղծն է շատերի»:
Վահ, դա ի՞նչ բան է. — Հենց օրիորդն է.
Ամբողջ տշխարհի ըզձալին նա է.
Դալիս են երկրի չչորս անկիւններից,
Որ մի համբոլը տան այս սուրբ խորանին,
Այս մահկանացու շնչաւոր սուրբին:
Ահա Վըրկանի ^{*)} անտառները
Եւ արաբական ընդարձակ դաշտերն
Այժմ դարձել են մեծ պողոտաներ,
Ուրկից իշխաններ անցնում գալիս են՝
Սիրուն Պորցիալին նայելու համար:
Նոյն իսկ ջըրալին այն պետութիւնը,
Որի փառասէր գլուխը թքնում է
Երկնքի դէմքին՝ նա էլ չէ կարող
Այն օտարերկրեալ հարսնախօսներին
Մի պատուար լինել. նոքա անցնում են
Նորա վերալից որպէս մի առուից,
Չըքնաղ Պորցիալին տեսնելու համար:
Այս երեք արկղից մէկն ունի իր մէջ
Նորա երկնալին կենդանագիրը:
Կարող է լինել այս կապարի մէջ.
Սըրբակծութիւն կըլինէր՝ տածել
Այդչափ նըւաստ միտք. բիրտ բան կըլինէր
Պատանել նըրան այսպիսի մի մութ
Գերեզմանի մէջ: Հաւատամ արդեօք
Որ արծաթի մէջ ամփոփուած է նա,
Որը տասն անգամ պակաս գին ունի
Քան թէ զուտ ոսկին. օն, յանցաւոր միտք.

^{*)} Վըրկանը հիմիկուալ Մազանդարանն է, Պարսկաստանի մի նահանգ Կասպից ծովի հարաւալին կողմը. Շէկսպիր շատ անգամներ խօսում է Վըրկանեան վագրի վերաբ, և իրաւ Մազանդարանի վագրերը հանրածանօթ են.

Երբէք չէ եղել ալսչտփ ճոխ գոհար
Ալլապէս պըրկած՝ քան թէ ոսկու մէջ:
Անգլիալում կալ մի դրամ, որ կրում է
Հրեշտակի պատկեր, ոսկու մէջ դրոշմած.
(Խոնք ու սուրբ) Այնտեղ հրեշտակը ոսկու վերայ է,
Ալստեղ հրեշտակը ոսկի մահճի մէջ,
Ներսումն է պառկած: — Բանալին տըւէք.
Ես այս եմ ընտրում, ի՞նչ կուզէ լինի:
ՊՈՐՑԻԱԼ. Ահա բանալին, առէք, ով իշխան.
Եթէ պատկերը դորա մէջ լինի՝
Ապա ես ձերն եմ:
(Բաց է անում ոսկէ արկդիկը):

ՄԱՐՈՒԿԻ ԻՇԽԱՆ.

Դըժնիք, այս ի՞նչ է.

Մի կըմախք, որի դատարկ աչքի մէջ
Կայ գըրուած մի թուզթ. կարդամ գըրուածը.
Ամեն փայլուն բան ոսկի չըլարծես,
Շատ եւ շատ անգամ՝ դու այդ լսած ես.
Շատ մարդիկ իրանց կենաքը ծախել են
Քանզի իմ տեսքից նոքա խաբունը են:
Ոսկի շերիմներ լի են որդներով:
Եթէ դուք այդշափ խրոխտ չըլինէիք
Եւ ձեզ աւելի խոնեմ ցոյց տայիք,
Մարմնով մատղահաս, խելքով չափահաս՝
Հաւ պատախանի կ'արժանանայիք:
Զուր է ձեր յոյսը. գընացէ՛ք բարով:
Իրաւ որ զուր լոլս և զուր իմ վաստակ:
Պէհ, մընաս բարով, սիրով ջերմութիւն.
Եւ եկ, պատիր ինձ, մահու սառնութիւն:
Պորցիա, մնաս բարով. այնքան լըցուած է
Իմ սիրտը վշտով՝ որ իսկոյն և եթ
Պէտք է հեռանամ. տանել չեմ կարող:
Այսպէս են մեկնում կորցընողները:
(Բուրս է զնում.)

ՊՈՐՑԻԱ. Փրկուեցանք. քաշեցէք վարագոլըները
Եւ եկէք գընանք:
Երանի՛ բոլոր այսպիսի մարդիկ
Ինձ այսպէս ընտրեն: (Դուրս են գնում) .

ՏԵՍԱՐԱՆԸ.

ՎԵՆԵՏԻԿ. մի փողոց.

Մանում են ՍԱԼԱԲԻՆԸ և ՍՈԼԱՆԻՕ.

ՍԱԼԱԲԻՆԸ. Վահ, մարդ Աստուծոյ. ես ինքըս տեսալ,
Որ մեր Բասսանիօն նաւ մըտաւ, մեկնեց.
Գրացիանօն նոյնպէս նորա հետ գընաց.
Բայց վըստահ եմ ես, որ այն նաւի մէջ
Լորէնցօն չըկար:

ՍՈԼԱՆԻՕ. Անպիտան հըէան
Գոռում գոչումով դուքսին զարթեցըց.
Դուքսն էլ նորա հետ գընաց խուզարկէ
Բասսանիօնի նաւը:

ՍԱԼԱԲԻՆԸ. Բայց նա ուշ հասաւ.
Նաւը բացել էր առագաստները.
Սակայն հէնց այնտեղ դուքսին հասկացըին,
Որ Լորէնցօնին և Զէսիկային
Մէկտեղ տեսել են մի գոնդոլի մէջ.
Նաև, Անտոնիօն դուքսին հաւաստեց,
Որ Բասսանիօնի նաւում չէին նրանք:
Երբէք չեմ տեսել այնպիսի զարոյթ

Այնպէս խոռվայուզ, այնպէս վալրենի,
Այնպէս փոփոխուող և հայհոյալից՝
Որպէս շուն հըէան արտազեղում էր
Փողոցների մէջ: «Ա՛խ, իմ աղջիկըս,
«Աղջիկըս փախչէ՛ քրիստոնեալի հետ.
Ա՛խ, վայ քրիստոնեալ իմ դուկատներիս.
«Արդարութիւն, օրէնք, ոսկին և գուստը՝»,
«Մի կընքած քըսակ, ոչ, երկու քըսակ,
«Լի դուկատներով, երկդուկատներով.
«Եւ իմ աղջիկըս ինձնից գողանալ.
«Եւ գոհարներ էլ, երկու քար, ի՞նչ քար.
«Երկու թանկագին աննըման քարեր,
«Այն էլ աղջիկըս ինձնից գողանալ.
«Ո՛վ արդարութիւն. գըտէք աղջըկաս,
«Նորա վերայ են իմ գոհարները
«Եւ դուկատները»:

ՍԱԼԱԲԻՆԸ.

Այն, Վենետիկի
Բոլոր տղայքը հետեւում են նրան
Աղաղակելով. «Վահ, գոհարները,
«Նորա աղջիկը և դուկատները»:

ՍՈԼԱՆԻՕ.

Պէտք է Անտոնիօն ճըշտապահ լինի,
Թէ ոչ կըտուժէ այս բոլորի տեղ:

ՍԱԼԱԲԻՆԸ. Հա, ես իմ հոգիս. լաւ միտ բերեցիք.

Երէկ խօսում էի մի ֆրանսիացու հետ,
Եւ նա ինձ պատմեց, թէ այն նեղ ծովում
Որ բաժանում է Ֆրանսիան Անգլիայից՝
Մեր երկը մի նաւ, ապրանքներով լի,
Ընկըզմըւած է: Երբ նա այդ պատմեց՝
Ես մըտածեցի Անտոնիօլի վըրայ,
Եւ լուռ մաղթեցի, որ երանի՛ թէ
Նրանը չըլինի:

ՍՈԼԱՆԻՕ.

Դուք լաւ կանէիք,

Որ ձեր լըսածը նորան պատմէիք.
Բայց ոչ թէ լանկարծ. ևա շատ կըտիրէր։
ՍԱԼԱՐԻՆԾՈ. Զըկալ աւելի բարեսիրտ մի մարդ
Ամբողջ աշխարհում: Ես ներկայ էի
Երբ որ Բասսանիօն և նա զատուեցան:
Բասսանիօն ասաց. որ շուտ կըդառնամ։
Նա պատասխանեց. «ոչ, հարկաւոր չէ։
Իմ խաթեր համար գործըդ ըշտապով
Մի ոչնչացներ. ըսպասիր ալնքան,
Որ ժամանակը լաւ հասունանայ:
Գալով հրէալի առած մուրհակին՝
Թող դա չըխուովէ սիրանուէր հոգիդ։
Գընա, ուրախ կաց. և բոլոր միաքըդ
Նըւիրիբ միայն սիրախօսութեան,
Այն տեսակ անխառն սիրոյ ցոլցերի՝
Որոնք քեզ այնտեղ պատշաճ կըլինին։
Եւ այն ժամանակ նորա աչքերը.
Լըցուեցան լսոշոր արտասուքներով,
Եւ իր երեսը ալլ կողմ թեքելով՝
Զեռքը կարկառեց դէպի Բասսանիօն,
Եւ բաքանչելի ըզգայուն սըրտով
Նըրա ձեռքը սեղմեց, և բաժանուեցան։
ՍՈՂԱՆԻՆԾՈ. Նա այս աշխարհը սիրում է կարծեմ
Բասսանիօնի համար: Խընդիրեմ, եկ գընանք
Եւ գունենք նըրան, և մի քիչ ցըրուենք
Նորա թախիծը մի զըւարճութեամբ։
ՍԱԼԱՐԻՆԾՈ. Այո՛, եկ, գընանք:

(Դուրս են զնում)

Հյածն և այբով զըրաց այսուն
ՏԵՍԱՐԾՆ Թ.
 Բելմոնտ. մի սենեակ Պորցիայի տան մէջ.
Մտնում է ՆերիՍՍԱ. մի ծառակի հետ։
 ՆերիՍՍԱ Շուտ, շուտ, խընդրում եմ. քաշիր վարագոյը.
Արագոնի իշխանն արդէն երդուել է,
Եւ գալիս է այժմ վիճակ քաշելու։
 (Փողերի ծայն. մտնում են Արագոնի իշխանը, Պորցիա և հետեւ որդներ)։
ՊՈՐՑԻԱ. Նայեցէք այնտեղ, ով ազնիւ իշխան,
Ահա արկդերը: Եթէ ընտրէք այն,
Որի մէջ լինի իմ կենդանագիրս՝
Իսկոյն կրտօնուի մեր հարսանիքը.
Իսկ եթէ, իշխան, դուք սխալ ընտրէք՝
Առանց ալլ և ըս մի բան խօսելու
Դուք իսկոյն և եթ պէտք է հեռանաք:
ԱՐԱԳՈՆ. Ես իմ երդումով պարտաւորուած եմ
Երեք բան պահել. առաջին՝ երբէք
Ոչ ոքի չասել թէ որն ընտրեցի.
Երկրորդ՝ որ եթէ անյաշող դուրս գամ՝
Ալլ ևս իմ կեանքում ոչ մի աղջկանից
Զըւընդըեմ լինել իմ լըծակիցը.
Եւ վերջինն այն է, որ եթէ վրիպեմ՝
Պէտք է անյապաղ թողնեմ ձեզ, գընամ։
ՊՈՐՑԻԱ. Որոնք որ եկել վիճակ են քաշել
Անարժան անձիս տիրելու համար՝
Երդուել են բոլորն ալդ երեք բանը:
ԱՐԱԳՈՆ. Պատրաստ եմ ուրեմն. ով բախտ, շնորհիր ինձ

Սըտիս մուրազը:—Ոսկի, և արծաթ,
Եւ անարդ կապար:
«Ով որ ինձ ընտրէ՝ պէտք է վըտանգէ
Եւ տայ ամեն քան՝ ինչ որ նա ունի»:
Աւելի սիրուն պէտք է լինիս դու
Նախ քան քեզ համար մի բան վըտանգէմ:
Լաւ, բնչ է ասում ոսկէ արկղիկը.
Հա, թող այդ տեսնենք, «Ով որ ինձ ընտրէ՝
Կըստանայ ինչ որ իղձն է շատերի»:
Ի՞զն է շատերի:—Գուցէ «շատերը»
Նշանակում է տըխմար ամբոխը,
Որ երևոյթով միայն ընտրում է,
Եւ որ չըգիտէ աւելի՝ քան այն,
Ինչ որ թելադրէ շըլացած աչքը,
Որ անկարող է ներքինը զըննել,
Ալ, ծիծառի պէս, բոյնը շինում է
Բացօթեալ մի տեղ, դըրսի պատի վրայ:
Ո՞չ, ես չեմ ընտրի՝ ինչ որ շատերի
Ըզալի բանն է. ես չեմ կամենում
Ուամիկ մարդկանց հետ նոյն շաւզով գընալ,
Դասուիլ բարբարոս ամբոխի կարգում:
Օ՞ն, քեզ եմ գալիս, արծաթ գանձարան.
Մէկ էլ կըրկնիր ինձ քո մակագիրըդ.
«Ով որ ինձ ընտրէ՝ կըստանայ որքան
Ինքն արժանի է»:—Եւ շատ լաւ խօսք է.
Ո՞վ կըսօթարուի բախտը փայփայել
Եւ փառք ըստանալ առանց իր վերայ
Իր արժանիքի դրոշմը կըրելու.
Թող չընկըրտի ոչ ոք մի փառքի՝
Որին արժան չէ: Օ՞չ, երանի թէ
Բարձր աստիճաններ, փառքեր, պաշտօններ
Կաշառատւութեամբ ձեռք չըբերուէին,
Եւ անբիծ պատիւ ըստացուէր՝ միայն

Պատուաստաց մարդու արժանիքներով.
Ո՞րքան գըլուխներ, որոնք մերկ են ալժըմ,
Կըծածկըւէին *), և որքան մարդիկ,
Որ հրամայում են՝ պէտք է լինէին
Հրամանի ներքոյ. որչափ ռամիկներ
Պէտք է զատուէին անաղարտ պատուի
Հարազատ զարմից, և որքան փառքեր
Գարերից մնացած աւելակների
Եւ լարդի միջից պէտք է դուրս գալին
Նոր փայլ առնելով:—Գանք իմ ընտրութեան
«Ով որ ինձ ընտրէ՝ կըստանայ որքան
Ինքն արժանի է»:
Լաւ, առնում եմ այն՝ որին արժան եմ:
—Տըւէք բանալին հէնց ալս արկղիկի.
Իսկոյն կըրանամ իմ բախտիս դուռը:
(Բայ է անում արծաթեայ արկղը):
ՊՈՐՑԻԱ. (առանձին) Ալդքան նեղութեան արժանի չէ այն,
Ինչ որ այդ արկղում դուք գըտնելու էք:
Ալս բնչ եմ տեսնում. ծամածուած դէմքով
Տըխմարի պատկեր, որ ինձ տալիս է
Մի գըրուած տոմսակ. պէտք է կարդամ այդ:
Որչափ Պորցիալին աննըման ես դու.
Ո՞րչափ աննըման իմ մեծ լոյսերիս
Եւ արժանիքիս. «Ով որ ինձ ընտրէ՝
Կըստանայ որքան ինքն արժանի է»:
Ուրեմըն միայն մի տըխմար գլխի
Արժանի եմ ես. ալս է իմ ընծաս.
Ալսքան է միայն իմ արժանիքը:
Մեղանչելն այլ է և դատելը այլ.
Երկու գործեր են միմեանց հակառակ:
Ալս բնչ է:

*.) Ալսինքն, որոնք ալսօր ցած աստիճանի տէր մարդիկ են և
այն ժամանակ բարձր դիրք կստանալին:

Հուրը եօթն անգամ սըրան փորձել է,
Սա եօթը բովից արդէն անցել է.
Եւ ով ընտրելիս չըլրիպած լինի:
Պէտք է եօթն անգամ փորձըւած լինի:
Կայ մարդ որ ըստուեր գըգում է միայն,
Այն մարդու քախտն էլ ըստումը է ունայն:
Շատ յիմարներ կան, (ես այդ լաւ զիտեմ)
Դըրսից արծաթ են. ես էլ նոյնպէս եմ.
Տար քո մահիճըդ ինչ կին որ կուղես,
Քեզ յարմար գըլրում միշտ ես եմ ու ես:
Հայութ, գընացէք
Ձեր բանին կացէք:
Դեռ էլ լիմար կերևամ
Եթէ ալստեղ ուշանամ.
Մէկ լիմար գլուխ ունէի
Երբ որ եկայ ես ալստեղ.
Արդ որ թողնում գընում եմ
Երկուսն ունիմ մէկի տեղ:
Մընաք բարով, անուշիկ,
Ես կըպահեմ իմ երդում,
Կըհանդուրժեմ հեզութեամբ
Ճակատագրիս իմ տրտում:
(Կնում են Արագոն եւ հետեւորդներ).

ՊՈՐՅԻԱ. Ալսպէս ճըրագը ալրեց թիթեռին.
Օ՛հ, տրամաբանող այս տըխմարները
Երբ որ ընտրում են՝ այնքան խելք ունին
Որ սըխալում են հէնց իրանց խելքով:
ՆԵՐԻՍՍԱ. Հին առակն ուրեմն շատ ճիշտ է եղած.
Կին և կախաղան բախտի ձեռքին են:
ՊՈՐՅԻԱ. Եկ. վարագուրը քաշիր, ներիսսա:

(Մտնում է պատգամաբեր).
ՊԱՏԳԱՄԱԲԵՐ. Ուր է տիկինը:
ՊՈՐՅԻԱ. Ալստեղ է. ինչ կայ:

ՊԱՏԳԱՄԱԲԵՐ. Տիկին, ձեր դրան մօտ ալժըմ ցած իջաւ
Վենետկից եկած մի երիտասարդ.
Նա իւր տիրոջից առաջ է ընկել,
Որ ձեզ իմաց տալ նորա գալուստը.
Որից բերել է նիւթաւոր ողջոյն,
Ալն է, ոչ միայն յարգալից բարե
Եւ քաղաքավար շատ մեծարանքներ,
Այլ և թանկագին և ճոխ ընծաներ.
Ես գեռ չեմ տեսել ալդչափ հաճելի
Սիրային գեսպան: Ապրիլի մի օր
Զէ եկել երբէք այնպէս անուշիկ
Եւ չէ աւետել շըքեղ մի ամառ՝
Որպէս գալիս է այս առաջընթացն
Տիրոջ առջևից:

ՊՈՐՅԻԱ.

Բաւ է, խընդըռում եմ.
Դու գործ ես դընում նրան գովելու մէջ
Ալնալիսի փարթամ պերճախօսութիւն,
Որ վախենում եմ քիչ յետոյ ասես,
Թէ նա քեզ հետ էլ քիչ ազգական է:
Եկ, եկ, ներիսսա. ես անհամբեր եմ
Տեսնելու համար ալդ՝ Կուտպիդոնի
Ալագ գեսպանին, որ ալդ աստիճան
Վայելուչ կերպով գալիս է մեզ մօտ:
Ուզ սէր, երանի՛ Բասանիօն լինի:

(Դուրս են գնում):



այդ նոց նցես տօհ մայր զան ուղարք
բյուստանը ու ծովի ըլլուս է և
յմից չ ջառա ըլլուս զան ու
պատուար սպու նու ունի զան ու
մուս ուստի է և մուս ուստի

ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ

ՏԵՍՍՐԱՆ Ա.

Վենետիկ. մի փողոց.

Մանում և ՍՈԼԱՆԻՕ և ՍԱԼԱՐԻՆՕ.

ՍՈԼԱՆԻՕ. Հ'ը, ի՞նչ լուր կալ Ռիալտուի վրալ:
ՍԱԼԱՐԻՆՕ. Լուր, այն որ գեռ ևս հերքուած չէ, որ Ան-
տոնիուի մի նաւը, թանկագին ապրանքներով լցուած, նե-
ղուցի^{*)} մէջ ընկղմուել է. կարծեմ Գուդվինչ են ասում այդ
տեղին. մի շատ վտանգաւոր ծանծաղուտ է, աղէտալից մի
տեղ, ուր շատ ու շատ մեծ նաւերի կմախքները պառկած
թաղուած են. այսպէս են պատմում, եթէ միայն սանամալր
Համբաւը պարկեշտ և ճշմարտախօս կին լինի:

ՍՈԼԱՆԻՕ. Երանի թէ նա այդ գործի մէջ աւելի ստա-
խօս եղած լինի՝ քան ամենակեղծ սանամալրը, որ երբ և
իցէ զանջաֆիլ^{**)} է ծամել, կամ ուզել է իր դրացիներին
հաւատացնել, որ լաց է լինում իր երրորդ ամուսնի մահուան

^{*)} Մանչի ջրանցքը:

Ծ. Թ.

^{**)} Պառաւ կանալք զանջաֆիլը շատ էին սիրում Անգլիայում.
տես Measure for Measure, IV. III. 8.

Furness.

վերայ: Բայց... առանց շատախօսութեան մէջ ընկնելու, կամ
պարզ խօսակցութեան շաւղից խոտորելու, պէտք է ասել որ
ճշմարիտ է, որ բարի Անտոնիօն... ազնիւ Անտոնիօն... Օ՛հ,
երանի թէ գտնէի մի արժանաւոր տիտղոս նորա անունին
կցելու համար...»

ՍԱԼԱՐԻՆՕ. Լաւ է, վերջակէտը գիր^{*)}:

ՍՈԼԱՆԻՕ. Հա, ի՞նչ ես ասում. լաւ, վերջն այն, է որ
նա մի նաւ է կորցըել:

ՍԱԼԱՐԻՆՕ. Երանի թէ դա լինէր նորա վերջին կո-
րուստը:

ՍՈԼԱՆԻՕ. Թող ես շուտ Ամէն ասեմ, մի գուցէ սա-
տանան աղօթքս խանգարէ: Ահա սատանան ինքը մի Հրէ-
այի կերպարանքով:

(Մտնում է Շայլոկ):

Ի՞նչ կալ, Շայլոկ. Ի՞նչ լուր կալ վաճառականների մէջ:

ՇԱՅԼՈԿ. Դուք գիտէիք, ոչ ոք, ոչ ոք ձեզանից լաւ
չգիտէր, որ իմ աղջիկս փախել է:

ՍԱԼԱՐԻՆՕ. Ալդ ճիշտ է. ես իմ կողմից լաւ ճանա-
չում եմ այն գերձակին, որ թևեր չինեց, որոնցով ձեր աղ-
ջիկը թռաւ:

ՍՈԼԱՆԻՕ. Իսկ Շայլոկ իր կողմից շատ լաւ գիտէր, որ
թռչունը թևեր էր հանել. գիտէր որ երբ ժամանակը հաս-
նում է՝ նոցա բոլորի համար ընական պահանջ է մայրէկից
հեռանալ:

ՇԱՅԼՈԿ. Եւ դորա համար անիծուած է նա:

ՍԱԼԱՐԻՆՕ. Ի հարկէ, միայն թէ սատանան եղած լի-
նի դատաւորը:

ՇԱՅԼՈԿ. Իմ հարազատ միս և արիւնը ըմբոստանայ իմ
դէմ:

ՍՈԼԱՆԻՕ. Զայնդ կտըիր, հին լէշ, ամօթ չէ քեզ, որ
այդ ծերութեանդ ժամանակ արիւնդ ըմբոստանում է:

(Ալինքն սկսած նախադասութիւնդ վերջացրու. Ծ. Թ.)

ՇԱՅԼՈԿ. Ես իմ աղջկաս եմ ասում, որ իմ մին և առ
բիւնս է:

ՍԱԼԱՐԻՆԾՕ. Աւելի տարբերութիւն կայ քո և նորա մսի
մէջ՝ քան թէ սև ստթի և փոսկը մէջ. քո և նորա արեան
մէջ՝ քան թէ կարմիր գինու և Ունի գինու մէջ։ Բայց ասա
ինձ, արդեօք լսել ես, Սնտոնիօն ծովի մէջ կորուստ է ունե-
ցել թէ ոչ։

ՇԱՅԼՈԿ. Այդ էլ ինձ համար մի նոր անբախտութիւն
է. նա մի սնանկացած, մի շուալ մարդ է, որ չէ համարձակ-
ւում Որիալոյի վերայ երես ցոյց տալ. մի մուրացկան, որ
սովորութիւն ունէր այնպէս զարդարուած դալ շուկայ; – Թող
չմոռանալ իր մուրհակը. նա միշտ սովոր էր ինձ վաշխառու-
անուանել. թող չմոռանալ իր մուրհակը. նա սովոր էր լա-
նուն քրիստոնէական մարդասիրութեան՝ ձրիապէս իր դրամը
մարդկանց փոխ տալ. թող զգոյշ կենալ, թող իր մուրհակը
չմոռանալ։

ՍԱԼԱՐԻՆԾՕ. Վահ, ես վստահ եմ, որ եթէ նա օրին
չվճարէ՝ գու չես պահանջի նորա միսը. ի՞նչ բանի է պէտք։

ՇԱՅԼՈԿ. Ի՞նչ բանի. ձկներ որսալու. եթէ ոչնչի յա-
գուբդ չտալ՝ գոնէ իմ վրէժինդրութեանս յագուբդ կտալ:
Նա ինձ անպատուել է, կես միլիոն վնաս է տուել, իմ կո-
րուստներիս վերայ ծիծաղել, շահերս ծաղել է. ազգս ար-
համարհել, առեւտուրս խանգարել, բարեկամներիս պաղա-
ցրել և թշնամիներիս տաքացրել է. և ի՞նչ պատճառով...?
Ես հրէալ եմ. միթէ հրէան աչքեր չունի. միթէ հրէան ձեռ-
քեր չունի. գործարաններ, անդամներ, զգալարանքներ, զգա-
ցումներ, կրքեր չունի. միթէ նա չէ սնւում նոյն կերա-
կրով, չէ վիրաւորուում նոյն զէնքերից, չէ ենթարկուում նոյն
հիւանդութեանց. չէ բժշկուում նոյն միջոցներով. չէ շոգուում
կամ չէ մրսում նոյն ամառով և նոյն ձմեռով՝ որպէս քրիս-
տոնեան: Երբ մեզ ծակում են ասեղով, արիւն գուրս չէ գա-
լիս. երբ մեզ խտաղում էք, մենք չենք ծիծաղուած. եթէ մեզ
թունաւորէք, չենք մեռնի. և եթէ մեզ կեղէքէք, չպէտք է

վրէժինդիր լինինք: Եթէ ամեն այլ բանի մէջ ձեզ նման
ենք՝ ուրեմն այդ բանի մէջ էլ ձեզ նման կլինինք: Երբ հրէ-
ան քրիստոնէին կեղեքում է, ո՞րն է նորա մարդասիրութիւնը.
– վրէժինդրութիւն: Երբ քրիստոնեան կեղեքում է մի հրէ-
ալի, ի՞նչ անէ նա՝ եթէ կամենալ քրիստոնէի օրինակին հե-
տեւելլ—վրէժ: Այն չարութիւնը որ դուք ինձ սովորացնում
էք՝ ես էլ հէնց նոյնն եմ գործ դնելու: Հողը գլխիս, եթէ
վարժապետից անց չկենամ:

(Մտնում է մի ծառայ):

ԾԱԽԱՅՅԾ. Պարոններ, իմ տէր Սնտոնիօն իր տանն է, և
ցանկասնում է ձեզ երկուսիդ հետ խօսել:

ՍԱԼԱՐԻՆԾՕ. Մենք էլ ամեն տեղ նրան էինք փնտուում:
ՍՈՂԱՆԻԾՈ. Ահա գալիս է նոյն ցեղից մի այլ մարդ.
անկարելի է մի երրորդ գուգակից գտնել, եթէ միայն սա-
տանան ինքն էլ հրեայ չդառնայ:

(Սոլանիօ, Սալարինօ եւ ծառան դուրս են զնում):

(Մտնում է Տիւբալ).

ՇԱՅԼՈԿ. Ի՞նչ կայ, Տիւբալ, ի՞նչ լուր ծենովալից. գտել
ես իմ աղջկաս:

ՏԻՒԲԱԼ. Ես շատ տեղեր գնացի, ուր նորա մասին տե-
ղեկութիւն տուին ինձ, բայց չկարողացայ նրան գտնել:

ՇԱՅԼՈԿ. Բահ, բահ, բահ. աղամանդս գնաց. Փրանկփուրտում երկու հաղար գուկատով էի գնել: Մինչև
ալժմ անէծք չէր իջած մեր ազգի գլխին. ես մինչև այժմ
անէծք չէի զգացել. – երկու հաղար գուկատ միայն աղա-
մանդը. և դեռ ուրիշ թանկագին, անգին գոհարներ: Երա-
նի թէ աղջկոս ոտքերիս առաջ մեռած լինէր, և այդ գո-
հարները՝ նորա ականջին լինէին. երանի թէ ոտքերիս առաջ
պատանած լինէր, և ոսկիներս նորա դագաղի մէջ լինէին:
Ոչ մի լուր չկայ նորանից. ոչինչ. և չգիտեմ որքան էլ
ծախք է եղել խուզարկութեանց համար. վահ. վնաս վնասի
վերալ. գողը այս ինչքան տարաւ, և այս ինչքան էլ գնաց
գողին գտնելու համար. և ոչ մի գոհացում, ոչ մի վրէժ:

Օ՛հ, ձախորդութիւն չմնաց, որ գլխիս չգայ. Հառաջներ չկան, որ իմ կը քից դուրս չելնեն. արցունքներ չկան, որ ես չթափեմ:

ՏիհիթԱլ. Ուրիշ մարդիկ էլ կան, որ տարաբախտ են. Անտոնիօն, ինչպէս լուս եմ, զենովայում...

ՇԱՅԼՈԿ. Ի՞նչ, ի՞նչ, ի՞նչ. տարաբախտ, տարաբախտ: ՏիհիթԱլ. Մի նաւ է կորցրել, որ Տըիպովիսից էր գալիս: ՇԱՅԼՈԿ. Փառք Աստուծոյ, փառք Աստուծոյ: Ճշմարիտ է, ճշմարիտ է:

ՏիհիթԱլ. Ես խօսեցի մի քանի նաւաստիների հետ, որոնք նաւաբեկումից ազատուել էին:

ՇԱՅԼՈԿ. Շնորհակալ եմ, իմ բարի Տիւբալ. լաւ լուր ասացիր, լաւ լուր. հա, հա, որտեղ. զենովայում:

ՏիհիթԱլ. Ես լսեցի որ ձեր աղջիկը զենովայի մէջ մի գիշերուայ ընթացքում ծախսել է ութսուն դուկատ:

ՇԱՅԼՈԿ. Դաշոյն խրեցիր սրտիս մէջ. ես էլ չեմ տեսնի իմ ոսկին. ութսուն դուկատ մէկ նիստի մէջ. ութսուն դուկատ:

ՏիհիթԱլ. Ինձ հետ Վենետիկ եկան Անտոնիօի մի քանի պարտատէրերը. նոքա երդուում էին, որ Անտոնիօն ոչ մի ճար չունի՝ բացի սնանկանալուց:

ՇԱՅԼՈԿ. Նատ ուրախ եմ. ես նրան կտանջեմ, ես նրան կչարչարեմ: Նատ ուրախ եմ:

ՏիհիթԱլ. Նորանցից մէկը ինձ մի մատանի ցոյց տուաւ, որ նա ստացել էր ձեր աղջկանից մի կտպկի փոխարէն:

ՇԱՅԼՈԿ. Վայ գալ գլխին. դու ինձ չարչարում ես, Տիւբալ. դա իմ փերուզան էր. ես այն ստացել էի Լիալից, երբ դեռ ամուրի էի: Ես այդ մատանին չէի տայ մի ամբողջ անտառ կտպկների փոխարէն:

ՏիհիթԱլ. Բայց անկասկած Անտոնիօն սնանկացել է:

ՇԱՅԼՈԿ. Ալո՞, ճիշտ է, շատ ճիշտ է: Գնա Տիւբալ, գնա ինձ համար մի պաշտօնակալ վարձիր. տասն և հինգ օր ժամանակից առաջ խօսիր նորա հետ. եթէ նա չկարո-

ղանալ դրամը վճարել՝ ես ուզում եմ նորա սիրու կտրել հանել. որովհետև եթէ նա Վենետիկում չլինի՝ այն ժամանակ ինչպէս ուզեմ՝ այնպէս առևտուր կանեմ: Գնա, Տիւբալ, և եկ մեր սինագօգում գտիր ինձ. գնա, բարի Տիւբալ. մեր սինագօգում, Տիւբալ:

(Դուրս են զնում).

ՏԵՍԱՐԱԿԱՆ Բ.

ԲԵՂՄՈՆՏ. Մի սենեակ Պորցիայի տանը.

Մանում են ԲԱՍՍԱՆԻՕ, ՊՈՐՑԻԱ, ԳՐԱՑԻԱՆՈ, ՆԵՐԻՍՍԱ. և սպասարկեր. արկղերը դրուած են դուրս:

ՊՈՐՑԻԱ. Աղաջում եմ ձեզ, յետաձրգեցէք,
Եւ ըսպասեցէք մէկ կամ երկու օր
Նախ քան ձոռք զարկէք վիճակախտղին.
Եթէ վըրիպուիք՝ ձեր ընկերութիւնն
Ինձնից կըխլուի, ուրեմն քիչ էլ
Յետաձրգեցէք: Մի բան կայ իմ մէջ,
Որ ինձ ասում է. (Թէև սէր չէ այդ)
Որ ձեզ կորցընել չէի կամենալ.
Եւ ինքներդ գիտէք, որ տաելութիւնն
Սրդպիսի խորհուրդ չէ տալիս երրէք:
Բայց որպէս զի ինձ դուք լաւ հասկանաք՝
(Թէև աղջիկը չունի այլ լեզու
Բացի իր մըտքից), ես կըբաղձայի
Մի երկու ամիս պահել ձեզ այստեղ՝
Նախ քան ինձ համար վիճակ քաշէիք:
Ես կարող էի ձեզ ուսուցանել

Ուղիղ ընտրութիւն անելու ձեզ:
Բայց այդ կը լինէր իմ ուխտըս գըրժել
Եւ ես ուխտադրուժ երբէք չեմ լինի:
Ուրեմըն, գուցէ գուք սըխալ ընտրէք.
Թէ այդպէս անէք՝ ինձ կըզջացնէք
Թէ ինչու համար ուխտադրուժ չեղալ,
Եւ այդ մի մեղք է: Ա՛խ տիդ աչքերը.
Նոքա թովեցին, բաժանեցին ինձ.
Իմ կէսը ձերն է. միւս կէսն էլ ձերն է.
Ես ուզում էի ասել թէ իմն է.
Բայց եթէ իմն է՝ ուրեմըն ձերն է.
Եւ ալսպէս ապա բոլորն է ձերը:
Օ՛հ, այս անպիտան ժամանակները
Պատուար են դընում սեպհականողի
Եւ իր ունեցած իրաւունքի մէջ,
Եւ ձերն եմ թէև՝ դարձեալ ձերը չեմ.
Եւ, (Աստուած չանէ), թէ այդպէս լինի՝ *)
Բախտը թող գընալ դըժոխք, ոչ թէ ես:
Երկար եմ խօսում. բայց դիտումս այն է
Որ ժամանակը երկարացընեմ,
Ուշացնեմ, հեռացնեմ, և յետաձզեմ
Ձեր ընտրութիւնը:

ԲԱՍՍԱՆԻՕ. Թողէք որ ընտրեմ.
Այս վիճակի մէջ ինձելն ինձ համար
Սոսկալի տանջանք է:

ՊՈՐՑԻԱ. Տանջանք, Բասսանիօ.

Ապա ուրեմըն խօստովանուեցէք,
Թէ ձեր սիրոյ մէջ ինչ դաւ կայ խառնած:

ԲԱՍՍԱՆԻՕ. Ոչինչ, բայց միայն անվստահութեան
Ահոելի դաւը, որ իմ սրտիս մէջ
*) Եթէ հակառակ իմ կամքիս, որ ուզում եմ ձերը լինել, վիճակը ինձ մի ուրիշն տալ ապա այդ իմ յանցանքը չէ, ալ բախտինը:

Ծ. թ.

Հ մրդի Երկիւղ է ձըգում, թէ կարժանանամ
Սիրոյ վայելքին: Նոյնչափ կարող է
Խնամութիւն լինել ձեան և կրակի մէջ՝
Որչափ կարող է դաւաճանութեան
Եւ իմ սիրոյ մէջ:

ՊՈՐՑԻԱ. Ա՛հ, վախենում եմ

Որ գուք խօսում էք տանջանքի ներքու,
Ուր մարդ ամեն ինչ բըռնի է ասում:
ԲԱՍՍԱՆԻՕ. Խոստացէք ինձ կեանք, և ես կընդունեմ
Ճշմարտութիւնը ձեզ խօստովանուիլ:

ՊՈՐՑԻԱ. Նատ լաւ, ուրեմըն, խօստովանուեցէք,
Յետոյ ապրեցէք:

ԲԱՍՍԱՆԻՕ. Թէ ինձ ասէիք,
«Խոստովանուեցէք, յետոյ սիրեցէք»՝

Դուք խօստովանքիս բոլոր ամփոփումն
Յախնած կլինէիք: Երջանիկ տանջանք.
Երբ իմ տանջողը սովորեցնում է ինձ
Տալ պատասխաններ փրկութեան համար.

Բայց թող ինձ բախտիս և այս արկղերին
Յառաջ ուրեմըն. դորանց մէկի մէջ
ՊՈՐՑԻԱ.

Ամփոփուած եմ ես. թէ սիրում էք ինձ
Դուք ինձ կըդտնէք: Ուրեմն, Ներիսսա,

Եւ գուք միւսներդ, հեռու կանգնեցէք:
Թող հընչէ անոյշ նըւագածութիւն՝

Երբ նա ընտրում է. որ, եթէ վրիպէ՝
Կարասի նըման վախճան ունենալ

Եւ հոդին վըքէ երաժշտութեամբ:
Սակայն որպէս զի այդ նըմանութիւնն

Աւելի ճըշգրիտ, կատարեալ լինի՝
Պէտք է իմ աչքըս մի գետակ դառնալ,

Եւ մի ջըրալին մահուան անկողին,
Ուր նա կըմեռնի: Իսկ եթէ շահէ՝
Յանժամ ինչ բան է երաժշտութիւնն

Երաժշշութիւնն լայնժամ այն փողն է,
Որ հընչում է բարձր՝ երբ հաւատարիմ
Հըպատակները գըլուխ են թեքում
Մի նորապըսակ արքալի առաջ:
Դա բոլորովին նըման կըլինի
Այն քաղցրահընչիւն նըւագածութեան,
Որ սողոսկում է արևածագին
Գէպի երազուն փեսալի ունկերն,
Կանչելով նըրան գէպի սուրբ պըսակ ¹⁾:
Նա ճեմում է այժմ ոչ նուազ շուքով,
Բայց շատ առաւել սիրազեղ սըրտով ²⁾
Քան թէ Ալկիդէս ³⁾ երիտասարդը,
Երբ զընջեց տուրքը մանկամարդների,
Որ ազիողորմ հեծեծանքներով
Տալիս էր ծրովան ծովալին հրէշին:
Եօ եմ զոհն այստեղ ⁴⁾. Ծիկ այն միւսները՝
Այն հեռուն կանգնած՝ Մարդանեան կանալք,
Որ արտասուաթոր տըրտում դէմքերով
Եկած են դիտել պալքարի ելքը:
Քալիր, Հերկուլէս, ապրիր, ողջ եմ ես:
— Ա՛խ, եօ առաւել մարսափահար եմ
Կոռլին նայելուց, քան թէ դու կոռլից:

(Երաժշշութիւն, այն ինչ Բասսանիօն զնում է արկղերը եւ մտածում):

¹⁾ Մի ակնարկութիւն է սա այն հին սովորութեան, որ փեսալի ննջարանի առաջ, իր ամուսնութեան առաւոտը, երաժշշութիւն էին նուագում: Staliwell.

²⁾ Առաւել սիրազեղ սրտով, նորա համար է ասուած, որ Հերկուլէս ազատեց Հեղիոնին, Լաոմէդոնի աղջկան, ոչ թէ ի սէր օրիորդի, այլ այն ձիանց համար որ նորա հալրը խոստացել էր նորան՝ եթէ իր աղջկան ազատէ ծորալին հրէշից: Clarendon.

³⁾ Ալկիդէս, Հերկուլէսի մի այլ մականունն է: Ծ. Թ.

⁴⁾ Այսինքն եօ եմ Հեղիոնը, որ պիտի արուի ծովալին հրէշին:

1. Սիրոյ ծագումն ուրկից է,
Ուզեղից, թէ սրտից է.
Ասա, ինչպէս է ծընւում
Եւ ինչով է նա սընւում.
Պատասխան տուր, պատասխան:
2. Աչքի մէջ նա ծընւում,
Հայեացքներով է սընւում.
Եւ հէնց իւր իսկ որրանում
Հանգչում է սէրն ու մեռնում:
Թող հընչեցնենք թաղման զանգ
Սիրոյ համար, գինգը դանգ:
Ըսկըսում եմ, գինգը դանգ,
Հընչիր, զանգակ, գինգը, դանգ:

ԲԱՍՍԱՆԻՕ. Արտաքին տեսքը միշտ խաբուսիկ է.
Աշխարհն անդադար խաբում է զարդից:
Օրէնքի տուաջ՝ կար արդեօք մի դատ
Թէկուզ շատ աղտոտ և շարաւալից,
Որը հաճելի ձայնի հրապուրով
Չըփարագուրէ իր տըգեղ տեսքը:
Նոյնպէս կրօնի մէջ, եղել է արդեօք
Որժոխքի արժան մի մոլորութիւն,
Որը մի խոժոռ, խըստամբեր ճակատ
Չըսըրբագործէ, և չարդարացնէ
Մի վկայութեամբ, և չըթագցընէ
Կոպիտ ներքինը պերձ զարդարանքով:
Չըկայ մոլութիւն այնքան ակներև
Որ չըզարդարէ իր արտաքինը
Առաքինութեան սրևէ ցոլցով:
Ուրչափի երկչոտներ, որոնց սրտերը

Խարդախ են որպէս աւազեալ սանդուխք *)։
Դարձեալ կըրում են իրանց կըզակին
Մի Հերկուլէսի կամ սէգ Արէսի
Արժանի մօրուք. իսկ ներսը փընտռէք՝
Կաթի պէս ճերմակ է նոցա լեարդը։
Նոքա կըրում են արութեան ցոյցեր,
Իրանց ահարկու դարձնելու համար։
Ակնարկ ձըքեցէք գեղեցկութեան վրալ **).
Եւ դուք կըտեսնէք որ նա գընուած է
Զարդարանքների ծանրութեան գընով։
Ալդպէս, բընութեան մէջ մի հըրաշք է այն,
Որ կանալք որքան ծանր են պճնանքով։
Այնքան թեթև են բարքով և վարքով։
Ալսպէս, այն գանգուր և օձապլտոյտ
Ոսկեալ հիւսերը, որոնք հողմի հետ
Այնքան խօլական պարեր են բոնում,
Սիրուն համարուած մի կընոջ գլխին՝
Նոքա, մենք գիտենք, լաճախ օժիտն են
Մի երկրորդ գլխի. և այն գագաթը,
Որ նրանց ծնել է՝ արդէն պառկած է
Գերեզմանի մէջ։
Ալսպէս պըճնանքը պատիր եզերքն է
Մի վըտանգաւոր և խարդախ ծովի.
Շըքեղ շըդարշն է, որ քօղարկում է
Հընդիկ գեղուհու սե կերպարանքը.
Այն առերւոյթ ճշմարտութիւնն է,
Որով խորամանկ մեր ժամանակը
Թակարդ է ձրգում իմաստուններին։
Ահա թէ ինչու, ով փայլուն ոսկի,

*) Ակսինքն տեղի են տալիս աղն մարդկանց ոտքի տակ, որոնք վստահանում են կանգնել նոցա վրալ։ Ծ. Թ.

**) Արուեստական գեղեցկութեան վրալ։ Ծ. Թ.

Կարծըր կերակուր Միդասի *) համար,
Քեզ չեմ կամենում։
(Յոյց տալով արծաթէ արկղը).
Ոչ էլ քեզ, արծաթ,
Գունատ և նըւաստ միջնորդ՝ մարդկանց մէջ։
Բայց դու, խեղճ կապար, դու, որ աւելի
Ըսպառնալիք ես, քան թէ մի խոստում
Գունատութիւնը գըրաւում է ինձ
Աւելի՝ քան թէ պերճաբան խօսքեր.
Ես քեզ եմ ընտրում։ Թող հետևանքը
Ցընծութիւն լինի։
ՊՈՐՑԻԱ. Ա.իս, ինչպէս բոլոր միւս լուզմունքները
Թուչում են օդում և անյայտանում։
Տարակուսալից մըտածութիւններս,
Աճապարալից լուսահատութիւն,
Սարսըռուն երկիւլ և նախանձն անարդ,
Կանանչ աչքերով։ — Օ՞ն ուրեմն, ով սէր,
Չափաւոր եղիր, հիացքըդ մեղմիր.
Չափով շաղ տուր դու քո ցընծութիւնը,
Անունեւ նըւազեցրու ծալրայեղութիւնդ.
Քո օրհնութիւնը խիստ շատ եմ ըզգում.
Քըչացրու նըրան, որ չըխեղդէ ինձ։
ԲԱՍՍԱՆԻՕ. Ա.լս ինչ եմ գըտնում։ (Բանալով կապարեայ արկղը).
Սիրուն Պորցիայի կենդանագիրը.
Ո՞ր կիսաստուածն է ալսքան մօտեցել
Նախատիպարին։
Միթէ շարժւում են նորա աչքերը.
Թէ սեեռուելով իմ բիբերիս վրայ,

*) Միդաս Փոխոգիալի թագաւորն էր. նա Բաքոսից այն չսորհն, ստացաւ, որ ինչ բանի որ ձեռք զարկէ՝ ոսկու փոխարկուի. ալդ պատճառով քիչ էր մնացել որ քաղցածութիւնից մեռնէր, որովհետեւ ամեն սնունդ անգամ, որին դպչում էր՝ ոսկու էր փոխարկում։ Ծ. Թ.

Նարժում են թըլտում: Բայց են շըրթունքը
Եւ բաժանուած են մեղրածոր շընչով.
Երբէք այսպիսի մի անոլշ պատնէշ
Զէ զատել երկու այսքան անուշիկ
Բարեկամների. նորա հերքի մէջ
Նըկարչի ձեռքը մի սարդ է դարձել,
Եւ նա հիւսել է ոսկեգոյն մի ծամ'
Ուր մարդկանց սըրտերն ընկնում են թակարդ
Աւելի արագ՝ քան մըրժուկները
Սարդի ոստայնում: Խսկ այս աչքերը.
Ի՞նչպէս է տեսել, որ նըկարել է:
Երբ միայն մէկը աւարտել է նա,
Այդ միակ աչքը կարծեմ ալնքան ոլժ
Պէտք է ունենար՝ որ կըտիրանար
Նըկարչի երկու ապշած աչքերին
Եւ անգուգակից կըմընար ինքը:
Բայց տես, որքան որ իմ խեղճ գովեստը
Մի անարդանք է նորա ըստուերին՝
(Նըրտն այնքան ցած գընահատելով),
Նոյնչափ ըստուերը կաղ է՝ լետամնաց
Իր բընատիպից: — Ահա մակագիրն,
Բախտիս վըճիռը և ամփոփումը.

Դու որ արտաքին տեսքով չընտրեցիր՝
Բախտը քարի է, ընտրութիւնը լաւ.
Դո՞ւ եղիր ուրեմն. այլ բան մի՛ ինդընը,
Երբ այսպիսի բախտ քեզ վիճակ ելաւ:
Էլթէ զո՞ւ ես դու այս բախտով անգին
Եւ երջանիկ ես այս երանութեամբ՝
Դարձիր, համբոյր տուր սիրածո էակին,
Տէր եղիր նորան բախտաւորութեամբ:
Գեղեցէկ գըրուած. — չըքնաղ օրիորդ,
Եթէ թոյլ կըտաք. (Համբուրում է նրան):

Այս հըովարտակով
Գալիս եմ ես ալժմ տալ և ըստանալ:
Երբ որ մըրժում են երկու թեկնածու
Եւ մի մըրժանակ պէտք է ըստանան,
Մէկը լոելով ծափահարութիւն
Եւ միահամուռ կեցցէների ձայն՝
Տեսնում է թէ ինքն արժանացել է
Մարդկունց հաճութեան. բայց գեռ շըփոթուած,
Աչքերն որորուն, կասկածի մէջ է,
Թէ այդ կեցցէներն իրանն են թէ ոչ:
Այսպէս, երիցը գեղանի տիկին,
Ահա կանգնած եմ և ես ձեր հանդէպ,
Երկմիտ, թէ արդեօք տեսածը ճէշդ է.
Մինչև ինքները կընքէք, հաստատէք,
Եւ վաւերացնէք:

ՊՈՐՑԻԱ. Սինիօր Բասսանիօ,

Դուք ինձ տեսնում էք ճիշդ ինչպէս որ եմ.
Ես լոկ ինձ համար չէի կամենալ
Փառասէը լինել բաղձանքներիս մէջ,
Եւ իմ եղածից բարձրին նըկըրտել.
Սակայն ձեզ համար ես կըբաղձափ
Որ քըսան անգամ եռապատկէի
Իմ արժանիքը, և հազար անգամ
Աւելի շըքնաղ կուգէի լինել,
Տասն հազար անգամ աւելի հարուստ:
Եւ ձեր յարգանքին միայն արժանի
Լինելու համար՝ կըկամենալի
Առաքինութեամբ և գեղեցկութեամբ,
Բարեկամներով և հարըստութեամբ
Ամեն հաշուից դուրս օժտըւած լինել:
Բայց իմ եղածիս համագումարը
Չընչին գումար է, որ ամբողջն հաշուած,
Նըշանակում է մի անուս աղջիկ,

Անվարժ և անփորձ, երջանիկ նրանով,
Որ գեռահաս է և սովորելու
ժամանակ ունի. և երջանկագոյն՝
Որ նա չէ ծընուել այնքան բըթամիտ՝
Որ սովորելու անկարող լինի.
Բայց ամենից շատ, երջանիկ նրանով
Որ նա կարող է իր հեզ բընութը
Չեր ձեռքը յանձնել, որ ուղղէք նըրան
Որպէս նորա տէր, և կառավարել
Որպէս թագաւոր: Այսուհետ անձըս
Եւ բոլոր, ինչ որ ինձ է պատկանում՝
Չեզ է փոխանցուած. ցարդ՝ ես տէր էի
Այս հոյակապ տան, այս ծառաներիս,
Եւ իմ անձիս վրայ ազատ թագուհի.
Իսկ արդ, այս տունը, այս ծառաները
Եւ այս իմ անձը ձերն են, ով իմ տէր:
— Տալիս եմ դորանք այս մատանիով,
Որ եթէ երքէք հեռացնէք ձեզնից,
Կորցընէք, կամ տաք՝ դա կըգուշակէ
Չեր սիրոյ մահը, և ինձ թոյլ կըտայ
Չեզ ամբաստանել:

ԲԱՍՍԱՆԻՕ.

Ազնիւ օրիորդ,
Դուք ինձ զըրկեցիք ամենայն խօսքից.
Արիւնըս միայն՝ երակներիս մէջ՝
Խօսում է ձեզ հետ. և իմ հոգուս մէջ
Կայ մի այնպիսի խառնաշփոթութիւն,
Որպիսին սիրուած մի թագաւորի
Գեղեցիկ խօսած մի ճառից յետոյ
Տիրում է մի խուռն և ըսքանչացած
Ամբոխի վերայ, ուր ամենայն ինչ
Միմեանց կըցուելով՝ քառս են կազմում,
Քառս ցընծութեան թէ արտայալտուած,
Թէ չարտայալտուած...

Երբ այս մատանին այս մատից դուրս գայ՝
Յայնժամ և կեանքը դուրս կըդայ ինձնից,
Եւ այն ժամանակ ասա համարձակ.
Բասսանիօն մեռաւ:

ՆԵՐԻՍՍԱ.

Սինիօր և տիկին,

Այժըմ մեր հերթն է, մեր, որ տեսնում ենք
Մեր փափաքների իրագործումը,
Որ աղաղակենք «Ուրախութիւն ձեզ.

«Ուրախութիւն ձեզ, սինիօր և տիկին»:

ԳՐԱՑԻԱՆՈ. Սինիօր Բասսանիօ և տղնիւ տիկին,
Ես ձեզ մաղթում եմ ամեն ցընծութիւն
Հստ ձեր ցանկութեան. քանզի վըստահ եմ
Որ ձեր իղձերը ինձ հակառակ չեն.
Եւ երբ դուք տօնէք ձեր սիրոյ ուխտը՝
Չեզնից խընդրում եմ, որ ինձ էլ թոյլ տաք
Միևնոյն առթիւ ամուսնալու:

ԲԱՍՍԱՆԻՕ. Իմ բոլոր սըրտով, եթէ կարող ես
Քեզ մի կին գըտնել:

Շընորհակալ եմ.

Դուք ինձ շնորհել էք արգէն իմ հարսը.
Իմ աչքերս գիտեն նոյնչափ շուտ տեսնել՝
Որչափ որ ձերը. դուք տիկնոջ տեսաք,
Ես ըսպասուհուն. դուք էլ սիրեցիք,
Ես էլ սիրեցի. յապաղումները
Չեն ինձ հաճելի, որչափ չեն և ձեզ.
Չեր բախտը կախ էր այն արկղիկներից,
Իմս էլ նոյնպէս էր, ինչպէս երեաց:
Ես այնքան սաստիկ սիրախօսեցի՝
Մինչեւ քրտնեցալ, այնքան կըրկնեցի
Սիրոյ երդումներ՝ որ քիմքս ցամքեց.
Վերջ ամենայնի այս գեղեցկուհուց
Ես խոստում առի (եթէ խոստումը
Տեական բան է), որ նա սիրէ ինձ,

Պալմանով միալն, որ բախտ ունենաք
Նորա տիրուհու սէրն ըստանալու:
ՊՈՐՑԻԱ. ձիշտ է, ներկսաա:
ՆԵՐԻՍՍԱ.

Ալ՛, օրիորդ.

Միալն եթէ տաք ձեր հաճութիւնը:
ԲԱՍՍԱՆԻՕ. Իսկ դուք, Գրացիանօ, անկեղծ էք խօսում:
ԴՐԱՑԻԱՆՕ. Ալ՛, ճշմարիտ:
ԲԱՍՍԱՆԻՕ. Մեր հարսանիքին
Պատիւ կը լինի ձեր ամուսնութիւնն:
ԴՐԱՑԻԱՆՕ. (Ներիսսային) Մենք սորանց հետ գրազ կը
գանք. ով որ առաջ տղայ ունենայ՝ հազար դուկատ առնէ
միւսից *): Բայց այս ով է գալիս. Լորէնցօն, և իր հե-
թանոսուհին. Բնչ. և իմ հին Վենետիկցի բարեկամ Սո-
լանիօն:

(Մտնում են Լորէնցօ, Զէսիկա եւ Սոլանիօ),

ԲԱՍՍԱՆԻՕ. Բարե՛, Լորէնցօ, բարե՛, Սոլանիօ,
Եթէ ալստեղի նոր իրաւունքը
Ինձ թոյլ է առաջ ձեր գալուստն ալստեղ
Շնորհաւորելու: — Սնուշիկ Պորցիա,
Ձեր թոյլտըւութեամբ՝ իմ հալրենակից
Նաև սըրտակից բարեկամներիս
Ես պէտք է ասեմ. «բարով էք եկել»:

ՊՈՐՑԻԱ. Նոյնպէս էլ և ես. բարով էք եկել:
ԼՈՐԷՆՅՈ. Ես շնորհապարտ եմ ձեր ազնըւութեան:
— Գալով ինձ, սինիօր, մըտագիր չէի
Ձեզ մօտ հիւր գալու. բայց ճանապարհին
Ես հանդիպեցայ մեր Սոլանիօին,
Եւ ալնքան սաստիկ ըստիպեց նա ինձ
Իր հետ ալստեղ գալ, որ ես բացասել
Չըկարողացայ:

ՍՈԼԱՆԻՕ. ձիշտ է, ազնիւ տէր. եմ ըստիպել.

*) Ալստեղ դուրս է թողուած մի անթարզմանելի և ոչ շատ
պատշաճ սրախօսութիւն,

Եւ դորա համար պատճառ ունէի:
Սինիօր Անտոնիօն ձեզ ողջունում է:
(Սինամակ է տալիս Բասսանիօյին)*
ԲԱՍՍԱՆԻՕ. Նախ քան թէ բանամ ես այս նամակը՝
Խընդրեմ ասէք ինձ, Բնչպէս է արգեօք
Դիմ բարեկամը:
ՍՈԼԱՆԻՕ. Հիւանդ չէ, սինիօր՝ եթէ ոչ հոգով.
Եւ ոչ էլ առողջ՝ եթէ ոչ հոգով *):
Նորա նամակը ձեզ լաւ կը լաւ կը լաւ
Նորա վիճակը: (Բաց է անում նամակը)*

ԴՐԱՑԻԱՆՕ. Արի, ներկսաա,
Շոյիր, փալփալիր ալս օտարուհուն
Եւ բարի գալուստ մաղթիր դու նորան.
Զեռքըդ, Սոլանիօ, Բնչ լուր Վենետիկից.
Ինչպէս է արգեօք այն արքայական
Վաճառականը **), բարի Անտոնիօն.
Գիտեմ շատ ուրախ լինելու է նա՝
Եղր լուրը լըսէ մեր յաշողութեան:
Մենք ենք Յասոններ, և ոսկի գեղմը
Մենք ենք ձեռք բերել ***):

ՍՈԼԱՆԻՕ. Հազար երանէ
Թէ ձեռք բերէիք այն ոսկի գեղմը՝
Որ նա կորցըել է:
ՊՈՐՑԻԱ. Շատ տըխուր գոյժեր
Գլըրուած են տնշուշտ արդ նամակի մէջ,

*) Ոչ էլ առողջ է, եթէ ոչ այն քաջալերութեամբ, որ պէտք է
ստանակ իր հոգեկան կորովից, Eccles.

**) «Արքայական վաճառական» միջին դարերի մէջ նշանակում
էր այն վաճառականը, որ թագաւորի հաշուին գործառնութիւններ
էր անում:

***) Ականքն Անտոնիօն իր նաւերով ոսկի գեղմը ձեռք չէ բե-
րել, այլ մենք ենք Յասոնը, որ ալստեղ մեր ուզածը ձեռք ենք
բերել, Douce.

Որ Բասսանիօյի թըշերն այս կերպով
Գունաթափուում են. մի լաւ բարեկամ
Մեռած է գուցէ. այլապէս, ոչինչ
Զէր կարող այսքան դէմքըն այլալել
Մի կորովասիրտ ինքնազուսպ մարդու:
Ի՞նչ. աւելի՞ վատ, և աւելի՞ վատ.
Թոյլ տըւէք, Բասսանիօ. ես էլ ձեր կէսն եմ,
Եւ պէտք է լըրիւ կէսն էլ ինձ հասնի
Այն ամեն բանի՝ ինչ որ այս թուղթը
Բերեց ձեզ համար:

ԲԱՍՍԱՆԻՕ. Ո՞վ անոյշ Պորցիա,
Այստեղ կան խօսքեր այնքան բօթաբեր՝
Որպիսին երբէք չէ եղծել մի թուղթ:
Չըքնաղ օրիորդ, երբոր սըրտիս սէրն
Առաջին անդամ ես ձեզ յալտնեցի՝
Առանց ծածկելու ձեզ իմաց տըւի,
Որ իմ մի միակ հարըստութիւնըս
Երակներիս մէջ վագողն է միայն,
Այն է, որ ունիմ մի ազնիւ ծագում:
Ես այդ ժամանակ ճիշդը խօսեցի.
Բայց, այսու հանդերձ, սիրուն օրիորդ,
Ես ինձ առ ոչինչ գընահատելով՝
Դարձեալ կըտեսնէք թէ ինչ աստիճան
Սընապարծ էի: Ես ձեզ ասացի
Թէ ոչինչ չունիմ. պէտք է ասէի,
Թէ ոչընչից էլ գեռ պակաս ունիմ:
Ես ինձ գրաւ գըրի բարեկամիս մօտ,
Եւ գըրաւ գըրի այդ բարեկամիս
Ամենից անհաշտ իր թըշնամու մօտ՝
Որ կարողացաւ մի քիչ գրամ գըտնել:
Ահա մի նամակ, տիկին. այս թուղթը
Իմ բարեկամիս մարմինն է կարծես,
Եւ ամեն մի բառ՝ լայն-բերան մի վէրք,

Ուսկից հոսում է արիւնն իր կեանքի:
Սակայն, Սոլանիօ, ճըշմարթ է այս.
Սըդեօք ամեն ինչ որ ձեռնարկել էր
Անյաշող եղաւ. ոչինչ հետ չեկաւ
Ոչ Տրիպոլիից, ոչ Մեքսիկոյից,
Ոչ Անգլիայից, ոչ Լիսաբոնից,
Ոչ Բէրբէրիայից, ոչ Հնդկաստանից.
Սըդեօք ոչ մի նաւ խոյս տալ չըկարաց
Այն սընանկաբեր քարաժայուերից:
ՍՈՒԼԱՆԻՕ. Ոչ մէկը, տէր իմ. բայց եթէ այսօր
Հրէայի պարտքը յետ տալու համար
Դրամ էլ ունենար՝ հրէան չէր առնի:
Երբէք չեմ տեսել ես մի արարած
Մարդկային դէմքով՝ որ այդ աստիճան
Անյագ տենչանքով հետամուտ լինէր
Մարդու կործանման: Ցերեկ ու գիշեր
Մի րոպէ դուքսին դադար չէ տալիս.
Եւ, ասում է նա, եթէ զըլանաք
Իրաւունք տալ ինձ՝ եղծած կըլինիք
Հանրապետութեան ազատութիւնը:
Քան վաճառական, և գուքսն էլ անձամբ,
Բոլոր մեծաշուք աւագների *) հետ,
Ամեն ջանք արին համոզելու նրան,
Ոչ ոք չըկարաց նըրան կասեցնել
Իր չար պահանջից: Նա միշտ գոչում է.
«Տուգանք, պարտաթոնալթ, արդար դատաստան»:
Երբ ես տակաւին նորա մօտն էի՝
Լըսեցի որ նա երգում էր անում
Իր Քուշ և Տիւբալ **) տոհմակիցներին,

*) „Magnificoies“ այն տիտղոսն է, որ տալիս էին Վենետիկի առաջնակարգ մարդկանց, և մենք թարգմանեցինք «Աւագ» բառով.

**) Քուշ և Տիւբալ հրէական անումներ են. աես Մննդոց գիրք գլ. ժ. համար 2 և 6.

Թէ ես աւելի ուրախ կըլինիմ
Այն Անտոնիօիի միսը ըստանալ.
Քան թէ գումարի քըսան անգամը.
Եւ վըստահ եմ, տէր, որ եթէ օրէնքն,
Իշխանութիւնը և դատարանը
Զարգելեն նորան՝ խեղճ Անտոնիօիի
Բանը շատ վատ է:

ՊՈՐՑԻԱ (Քասսանիօյին). Եւ ձեր սիրելի բարեկամն է ալդ,
Որ ալսպէս սաստիկ վլտանգի մէջ է:
ԲԱՍՍԱՆԻՕ. Իմ ամենից սերտ բարեկամս է նա,
Ամենաբարի, անձանձիր մարդն է,
Եւ միշտ տրամադիր բարիք գործելու.
Մի մարդ, որի մէջ այնպէս փալում է
Հին հոռվմայեցու պատուազգացութիւնն՝
Որպէս ոչ մի ալլ շընչաւորի մէջ

ՊՈՂ Իտալիայում:
Բայց որքան գումար պէտք է հրէալին:
ԲԵՐԵՔ հազար դուկատ, և փոխարէն իմ:
Ի՞նչ, այդքան միայն. վեց հազար տըւէք:
Եւ ոչընչացըէք նորա մուրհակը.

Կըրկնապատկեցէք վեց հազար ոսկին,
Եռապատկեցէք, միայն մի թոյլ տաք
Որ ալդքան ազնիւ մի բարեկամի
Մէկ մազը կորչք՝ Բասսանիօիի
Սըխալման համար: Բայց նախ և առաջ՝
Եկեղեցի գնանք. անուանեցէք ինձ
Զեր կողակիցը. և յետոյ իսկայն
Ճանապարհուեցէք դէպի Վենետիկ
Զեր ալդ սիրելի բարեկամի մօտ:
Քանզի գուք երբէք անհանգիստ հոգւով
Զըպէտք է ննջէք Պորցիալի կողքին,
Եւ այնքան ոսկի պէտք է վեր առնէք:
Որ կարողանաք ալդ չընչին պարտքի

Քըսան անգամը վճարել նորան:
Իսկ երբ վլճարէք՝ այնուհետ կառնէք
Զեր բարեկամին, կըբերէք այստեղ.
Եւ, ըսպասելով, ես և Ներիսսան,
Իմ ըսպասուհիս, կապրենք միտսին,
Որպէս երկու կոյս և երկու ալրի:
Դէհ, եկէք գընանք, գուք պէտք է մեկնէք
Միկնոյն օրը որ կամուսնանաք:
Ալժըմ ձեր բոլոր բարեկամներին
Լաւ ընդունեցէք. ուրախ ձեացէք:
Արդ որ գընուած էք ալսքան թանկ գընով
Պէտք է ես էլ ձեզ երբե թանկ սիրեմ.
Բայց կարգացէք ինձ ձեր բարեկամի
Գըրած նամակը:

ԲԱՍՍԱՆԻՕ (Կարդալով). Սիրելի Բասսանիօ. իմ քոլոր
նաւերը ոչնչացան. պարտատէրներս անգութ են ղաղնում.
Հարստութիւնս շատ չնչին է. հրէալին տուած մուրհակս
անվճար է մնացած. եւ քանի որ, այդ պարտքը վճարելով,
ես կենդանի չեմ մնայ՝ ուրեմն իմ եւ ձեր մէջ եղած քո-
լոր հաշիմերը վերջացած են, միայն թէ կարողանամ մեռ-
նելուց առաջ տեսնել ձեզ. բայց դարձեալ դուք այնպէս
արէք՝ ինչպէս ձեզ հածոյ է. Եթէ ձեր բարեկամնութիւնը
ձեզ չէ ստիպում գալ՝ թող իմ նամակը ձեզ շստիպէ:

ՊՈՐՑԻԱ. Ա՛խ, իմ սիրական, գործըդ աւարտիր
Եւ իսկոյն մեկնիր:

ԲԱՍՍԱՆԻՕ. Փանի որ գուք ինձ
Հրաման էք տալիս իսկոյն մեկնելու՝
Պէտք է ըշտապեմ. բայց մինչև յետ գամ,
Ոչ մի անկողին չէ կարող երբէք
Յապաղեցնել ինձ, և ոչ մի հանգիստ
Չէ կարող մեր մէջ խոչընդոտ լինել:
(Պուրս են գնում)

ՏԵՍԱՐԱՆ

Մանում են ՇԱՅԼՈԿ, ՍՈՒԱՆԻՕ, ԱՆՏՈՆԻՕ և բանտապահը.

ՇԱՅԼՈԿ. Բանտապահ, նայիր, լաւ հըսկիր վերան.
Ինձ հետ մի խօսիր գըթութեան մասին.
Սա այն լիմարն է, որ ձըրիտապէս
Դրամ էր փոխ տալիս: Բանտապահ, արթուն:
Բայց մէկ լըսիր ինձ, ով բարի Շալոկ:
Ես պահանջում եմ մուրհակըս միայն.
Զըրէտք է խօսես իմ մուրհակի դէմ:
Երդմամբ երդուել եմ որ պէտք է առնեմ
Ինչ որ գըրուտած է իմ մուրհակիս մէջ:
Դու սովոր էիր առանց պատճառի
Ինձ շուն անուանել. Հիմա որ շուն եմ
Ապա ըզգոյշ կաց իմ ժանիքներից:
Դուքսը կըտայ ինձ իմ իրաւունքը:
Ես զարմանում եմ, ով չար բանտապահ,
Որ այդ աստիճան դու անխելք մարդ ես,
Որ նորա խօսքով նորա հետ բանտից
Ելնում շըջում ես:
Խընդրեմ, լըսիր ինձ:
Ես իմ մուրհակըս պէտք է ըստանամ.
Խոկ քո խօսքերըդ լըսել չեմ ուզում.
Ես պահանջում եմ մուրհակըս միայն,
Ուրեմն ալսուհետ ինձ հետ մի խօսիր.
Ոչ, ես չեմ լինի փափկասիրտ և կոյր
Այն ախմարներից, որոնք շարժելով
Իրանց գըլուխը, և ամոքուելով
Եւ հառաջելով տեղի են տալիս

Քրիստոնեաների թախանձանքներին:
Մի հետեւիր ինձ. խօսել պէտք չէ ինձ.
Ես իմ մուրհակըս պէտք է ըստանամ:
ՍՈԼԱՆԻՕ. Երբէք ալդպիսի անողորմ մի շուն
Դեռ չէ ըընակուտած ադամորդու հետ:
ԱՆՏՈՆԻՕ. Թողէք այդ մարդուն. Էլ չեմ կամենում
Զուը աղերսանքով հետեւել նորան.
Նա կեանքս է ուզում, և գիտեմ ինչու.
Շատ անգամ նորա պարտապաններին,
Որոնք եկել են և ինձ թախանձել
Ես ազատել եմ նորա ճիրանից.
Եւ ալդ պատճառով ատում է նա ինձ:
ՍՈԼԱՆԻՕ. Ես կասկած չունիմ որ դուքսը երբէք
Չի վաւերացնի գըրուտած պալմանը:
ԱՆՏՈՆԻՕ. Դուքսը չէ կարող օրէնքը լուծել.
Եթէ նա ժըխտէ ալն իրաւունքը,
Որ վայելում են օտար երկրացիք
Մեր մօտ, Վենետիկում՝ ապա պետութեան
Արդարութիւնը եղծած կըլինի.
Քանզի քաղաքի ըոլոր վաստակը
Եւ առեստուրը այժմ կախուած են
Օտար ազգերից: Ուրեմն, գընանք.
Այս իմ վըշտերը և կորուստները
Ինձ այնպէս սաստիկ հիւծել մաշել են:
Որ մի ֆունտ միս էլ գուցէ չունենամ
Որ վաղն արիւնուշտ իմ պարտատիրոջ
Պարտքըս վրձարեմ: — Գընանք, բանտապահ.
Դու աղօթք արտ որ Բասսանիօն գայ,
Եւ տեսնէ ինչպէս ես նորա պարտքը
Հատուցանում եմ. մնացորդը փոյթ չէ:
(Դուրս են զնում):

Հայոց ամուսնութեան գիտականական
հայ և զան ընօսք համ պատուի առ
շահաւանց **ՏԵՍԱՐԱՆ** առ Փայտ առ
առ ին նպարան մայրէր գլուխ
առ առ առ առ առ առ առ առ առ
Մանում ևն ՊՈՐՅԻԱ, ՆԵՐԻՍՍԱ, ԼՈՒԷՑՅՈ, ԶԷՄԻԿԱ և ԲԱԼ-
ԹԱԶԱՐ:

ԼՈՐԷՆՅՈ. Տիկին, թոյլ տըւէք ձեր առաջ ասեմ.
Գուք ունիք մի ճիշդ, վլսեմ իդէալ
Աստուածանըման բարեկամութեան.
Եւ զորա զօրեղ մի փաստը արն է,
Որ համբերութեամբ գիտէք հանդուրժել
Ձեր սիրականի բացակայութեան:
Թէ գիտենալիք, ումն էք ցոյց տալիս
Այդական պատիւ, թէ որչափ ազնիւ
Եւ բարի մարդու օգնում էք այդպէս,
Եւ թէ, իմ տիրոջ և ձեր ամուսնու
Ո՛րչափ սրտակից բարեկամն է նա՝
Վլստահ եմ, ձեր այս բարեգործութեամբ
Դուք շատ առաւել բերկըանք կըզգայիք՝
Քան ձեր առօրեալ մարդասիրութեամբ:
Երբէք գեռելս ես չեմ զըզացել
Որևէ բարիք անելուս համար,
Այժմ էլ չեմ զզայ: Երկու ընկերներ,
Որոնք սովոր են միասին ապրել,
Ժամանակ անցնել, որոնց հոգիներն
Սովոր են կըբել սիրոյ նոյն լուծը՝
Պէտք է ունենան համակերպութիւն
Գիմազըծերի, բարքի ու ոգու.
Եւ այդ պատճառով ես մըտածում եմ
Որ այդ Անտոնիօն, որ իմ ամուսնիս
Սերտ բարեկամն է՝ պէտք է անպատճառ

Լինի ամուսնիս ճիշդ յար և նըման:
Եթէ ալդպէս է, որչափ ըընչին է
Իմ արած ծախքը, հոգւոյս նըմանին
Այն գըտխալին անգըթութիւնից
Փըրկելու համար: Սակայն այս խօսքերս
Աւելի մօտ են ինքնագովութեան.
Թողնենք ուրեմըն, և այլ բան լըսենք:
Լորէնցօ, ահա ես ձեզ կարգում եմ
Իմ տանըս տընտես և կառավարիչ,
Մինչև ամուսինս տուն վերադառնալ:
Իսկ ես, ծածկապէս Աստուծոյ առաջ
Ուխտել եմ ապրել, ազօթք անելով
Նըրւիրուած միայն սուրբ մըտածութեանց,
Ինձ հետ տոնելով այս Ներիսսալին
Իբը միակ ընկեր, մինչեւ որ դառնան
Թէ նորա ալրը և թէ իմ տէրըս:
Մի երկու մըղոն ալստեղից հեռու
Կայ մի մենաստան: Մենք ալստեղ կերթանք
ալստեղ ալստեղ կապրենք: Աղաչում եմ ձեզ,
Ծովոր գուք չըմերժէք իմ այս հայցուածքը,
Ծովոր առ ձեզ տածած բարեկամութիւնս
Եւ իմ կարիքը ձեզ ըստիսում են
Անտես չըթողնել:

ԼՈՐԷՆՅՈ. Պատրաստ եմ, տիկին,

Իմ բոլոր սըրտով ձեզ հնազանդելու:

ՊՈՐՅԻԱ. Իմ ծառաներիս արդէն յայտնել եմ
Մըտաշըրութիւնը. նոքա պատրաստ են
Անպէս հնազանդել ձեզ, Զէսիկալին:
Ինչպէս նոյն իսկ ինձ կամ Բասսանիօլին:
Մընացէք բարով, ցընոր տեսութիւն:
ԼՈՐԷՆՅՈ. Թող ուղեկցեն ձեզ երշանիկ ժամեր
Եւ ուրախառիթ մտածութիւններ:
ԶԷՄԻԿԱ. Ես էլ մաղթում եմ ձեր ազնըւութեան

Զեր սրտի բոլոր իղձ ու փափաքը:
 Շնորհակալ եմ ձեզ, և բոլոր սըրտով
 Ես էլ ձեզ նոյնը բարեմաղթում եմ:
 —Մնաս բարով Զէսիկա: —Իսկ դու, Բալթազար,
 Դու միշտ եղել ես ինձ հաւատարիմ.
 Թող այսուհետ էլ քեզ նոյնպէս գըտնեմ:
 Առ այս նտմոկը. գործ գիր ամեն ճիգ՝
 Որ հնարաւոր է մի մարդու համար,
 Որպէս զի արագ Պատուա հասնես,
 Եւ յանձնես դու այս իմ ազգականիս,
 Որի անունն է դոկտոր Բելարիօ:
 Նա քեզ հագուստներ և թըղթեր կըտայ
 Որ դու կըբերես ալնքան ըշտապով՝
 Որքան հընար է երեակայել,
 Դէպ հասարակաց նաւամատոցը,
 Ուրկից մակովկով գնում են Վենետիկ:
 Գրնա, ժամանակ մի վատներ խօսքով.
 Ես քեզնից առաջ այնտեղ կըլինիմ:
 Տիկին, մեկնում եմ ամենայն վութով:
 ՊՈՐՅԱՅԻ. Եկ, գնանք, ներիսսա. Ես մի գործ ունիմ
 ՊՈՐՅԱՅԻ. Եկ, գնանք, ներիսսա. Ես մի գործ ունիմ
 Որ դեռ չըգիտես: Մեր ամուսիններն
 Զեն կարող խորհել, թէ ո՞րչափ շուտով
 Կըտեսնենք նըրանց:

Իսկ նոքա էլ մեզ

Կահրող են տեսնել:

Այս, ներիսսա.

Սակայն այնպիսի հագուստների մէջ,
 Որ կարծելու են թէ մի բան ունինք,
 Որից զուրկ ենք մենք: Ես գրաւ կըդընեմ:
 Ինչ բանի վերայ որ դու կամենաս,
 Որ երբ այր մարդու ըզգեստներ հագնենք,
 Քեզնից գեղեցիկ տըղալ կըդառամ,
 Քեզնից աւելի կըտրիչի նըման

Կըկըրեմ կողքից փոքրիկ դաշոյնըս.
 Կըխօսեմ անոլշ սըրինգի ձայնով,
 Որպէս խօսում է այն պատանեակը,
 Որ ալրութեան մէջ նոր է ոտք գըրել.
 Եւ կըփոխարկեմ մանրիկ քայլերըս
 Դէպի առնտկան մեծ քայլափոխեր:
 Ես միշտ կըխօսեմ մենամարտներից՝
 Որպէս պարծենկոտ մի քաջ պատանի.
 Հնարագիտութեամբ սըտեր կըշինեմ,
 Թէ ինչպէս ազնիւ պատուաւոր տիկնալք
 Զանք են գործ գըրել իմ սէրը շահել,
 Եւ ինձնից մերժուած՝ հիւանդացել են
 Եւ ցաւից մեռել. լաւ. Էնչ անէի:
 Այս բոլորից յետ ես ցաւ կըլայտնեմ
 Որ նոցա մահուան պատճառ եմ եղել:
 Քըսան ալապիսի սըտեր կըշինեմ,
 Այնպէս որ մարդիկ երդուեն իմ մասին՝
 Որ մէկ տարի է ինչ վարժարանից
 Ես դուրս եմ եկել: Մըտքիս մէջ ունիմ
 Բիւր չարաճընի տիգ տեսակ խաղեր,
 Որ այդ սընապարծ պատանիներին
 Յարմար կըմինի, և այդ բոլորը
 Պէտք է գործ գընեմ:

Ինչ է. միթէ մենք

Բահ, ինչ հարց է այդ.

ԵԵՐԻՍՍԱ.

Այր ենք դառնալու:
 ՊՈՐՅԱՅԻ. Եաւ է որ այստեղ չար մեկնող չըկար:
 Սակայն եկ գընանք. Ես քեզ կըպատմեմ
 Իմ բոլոր հընարքս՝ երբ կառքը նըստենք,
 Որ ահա այնտեղ, այգու դըռան մօտ
 Մեզ ըսպասում է: Ուրեմն ըշտապենք.
 Այսօր քսան մըղոն պէտք է անց կենանք:
 (Գուրս են գնում):

այսուցաք թիգով պարզ նկայից
համաս գրեցաց առան և անօդը
ՏԵՍԱՐԱՆՆԵ.
զնոց գալ և զատ Համեմություն զնոց
սորոցիակ պարտէզը, Բելմանտի մէջ:

Մատում են ԼԱԽԱԾՈ և ԶԵՍԻԿԱ.

ՀԱԽՍՀՀՀՕ. Այս, ճշմարիտ. որովհետև, տեսէք, հայրեքի մեղքերը պէտք է զաւակները քաւեն. այդ պատճառով, հաւատացնում եմ, որ ձեզ համար երկիւղ եմ կրում. ես միշտ ձեզ հետ անկեղծ եմ եղել և ահա այժմ էլ ես ձեզ յարտնում եմ իմ կարծիքս այդ խնդրի մասին. ուրեմն ձեր սիրաը պինդ պահեցէք. որովհետև ես հաստատ գիտեմ որ դուք դատապարտուած էք դժոխքի. միայն մէկ յոյս կայ, որ կարող է մի քիչ օգուտ տալ. այդ էլ մի տեսակ անհարազատ յոյս է:

ԶԵՍԻԿԱ. Եւ ինչ յոյս է այդ, ասա խնդրեմ:

ՀԱԽՍՀՀՀՕ. Այն է որ դուք կարող էք մասամբ յուսալ, որ դուք ձեր հօր զաւակը չէք, այսինքն դուք այն հրէալի աղջիկը չէք:

ԶԵՍԻԿԱ. Իրաւ որ անհարազատ յոյս. այդ դէպքումն էլ պէտք է մօրս մեղքերը քաւեմ:

ՀԱԽՍՀՀՀՕ. Այդ էլ ճիշդ է. ուրեմն վախենում եմ, որ դուք թէ հօր կողմից և թէ մօր կողմից նզովուած լինիք. այսպէս, երբ որ փախչում եմ Սցիլլայից, որ հայրն է, ընկնում եմ Խարիբդայի մէջ, որ ձեր մայրն է. երկու կողմից ձեր բանը բուրգ է:

ԶԵՍԻԿԱ. Դուցէ ամուսնիս ձեռքով փրկուիմ. նա ինձ քրիստոնեայ է դարձրել:

ՀԱԽՍՀՀՀՕ. Ես իմ հոգիս, զատ վատ է արել. արդէն բա-

տական շատ քրիստոնեաներ կալինք, այնքան որ հազիւ էլինք կարողանում միմեանց հետ սիրով ապրել. այդքան մարդ քրիստոնեայ դարձնել խոզի գինը կեարձրացնէ. երբ որ ամենքս խոզի միս ուտող դառնանք՝ լետոյ որքան փող էլ որ տաք՝ մի շերտ խորոված խոզի ճարպ չէք կարող առնել:

(Մտնում է Լորէնցօ).

ԶԵՍԻԿԱ. Լանսըլո, հիմա քո ասածներդ կպատմեմ ամուսնուս. ահա եկաւ:

ՀՈՐԷՆՑՕ. Լանսըլո, ես շուտով կակսեմ նախանձել քեզ, եթէ այսպէս իմ կնոջս քաշես անկիւնները:

ԶԵՍԻԿԱ. Ո՛չ, կարիք չունիք վախենալու, Լորէնցօ. Լանսըլօն և ես միմեանց հետ վատ ենք. նա առանց այլ և այլի ասում է ինձ, որ երկնքում ինձ համար փրկութիւն չկայ, որովհետեւ ես մի հրէալի աղջիկ եմ. և ասում է որ դուք լաւ անդամ չէք հանրապետութեան, որովհետեւ հրէաներին քրիստոնեայ դարձնելով խոզի միուլ թանկացնում եք:

ՀՈՐԷՆՑՕ. Ես աւելի շուտ կարող եմ արդարանալ հանրապետութեան առաջ՝ քան թէ դու, նեգրուհու փորը ուռեցնելուդ համար. այն մաւր տղջիկը լին է քեզնից, Լանսըլօ:

ՀԱԽՍՀՀՀՕ. Հոգ չէ. ինչ որ կորցրել է առաքինութեան մէջ՝ շահել է իր փորի մէջ:

ՀՈՐԷՆՑՕ. Ի՞նչպէս տմեն տիմար կարող է խաղալ բառերի հետ. կարծեմ շատ չի անցնի՝ սրամտութեան ամենամեծ արժանիքը կլինի լոռութիւնը, և խօսակցութիւնը գովելի կլինի միայն թութակների մէջ: Գնա տուն, ալ տղայ, ասս պատրաստ լինին ընթրիքի համար:

ՀԱԽՍՀՀՀՕ. Նոքա պատրաստ են, տէր իմ, ամենքն էլ ստամոքս ունին:

ՀՈՐԷՆՑՕ. Տէր Աստուած, ինչ որախօսութեան ետևից ընկած մարդ ես, ուրեմն ասա՝ ընթրիքը պատրաստեն:

ՀԱԽՍՀՀՀՕ. Ընթրիքն էլ պատրաստ է. պէտք է ասէիք սփոռոյը:

ՀՈՐԷՆՑՕ. Ելի՞ բանակուիւ, միթէ ուզում ես բոլոր

ԽԵԼՔԻԴ Հարստութիւնը մի բոպէի մէջ ցոյց տալ. խնդրում
եմ պարզ մարդու ասածը պարզ կերպով հասկանաս. գնա ըն-
կերներիդ մօտ, ասա սեղանը պատրաստեն, կերակուրները
բերեն, մենք էլ գալիս ենք:

ՂԱՆՍՐՈ. Ինչ վերաբերում է սեղանին՝ պարոն, նա
կբերուի. ինչ վերաբերում է կերակուրներին՝ նոքա էլ կը-
պատրաստուին, իսկ ինչ վերաբերում է ձեր գալուն՝ պա-
րոն, դա կախուած է ձեր տրամադրութիւնից և բարեհա-
ճութիւնից:

(Լանուրլո գնում է):

ՂՈՐԷՆՑՕ. Ա-խ, դու սիրելի լըջամըտութիւն,
ի՞նչպէս անկապ են նորա խօսքերը:
Յիմարագլուխը խելապատակում
Տեղաւորել է սուր ակնարկների
Մի ամբողջ բանակ: Ես ճանաչում եմ
Շատ խեղկատակներ, բարձր աստիճանով,
Որոնք սորա պէս զրահաւորուած են,
Եւ մի բառախաղ ասելու համար՝
Պատրաստ են նիւթը ոտնակոխ անել:
Ի՞նչպէս ես, Զէսիկա: Լաւ հիմալ, հոգիս,
Ասա կարծիքըդ. Բնչպէս ես գըտնում
Տէր Բասսանիօլի կընոջ, Պորցիալին:
Բարձր ամեն բառից: Շատ հարկաւոր է
Որ տէր Բասսանիօն պարկեշտ կեանք վարէ,
Քանի որ այսպիսի մի երանութիւն
Գըտած լինելով իր լըծակցի մէջ՝
Արդէն երկնալին երջանկութիւնը
Գըտել է ալստեղ, այս երկի վերալ:
Սակայն եթէ նա ալս աշխարհի մէջ
Չըգնահատէ այդ՝ ուրեմըն երբէք
Արժան չի լինի նորան երկընքում:
Թէ երկու աստուած պայքար դուրս գալին
Երկնալին մրցմամբ, և մըրցանակը

Երկու երկրածին կանալք լինէին,
Եւ Պորցիան լինէր դորանցից մէկը՝
Հարկ էր միւսի վրայ մի այլ բան բարդել.
Քանի որ աղքատ, կոպիտ աշխարհը

Զունի նորա զոյգ և հաւասարը:
Եւ ճիշդ ինչպիսի մի կին է Պորցիան՝
Նոյնպիսի մի այլ ունիս դու իմ մէջ:
Բահ, դու այդ մասին ինձ պէտք է հարցնես:
Լաւ, կըհարցընեմ. բայց նախ և առաջ
Գընանք ընթրելու:

Զէս, թող գովեմ քեզ՝
Քանի գեռ կուշտ չեմ:

ՂՈՐԷՆՑՕ. Ո՞չ, աղաչում եմ.
Թող մեր սեղանի զըոյցը լինի այդ.
Եւ այն ժամանակ ինչ որ էլ ասես:
Կարող եմ մարսել միւս բաների հետ:
Զէսիկա. Լաւ, ես քեզ ալնտեղ կըգովասանեմ:

(Դուրս են գնում):

իմ համբերութեամբ պէտք է դիմադրեմ.

Եւ այժմ, հոգեկան մի անդորրութեամբ

Զինուած՝ պատրաստ եմ նորա բըունութեան

Եւ կատաղութեան թափին հանդուրժել:

ԴՈՒՔԱ. Կանչեցէք հրէալին այստեղ դատարան:

ՍՈԼԱՆԻՕ. Դըռան առջև է: Ա.Հա ինքն եկաւ:

(Մտնում է Շայլոկ):

ԴՈՒՔԱ. — Յեղ տըւէք. թող գայ կանգնի մեր հանդէպ.

— Շայլոկ, ամեն մարդ այնպէս է կարծում

(Եւ ես էլ նոյնպէս), որ այս չար գործըդ

Դու արարուածի մինչ վերջին ըռպէն

Առաջ կըտանես. յետոյ, կարծում են,

Որ դու ցոյց կըտաս քո խիզճ և գութըդ,

Աւելի օտար և զարմանալի՝

Քան օտարոտի և առերևոյթ

Ալդ անգրթութիւնդ. և այն ժամանակ

Էլ չես պահանջի վըճռած տուգանքը,

Այսինքըն այս խեղճ վաճառականի

Մարմնից մի ֆունտ միս. և դու ոչ միայն

Զեռք կըվերցընես քո ալդ պահանջից,

Ալլ և տոգորուած մարդասիրութեամբ՝

Մայր գումարիցն էլ կէսը կըշնորհես,

Եւ դու կընայես գըթութեան աչքով

Այն բազմապիսի հարուածների վըալ՝

Որոնք վերջերըս յախուռն տեղացին

Նորա կըսնակին. նոքա բաւ էին

Մի արքալական վաճառականի

Ցած տապալելու և ընդունակ են

Պըզընձեալ կուրծքեր և քարեալ սըրտեր

Ի գութ շարժելու. դոքա կարող են

Անսիրտ թուրքերին և թաթարներին.

(Որոնք երեւէ սովոր չեն եղել

Մարդասիրական պարտականութեանց)

ԱՐԱՐՈՒԱԾ ԶՈՐՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ Ա.

Վենետիկ. դատարան.

Մանում են ԴՈՒՔԱԾ, ԾԵՐԱԿՈՅՑՏԻ ԱՆԴԱՄՆԵՐ, ԱՆՑՈՆԻՕ, ԲԱՍ-
ՍԱՆԻՕ, ԳՐԱՅԻԱՆՈ, ՍԱԼԱՐԻՆԾ, ՍՈԼԱՆԻՕ և այլն.

ԴՈՒՔԱ. Արգեօք Անտոնիօն այստեղ է:

ԱՆՑՈՆԻՕ. Պատրաստ,

Եթէ հաճոյ է ձերըդ բարձրութեան:

Շատ տըխրում եմ ես քո բախտիդ մասին.

Հակառակորդըդ քարեալ մի մարդ է,

Անսիրտ, անողորմ մի թշուառական,

Որ գութ ըզգալու անընդունակ է,

Եւ կարեկցութեան մէկ կաթիլ չունի:

Դուքս, ես լըսել եմ որ շատ նեղութիւն

Հստանձնել էք գութ՝ որ մի քիչ մեղմէք

Նորա անիրաւ պահանջումները:

Բայց երբ որ այսպէս անողոք է նա,

Եւ օրինական մի միջոց չըկայ

Ինձ նորա ովից փրկելու համար՝

Ուրեմըն նորա գաղանութեանը

Կարեկից դարձնել: Եւ ալժըմ, հրէալ,
Ամենքըս քեզնից մի մեղմ պատասխան
Ակընկալում ենք:

ԾԱՅԼՈԿ. Զերըդ բարձրութեան
Յայտնած եմ արդէն իմ դիտումներըս.
Նաև երդուել եմ մեր սուրբ շաբաթով
Մուրհակիս վըճռած տուգանքն ըստանալ:
Եթէ մերժէք ինձ իրաւունքըս տալ՝
Թող ոչընչանան ձեր օրէնքները
Եւ ձեր քաղաքի ազատութիւնը:
Դուք ինձ կըհարցնէք, թէ ինչու համար
Ես նախընտրում եմ մի քաշ լէշի միս՝
Քան երեք հազար դուկատ ըստանալ:
Դորան պատասխան ես չեմ ուզում տալ.
Այլ այսքան կասեմ, որ իմ կամքս է ալդ.
Արդեօք բաւական պատասխան է այս:
Դիցուք տանըս մէջ մի մուկ յախնըւի,
Եւ ես ուզեմ տալ տասն հազար դուկատ
Որ դեղեն նըրան. լաւ. բաւական է
Այս պատասխանը: Կան մարդիկ, որոնք
Չեն սիրում տեսնել բաց բերան մի խոզ.
Ոմանք՝ որ եթէ մի կատու տեսնեն,
Կըխելազարուին. կան և ուրիշներ,
Որ եթէ նուագէ մի պարկաբըզուկ
Նոցա քըթի տակ՝ իրանց մէզն ալ ևս
Բըռնել չեն կարող. քանի որ զգացումն,
Իբր իշխան կըքի՛ նըրան վարում է,
Նալելով թէ ինչ ախորժ է նորան
Եւ ինչ անախորժ:
Բայց ալժըմ թող գանք ձեր պատասխանին.
Քանի որ չըկալ հաստատ մի պատճառ,
Թէ ինչու համար մի մարդ զըզում է
Բացբերան խոզից, և մի ուրիշը՝

Մի սօվորական անվընաս կատուից
Եւ մի ալլը՝ ուռած պարկաբըզուկից.
Ալ պարտաւորուած պէտք է տեղի տան
Անխուսափելի մի տըկարութեան,
Եւ կեղեքուելով՝ իրանք էլ նոյնպէս
Ալլոց կեղեքն, ալդպէս էլ և ես
Զեմ կարող ձեզ տալ մի որոշ պատճառ,
(Ոչ էլ կամքունիմ)՝ եթէ ոչ միայն
Մի բընածին ոխ, մի ինչ-որ զըզուանք,
Որ ես տածում եմ դէպի Անտոնիօն.
Այդ պատճառով է, որ ես նորա գէմ
Այսպէս վնասաբեր *) մի դատ եմ վարում:
Բաւական է ձեզ այս պատասխանը:
ԲԱՍՍԱՆԻՕ. Դա պատասխան չէ, ով անըզգայ մարդ,
Որ արդարացնէ քո անգութ վարքըդ:
ԾԱՅԼՈԿ. Ես պարտաւոր չեմ քեզ հաճուանալ
Իմ պատասխանով:
ԲԱՍՍԱՆԻՕ. Միթէ պէտք է մեզ
Ըսպանել նըրանց, որոնց չենք սիրում:
ԾԱՅԼՈԿ. Արդեօք ատում ենք մենք այն էակին,
Որին ըսպանել չէինք կամենալ:
ԲԱՍՍԱՆԻՕ. Անպատճառ ամեն մի վիրաւորանք
Ծընունդ չէ տալիս բուռն ատելութեան:
ԾԱՅԼՈԿ. Միթէ թոյլ կըտաս, որ երկու անգամ
Օձը քեզ խածնէ:
ԱԽՑՈՒԻՕ. Խընդրեմ, խորհեցէք
Որ դուք վիճում էք մի հրէալի հետ:
Դուք աւելի շուտ կարող էք կանգնել
Ծովի եզերքին, և հրաման անել
Ահեղ կոհակին, որ ցած իջեցնէ
Հանալազօրեալ իր բարձրութիւնը.

*) Մի դատ, որով այսքան դրամական վնաս եմ կրում:
Ը. Թ.

Եւ կամ կարող էք հարցանել գայլից,
Թէ ինչո՞ւ համար նա խեղճ ոչխարին
Մայել է տալիս գառան ետևից.
Հրամայել լերան եղևնիներին՝
Զըշարժել իրանց բարձր կատարքը
Եւ ըըշառաչել, երբ որ կոծւում են
Երկընքի ահեղ մըրըրիկներից.
Անել ամենից անհընար գործը՝
Քան թէ ամոքել հրէական մի սիրտ,
Որից կարծըր բան բնչ կայ աշխարհում:
Ուրեմն այսուհետ, թախանձում եմ ձեզ,
Ոչինչ այլերս մի առաջարկէք,
Եւ ոչ մի միջոց ի գործ մի դընէք.
Ալլ պատշաճ փութով և պարզ ի պարզոց
Տըւէք ինձ վըճիռս, իսկ այս հրէալին՝
Փափագն իր սըրտի:

ԲԱՍՍԱՆԻՕ.

Քո երեք հազար ոսկուդ փոխարէն:
ՇԱՅԼՈՒԿ. Լըսիր, եթէ ալդ վեց հազար ոսկուց
Ամեն մի ոսկին վեց բաժին լինէր,
Եւ ամեն բաժին լինէր մի դուկատ՝
Ես չէի առնի, այլ կըպնդէի
Պահանջիս վերայ:

ԴՐՈՒՅ.

Ի՞նչպէս կարող ես
Գութ ակընկալել՝ երբ ինքը չունիս:
ՇԱՅԼՈՒԿ. Ինչո՞ւ վախենամ ես դատաստանից
Երբ չեմ մեղանչած: Դուք ունիք ձեր մէջ
Բաւական թըրով գընուած ըստրուկներ,
Որ ձեր էշերի, ձեր ջորիների
Եւ շըների պէս ծառալեցնում էք
Ցած, ըստըրկական աշխատութեանց մէջ,
Զէ որ դուք նըրանց փողով գընել էք:
Միթէ կարող եմ գալ և ասել ձեզ,

Եկէք ալդ մարդկանց ազատ դարձըրէք
Եւ ամուսնացըրէք ժառանգներիդ հետ.
Ինչո՞ւ բեռան տակ քըրտինք են թափում.
Թողէք որ նոցա անկողինները
Փափկալից լինին ձերինների պէս,
Եւ նոցա քիմքը թող ախորժանալ
Նոյնպէս համադամ կերակուրներով.
Ինչպէս որ ձերը բայց դուք ինձ կասէք՝
Ալդ ըստրուկները մեզ են պատկանում:
Ես էլ ձեզ նոյնպէս կըպատասխանեմ.
Այն մի ֆունտ միսը որ պահանջում եմ
Նատ թանկ եմ գընել. ինձ է պատկանում,
Եւ պէտք է առնեմ: Եթէ մերժէք ինձ՝
Թոնէ ձեր օրէնքին. ապա Վենետիկի
Հըրվարտակներում զօրութիւն չըկայ:
Ես ըսպասում եմ իմ պատասխանիս:
Արդեօք տալու էք իմ իրաւունքը:
ԴՐՈՒՅ. Ես այս ժողովը պէտք է արձակեմ
Իմ իշխանութեամբ, եթէ Բելլարիօն,
Գիտուն գոկտորը, որին կանչել եմ
Գործը վըճուելու՝ այսօդ չըհանի:
ՍՈԼԱՆԻՕ. Տէր իմ, դուրսը կայ մի պատգամաքեր,
Որ Պադուալից հէնց նոր տեղ հասաւ,
Եւ նա դոկտորից նամակ է բերել:
ԴՐՈՒՅ. Բեր ինձ նամակը. ներս կանչիր նըրան:
ԲԱՍՍԱՆԻՕ. Սիրտ առ, Անտոնիօ. Բնչ է, սիրելիս.
Դեռ լոյս ունեցիր. Հրէան կըստանալ
Միսը, արիւնը և ոսկորները,
Եւ ամենալն ինչ՝ նախ քան ինձ համար
Մի կաթիլ արիւն կաթի քեզանից:
ԱՆՏՈՆԻՕ. Աւազ, ես հօտի քոսոտ ոչխարն եմ,
Մորթուելու համար ամենից յարմար:
Անզօր պտուղը վաղ է ցած ընկնում.

Ալդակէս եմ և ես. իսկ դուք, Բասսանիօ,
Ալելի լաւ է որ դուք ողջ մընաք
Եւ գըէք ինձ համար մի տապանագիր:
(Մտնում է Ներիսսա, մի փաստաբանի գրադրի նման հագնուած).

ԴՈՒՔՍ. Պագուայից եկաք: Ձեզ Բելլարիօն է
Այստեղ ուղարկել:

ՆԵՐԻՍՍԱ. Այն, ազնիւ Դուք,
Սինիօր Բելլարիօն ձեզ ողջունում է:
ԲԱՍՍԱՆԻՕ (Շայլոկին). Ի՞նչու ես ալդակէս եռանդու կերպով
Դանակըդ սըրում *):

ՇԱՅԼՈԿ. Որ այս սընանկից տուգանքը կը կլարեմ:
ԳՐԱՑԻԱՆՈ. Ոչ կօշկիդ տակի, այլ հոգուդ վերայ
Սըրում ես դանակդ, ով անսիրա հըէայ.
Բայց ոչ մի մետաղ, դահճի կացինն էլ
Չէ կարող երբէք այնքան սուր լինել՝
Որչափ սալրատուր քէնը քո սըրտի:
Միթէ չէ կարող ոչ մի թախանձանք
Սիրտը թափանցել:

ՇԱՅԼՈԿ. Ոչ մին, որ խելքըդ կարենայ ճարել:
ԳՐԱՑԻԱՆՈ. Նըզովեալ լինիս, ով անողոք շուն.
Քո կեանքիդ համար արգարութիւնը
Պարսաւելի է *): Քիչ է մընացել,
Որ դու խախտես ինձ իմ հաւատքիս մէջ,
Եւ ինձ կարծել տաս Պիւթագորի հետ,
Թէ գազանների հոգին մըտնում է
Մարդկանց մարմնի մէջ: Քո այդ շուն հոգիդ
Նախ մի գալի մէջ բնակուած է եղել,
Որին կախել են մի մարդ ըսպանած
Լինելուն համար. նորա չար հոգին
Ճիշդ այն ժամանակ թռաւ կախաղանից՝

*) Շավոկը դանակը սրում է՝ քսելով իր կօշկի տակին: Booth.

**) Այսինքն՝ արդարութեան համար թող չանցանք համարուի ացն, որ քեզ կենդանի է թողնում,

Երբ դու անսուրբ մօրդ արգանդումն էիր,
Եւ մըտաւ քո մէջ. *) որովհետեւ քո
Բոլոր իղձերը, ինչպէս գայլինը՝ զոտիարար Այ
Անլագ, կատաղի, արիւնարբու են: Այս աղոյն
Հայկուանքներով քեզ հընար չըկայ որ փաշ
Զնջել կընիքը մուրհակիս վրալից.

Իզուր թոքերը մի տանցեր ուրեմն
Այդափափ բարձրաձայն աղաղակելով:
Ամրացրու խելքըդ, բարի պատանի:
Թէ ոչ փուլ կըգայ, անդարձ կըկորչի:
Ես պահանջում եմ անաչառ վըճիւ:

ԴՈՒՔՍ. Բելլարիօն իր այս նամակով
Յանձնարարում է մեր դատարանին
Մի երիտասարդ գիտնական դոկտոր:
Ուր է նա:

ՆԵՐԻՍՍԱ. Այստեղ, այս մերձակալքում,
Եւ ըսպասում է ձեր պատասխանին,
Արգեօք կըհամքք նըրան ընդունել:
ԴՈՒՔՍ. Իմ բոլոր սըրտով: — Երեք-չորս հոգով
Գընացէք նըրան պատուով ներս բերէք.
Իսկ այդ միջոցին մեր դատարանը
Թող Բելլարիօլի նամակը լսէ:

ՄԻ ԳՐԱԿԻՒՐ (Կարդում է). Թող լայտնի լինի Ձերդ Բար-
ձրութեան, որ ձեր նամակը ստացած ժամանակ՝ ես սաստիկ
հիւտանդ էի. բայց նոյն այն ըոսէին երբ ձեր նամակը եկաւ՝
ինձ մօտ էր գտնւում մի երիտասարդ դոկտոր, Հռովմից, որ
եկել էր որպէս բարեկամ ինձ այցելելու. նորա անունը Բալ-
թազար է. ես նորան տեղեկութիւն տուի այն վէճի մասին,

*) Ակսելով այն տողից «Քո այդ շուն հոգիդ... մինչև այս տողը՝
բնագրի մէջ վերին աստիճանի թով է, թէ ըստ քերականութեան,
թէ ըստ իմաստի: Կրիտիկներ կան, որոնք կարծում են թէ այս տո-
ղերը ղերասաններն աւելացրած են, և կարելի է չնջել նրանց,
առանց վնասելու ոչ իմաստին, ոչ իսկ չափին: Ծ. Թ.

որ ծագել է հրէալի և Անտոնիօ անունով վաճառականի միջև։ Մենք միասին շատ գրքեր թղթատեցինք։ նա ծանօթ է իմ գաղափարներիս հետ, և աւելացնելով դորա վերալ նաև նորա սեպհական հմտութիւնը (որի ընդարձակութիւնը որչափ որ գովեմ էլի քիչ է), նա գալիս է ձեզ մօտ իմ աղաշանքով, Զերդ Բարձրութեան հրամաններին իմ փոխարէն կատարում տալու։ Աղաչում եմ ձեզ, մի կարծէք որ նորա դեռահաս տարիքը մի արգելք է, և ընդունեցէք նրան պատշաճ յարգանքով, որովհետեւ ես երբէք չեմ տեսել այսքան մատաղահաս մի մարմին՝ այսչափ ծեր մի գլխով։ Ես նրան յանձնում եմ ձեր բարեհաճ ընդունելութեան. փորձըն աւելի կդրուատէ նրան։

ԴՈՒՔՍ. Արդեօք լըսեցիք թէ ինչ է գըրել
Գիտուն բելլարիօն. և ահա, կարծեմ
Ինքը դոկտորն է:
(Մտնում է Պորցիան, փաստաբանի զգեստով).
— Տուէք ինձ ձեր ձեռքը։

Ծեր բելլարիօի կողմից էք գալիս։

ՊՈՐՃԻԱ. Այս, ազնիւ Դուքս։
ԴՈՒՔՍ. Բարով էք եկել.
Նըստեցէք ինդըն. գիտէք այն դատը,
Որ այս դատարանն այսօր քըննում է։
ՊՈՐՃԻԱ. Այս, ես շատ լաւ տեղեակ եմ գործին.
Ասացէք, ո՞րն է վաճառականը
Եւ ո՞րն է հրէան։

ԴՈՒՔՍ. Եկէք, Անտոնիօ,
Եւ դուք, ծեր Շալլոկ. առաջ կանգնեցէք։
Շալլոկը դժւէք էք։
Այս, Շալլոկն եմ։
ՊՈՐՃԻԱ. Այս դատը, որ դուք ըսկսել էք վարել
Տարօրինակ է. բայց այնպէս կարգին,
Որ անկարող է Վենետիկեան օրէնքն
Արգելք լինել ձեզ։
(Անտոնիօյին).

Դժւէք էք պարտական։

ԱՆՏՈՆԻՕ. Այս, երեխ։ Ճանաչում էք դուք
ՊՈՐՃԻԱ. Ուրեմըն պէտք է հրէան գըթալ ձեզ։
ՇԱՅԼՈԿ. Ի՞նչ հարկադրութեամբ, ասացէք, խնդրեմ։
ՊՈՐՃԻԱ. Գըթութիւնը չէ հարկադիր մի բան։
ԱՅՀ որպէս անոյշ բարերար անձրև
Նա կաթկըթում է երկընքից ներքեւ։
Նա կըրկնապատիկ մի օրհնութիւն է.
Օրհնէնք է նորան, ով որ բաշխում է,
Օրհնէնք է նաև իր ըստացողին։
Նա զօրեղներից ամենազօրն է։
Գահի վրալ բազմած արքալի համար՝
Թագից գեղեցիկ զարդարանք է նա։
Նրա գալիսոնը պատկերացնում է
Աշխարհիկ ուժի և իշխանութեան,
Նշանն է ահի, վեհափառութեան,
Որից ծագում է պատկառանք և վախ
Դէպ արքաները։ Բայց գըթութիւնը
Սւելի բարձր է քան գալիսոնը։
Թագաւորների սըրտերի մէջ է
Գըթութեան գահը. բուն իսկ Աստուծոյ
Յատկութիւնն է նա. և այն ժամանակ
Է աշխարհալին գերիշխանութիւնն
Աստուծոյ նըման՝ երբ որ գըթութիւնն
Արդարութեան հետ զուգախառնուած է։
Ուրեմըն, հրէալ, թէև պահանջըդ
Օրինական է բայց լըսիր դու այս։
Արդարութիւնը եթէ իսխտ լինէր՝
Մեզնից ոչ մէկը փըրկուել չէր կարող։
Մենք աղօթելով գութ ենք աղերսում,
Եւ այդ աղօթքը ուսուցանում է,

Որ պարտ ենք գործել գըթութեան գործեր:
Ես այս բոլորը խօսեցի՝ միայն
Արդար պահանջրդ մեղմելու համար.
Բայց եթէ պընդես քո դատիդ վերաց՝
Ապա Վենետիկի խիստ դատարանը
Պէտք է վրճիռ տալ Անտոնիոյի դէմ:
ԾԱՑԼՈԿ. Իմ արածները թող իմ գըլիսիս գան.
Ես պահանջում եմ արդար դատաստան
Եւ մուրհակիս մէջ գըրուած տուզանքը:
ՊՈՐՉԻԱ. Միթէ չէ կարող դրամը վրճարել:
ԲԱՍՍԱԵԽՈ. Ի՞նչպէս չէ. ահա ատեանի առջև
Պատրաստ եմ ամբողջ դրամը վճարել,
Նոյն իսկ կըրկինը. թէ այդ էլ բաւ չէ՝
Տասնապատիկը կըհատուցանեմ,
Գրաւ տալով ձեռքերս, գըլուխս և սիրտըս:
Թէ այդ էլ բաւ չէ՝ ուրեմն յայտնի է,
Որ չարութիւնը ընկճում է իր տակ
Ամեն իրաւունք և արդարութիւն:
Աղաջում եմ ձեզ, որ այս մի անգամ
Օրէնքը լուծէք ձեր իշխանութեամբ:
Մեծ արդարութիւն գործելու համար
Արէք մի փոքրիկ անարդարութիւն,
Եւ նըւաճեցէք այս յամառութեան
Անողորմ գեին:

ՊՈՐՉԻԱ. Անկարելի է.

Չըկայ Վենետիկում ոչ մի զօրութիւն,
Որ կարողանալ օրէնքը լուծել.

Դա իբր օրինակ կարձանագրուի,
Եւ այդ հիման վրայ շատ այլ եղծումներ
Կարող են վըխտալ մեր պետութեան մէջ:
Անկարելի է:

ԾԱՑԼՈԿ. Ա՛հ, մի Դանիէլ է,
Որ եկել է մեզ իբրև դատաւոր.

Այս մի Դանիէլ, ով երիտասարդ,
Հմանմատուն դատիչ, ինչպէս պատուեմ քեզ:
ՊՈՐՉԻԱ. Խընդրեմ թոյլ տաք ինձ մուրհակը տեսնել:
ԾԱՑԼՈԿ. Այս է, նայեցէք, լարգելի դոկտոր:
ՊՈՐՉԻԱ. Ծալովկ, ահա քեզ առաջարկում են
Եռապատիկը քո տըւած դրամիդ:
ԾԱՑԼՈԿ. Երդուել եմ, երդուել, երկրնքով երդուել.
Միթէ պէտք է ինձ երդմազնցութեամբ
Ճողիս պատիկը սկացնել: Վենետիկն էլ տան՝
ճանապարհու այդ չեմ անի:

ՊՈՐՉԻԱ. Լաւ, այս մուրհակի
Պայմանաժամը վաղուց է անցել.
Ճիշդ է, օրէնքով հրէան այս թըղթով
Իրաւունք ունի կըտրել մի ֆունտ միս
Վաճառականի սըրտին կից տեղից:
Բայց գութ ունեցիր, եռապատիկն առ
Ճանապարհու տըւած դրամիդ, և ինձ հրաման տուր
Հրուրհակը պատուել:

ԾԱՑԼՈԿ. Կարող էք պատռել՝ երբ որ վրճարուի
Համաձայն դորա ըովանդակութեան:
Գութ, երեսում է, լաւ դատաւոր էք,
Որէնք լաւ գիտէք, և մեծ ճշշդութեամբ
Գործի հանգամանքը բացատրեցիք:
Հրաւիրում եմ ձեզ, լանուն օրէնքի,
Սերի սիւնն էք գութ ձեր արժանիքով՝
Նընարկել վըճիռն: Երդուում եմ հոգով,
Ոչ մի մարդկային լեզու չէ կարող
Միթքը փոխել տալ. պընդում եմ այստեղ
Մուրհակիս վերայ:

ԱՆՑՈՒԽՈ. Իմ բոլոր սըրտով
Ես աղերսում եմ, որ դատարանը
Վըճիռն արձակէ:

ՊՈՐՉԻԱ. Լաւ ուրեմն. ահա.

Կուրծքըդ պատրաստիր գանակի համար:
 ՇԱՅԼՈԿ. Աղնիւ դատաւոր, անզոյգ պատանի:
 ՊՈՐՑԻԱ. Որովհետեւ նա օրէնքի հիմամբ
 Իրաւունք ունի առնել այն տուղանքն,
 Որ այս մուրհակում նըշանակուած է:
 ՇԱՅԼՈԿ. Եատ ճշմարիտ է. ով դու իմաստուն,
 Արդար դատաւոր. որչափ առաւել
 Հասակաւոր ես, քան երևում ես:
 ՊՈՐՑԻԱ. Դէհ, որ այդպէս է՝ ձեր կուրծքը բացէք:
 ՇԱՅԼՈԿ. Իր կուրծքը, այս. այդպէս է գըրուած
 Պարտամուրհակում. այսպէս չէ արդեօք,
 Աղնիւ դատաւոր. սըրտին ճիշտ մօտիկ.
 Ճիշտ այս բառերով գըրուած է այդտեղ:
 ՊՈՐՑԻԱ. Այս, այդպէս է: կայ այստեղ կշիռք,
 Միսը կշռելու:
 ՇԱՅԼՈԿ. Այս, բերել եմ:
 ՊՈՐՑԻԱ. Եալոկ, դուք պէտք է ձեր ծախսով բերէք
 Մի վիրաբոյժ էլ, որ վէրքը կապէ.
 Թէ ոչ կարող է այնքան արիւն գալ
 Որ նա կըմեռնի:
 ՇԱՅԼՈԿ. Կայ այդ մուրհակում:
 ՊՈՐՑԻԱ. Նըշանակուած չէ, բայց միևնունն է.
 Գոնէ այդքանը գըթութեան համար
 Դուք պէտք է անէք:
 ՇԱՅԼՈԿ. Զեմ գըտնում ես այդ:
 Այդպիսի մի բան մուրհակում չըկալ:
 ՊՈՐՑԻԱ. Եկ, վաճառական. ասելիք ունիս:
 ԱԽԾՈՒՆԻՕ. Քիչ բան. ես զինուած և պատրաստուած եմ:
 Բասսանիօ, եկէք, ձեռք տըւէք դուք ինձ,
 Եւ մընաք բարով: Մի վըշտանաք դուք,
 Որ ձեր պատճառով ես այստեղ հասայ.
 Որովհետեւ բախտն այստեղ աւելի
 Գըթած երևաց, քան նա սովոր է:

Նա միշտ թողնում է խեղճ տարաբախտին
 Դեռ երկար ապրել, հարըստութիւնից
 Զըրկուելուց յետոյ, որ նա դեռ տեսնէ
 Փոս ընկած աչքով, կընճուտ ճակատով,
 Զըրքաւորութեան դեռ ամբողջ մի դար:
 Բայց ինձ այդպիսի մի թըշուտուութեան
 Դանդաղ տանջանքից ազատել է նա:
 (Բասսանիօյին)
 Իսկ դուք, իմ կողմից ողջոյն մատուցէք
 Ձեր ազնիւ կընոջ. պատմեցէք նորան
 Անտոնիովի մահուան պատմութիւնն.
 Ասացէք որքան սիրում էի ձեզ.
 Խօսեցէք իմ վրայ անաշառ կերպով
 Իմ մահուանից յետ. և պատմելուց յետ՝
 Թողէք նա դատէ, թէ ունեցել է
 Արդեօք Բասսանիօն անկեղծ բարեկամ:
 Մի զըղչաք երբէք որ կորցընում էք
 Ձեր բարեկամին, ինչպէս չէ զըղչում
 Նա որ ձեր պարտքը հատուցանում է.
 Եւ եթէ հրէան մի քիչ խոր կըտրէ՝
 Ձեր պարտքը իսկոյն ես կըվըճարեմ
 Իմ բոլոր սըլտով:
 Անտոնիօ,
 Ես մի կընոջ հետ ամուսնացած եմ՝
 Որ իմ կեանքիս չափ սիրելի է ինձ.
 Բայց կեանքըս, կինըս, և աշխարհն ամբողջ
 Կեանքիցդ աւելի թանկ չեն ինձ համար:
 Եւ այդ բոլորը պատրաստ եմ կորցնել,
 Բոլորը զոհել այս սատանալին՝
 Թէ կարենալի ազատել ես քեզ:
 Ձեր կինը ձեզնից շատ ընորհակալ
 Զէր լինի անշուշտ, եթէ նա լըսէր
 Ձեր առաջարկը:

ԳՐԱՑԻԱՆՈ. Ես մի կին ունիմ,
Որին սիրում եմ,—երդւում եմ ես աչդ.
Բայց ես յօժար եմ, որ նա այս պահուս
Երկընքում լինէր, որ կարողանար
Հայցել երկնային մի գօրութիւնից,
Փոխել չար միտքը այս շուն հրէալի:
ՆԵՐԻՍՍԱ. Լաւ է որ դուք այդ առաջարկում էք՝
Երե որ ձեր կինը այստեղ ներկայ չէ.
Թէ ոչ ձեր մաղթանքն պիտի վըրդովէր
Ձեր ընտանեկան խաղաղութիւնը:
ԾԱՅԼՈԿ (առանձին). Ահա ինչպէս են քրիստոնեալ այլերն:
Ես մի գուստը ունիմ. աւելի լաւ էր
Որ բարաբեալի սերընդից մի մարդ
Նըրան կին առնէր քան մի քրիստոնեալ:
(Բարձրածայն, Պորցիային)
Բայց ինչո՞ւ իզուր ժամանակ վատնել.
Խընդրեմ ձեռնարկէք վճիռ արձակել:
ՊՈՐՑԻԱ. Այս մարդու մարմնից մի ֆունտ է.
Դատարանն այդքան քեզ է լատկացնում,
Եւ օրէնքը քեզ թոյլատրում է այդ:
ԾԱՅԼՈԿ. Արդար դատաւոր:
ՊՈՐՑԻԱ. Եւ նորա կըրծքից պէտք է կըտրես այդ.
Օրէնքն այդ բանը քեզ թոյլատրում է,
Եւ դատարանը քեզ է լատկացնում:
ԾԱՅԼՈԿ. Դիտնւն դատաւոր. ահա քեզ վըճիռ:—
Դէհ, եկ, պատրաստուիր:
ՊՈՐՑԻԱ. Մի քիչ ըսպասիր.
Կալ և մի ալլ բան: Այս մուրհակը քեզ
Չէ տալիս արեան և ոչ մի կաթիլ.
Ճըշգրիտ բառերն են՝ «մի գըրվանքալ միս».
Առ ինչ գրուած է քո մուրհակի մէջ.
Առ քո ֆունտ միսըդ. սակայն, կըտրելիս,
Եթէ դու թափես քրիստոնէական

Արեան մի կաթիլ՝ ապա Վենետիկի
Օրէնքի ոյժով՝ պէտք է քո ինչքըդ
Եւ կալուածներդ յարքունիս գրաւուին:
ԳՐԱՑԻԱՆՈ. Արդար դատաւոր:—Հասկացիք, հրէալ:
—Ուսեալ դատաւոր:
ԾԱՅԼՈԿ. Այդ է օրէնքը:
ՊՈՐՑԻԱ. Ինքըդ կարող ես օրէնքը տեսնել:
Դու որ խընդրում ես արդար դատաստան՝
Հաւաստի եղիր որ արդարութիւն
Պէտք է արուիք քեզ, առաւել քան այն
Ինչ ցանկանում ես:
ԳՐԱՑԻԱՆՈ. Դիտնւն դատաւոր:—Լըսում ես, հրէալ:
—Ա՛խ, ինչ գիտնական դատաւոր է սա:
ԾԱՅԼՈԿ. Այդ պարագայում, ես այս կընդունեմ.—
Տըւէք մուրհակի եռապատիկը,
Եւ թող քրիստոնեան իր գործին գընալ:
ԲԱՍՍԱՆԻՈ. Ե՛կ, դրամն ըստացիր:
Կացէք, մի շտապէք.
ՊՈՐՑԻԱ. Հըէան կատարեալ արդար դատաստան
Պէտք է ըստանալ. կամաց, մի շտապէք.
Նորան կըտըրուի տուգանքը միայն:
ԳՐԱՑԻԱՆՈ. Ա՛խ, հրէալ:—Ո՛վ դու արդար դատաւոր,
Դիտնւն դատաւոր:
ՊՈՐՑԻԱ. Պատրաստուիր ուրեմն
Քո միսը կըտըրել. արիւն չըթափես.
Ոչ էլ աւելի կամ պակաս կըտրես,
Այլ ճիշդ մի ֆունտ միս. եթէ մի ֆունտից
Մի քիչ աւելի կամ պակաս լինի՝
Թէւ ալնքան քիչ, որ կշիռքի մէջ
Քաշը ծանրացնէ կամ թեթեացնէ
Մի խեղճ ցորենի մի քսաներորդով,
Ոչ, մինչև անգամ եթէ այդ կշիռքն
Մի մազի չափով հակուի դէալ մի կողմ

Դու պէտք է մեռնիս, և բոլոր գոյքը
 Յարքունիս գրաւուին:
 ԳՐԱՑԻԱՆՈ. Մի երկրորդ Դանիէլ,
 Դանիէլ է, հրէալ. ահա, անհաւատ,
 Լաւ ճանկս ես ընկել:
 ՊՈՐՑԻԱ. (Շայլովին). Ինչու ես կանգնել,
 Ըստանալիքդ առ:
 ՇԱՅԼՈՒԿ. Գումարն ինձ տըւէք
 Առանց տոկոսի, և թողէք գընամ:
 ԲԱՍՍԱՆԻՈ. Պատրաստ է, եկ, առ:
 ՊՈՐՑԻԱ. Ո՛չ, նա մերժեց արդ
 Ատեանի առջեւ: Նա պէտք է ստանայ
 Միայն իր պահանջն և արդարութիւն:
 ԳՐԱՑԻԱՆՈ. Դանիէլ, կրկնում եմ, մի երկրորդ Դանիէլ:
 Հրէալ, ես քեզնից շընորհակալ եմ,
 Որ այս յարմար բառն ինձ սովորեցրիր:
 ՇԱՅԼՈՒԿ. Տուած փողըս էլ չէք ուզում յետ տալ:
 ՊՈՐՑԻԱ. Քեզ ոչինչ չեն տալ բացի տուգանքից,
 Որ պիտի ստանաս անձիդ վըտանգով:
 ՇԱՅԼՈՒԿ. Դէհ, որ ալդպէս է՝ սատանան նորան
 Թող վակելում տալ, էլ ինչու մընամ
 Եւ վիճաբանեմ:
 ՊՈՐՑԻԱ. Ո՛չ, հրէալ, կանդ առ:
 Օրէնքը քեզնից պահանջներ ունի:
 Գրած է Վենետիկի օրէնքների մէջ.
 Եթէ հաստատուի, որ երբեկիցէ
 Մի օտարական, ուզգակի կերպով
 Կամ անուղղակի, ջանք արած լինի
 Մի քաղաքացու կեանքը բառնալու՝
 Նա, որի ընդդէմ դաւ դըրած լինի՝
 Պէտք է ըստանայ նրա ինչքի կէսը.
 Իսկ մի այլ կէսը պէտք է յատկացուի
 Պետական գանձին. և իր կեանքն անդամ

Կախում կունենայ միմիալն Դուքսի
 Ողորմութիւնից, ամեն ձայնի դէմ:
 Եւ, իմ կարծիքով, դու գըտընւում ես
 Նոյն պարագայում. արդէն երևաց
 Ալսակընյայտնի ապացոյցներով,
 Որ անուղղակի, նաև ուզգակի
 Դու դաւ ես դըրել ամբաստանեալի
 Նոյն իսկ կեանքի դէմ, և ենթարկուել ես
 Ալն նոյն վըտանգին որ ես լիշեցի:
 Չոքիր ուրեմըն և խընդրիր Դուքսից
 Որ քեզ ներում տայ:
 ԳՐԱՑԻԱՆՈ. Իրաւունք խընդրիր,
 Որ դուքո ձեռքով գընաս քեզ կախես.
 Բայց ըստացուածքըդ գրաւուած լինելով
 Չըւանի գին էլ քեզ չէ մընացել.
 Ուրեմըն պէտք է տէրութեան ծախքով
 Կախաղան հանուիս:
 ԴՈՒԻՔԱ. Բայց որ հասկանաս,
 Մեր ըզգացումներն ինչքան տարբեր են՝
 Կեանքըդ շնորհում եմ նախ քան դու խընդրես:
 Քո ինչքիդ կէսը՝ Անտոնիոյնն է.
 Նաև միւս կէսը կընկնի պետութեան.
 Բայց եթէ զըզչաս՝ գուցէ կազատուիս
 Տուգանքով միան:
 ՊՈՐՑԻԱ. Պետութեան մասին,
 Ո՛չ Անտոնիօի:
 ՇԱՅԼՈՒԿ. Ոչ, ես չեմ ուզում:
 Առէք իմ կեանքս էլ, և ամենայն ինչ.
 Մի շնորհէք գուք արդ: Իմ տունս էք առնում,
 Երբ որ առնում էք նորա նեցուկը.
 Իմ կեանքս էք առնում, երբ առնում էք այն՝
 Որով ապրում եմ:

ՊՈՐՅԻԱ. Անտոնիօ, նորան ի՞նչ էք շընորհում
Զեր ողորմութեամբ:

ԳՐԱՑԻԱՆՕ. Մի ձըրի չըւան,
Եւ ուրիշ ոչինչ, ի սէր Աստուծոյ:

ԱՆՏՈՒԻՕ. Թէ սինիօր Դուքսին և այսատեանին
Հաճոյ է շնորհել տուգանքի կէսը՝
Ես էլ յօժար եմ. միայն թէ միւս կէսն
Ինձ տոկոսով տայ, որ իր մահից յետ
Յետ տամ այն գումարն նոյն այն պարոնին,
Որ այս վերջերս նորա աղջըկան
Սուեանգել է: Երկու այլ պայման.
Նախ՝ որ փոխարէն այս ներողութեան՝
Պէտք է նա իսկոյն քրիստոնեալ դառնալ.
Երկրորդ՝ որ այստեղ, ատեանի առջեւ
Թուղթ ըստորագրէ, որ իր մահից յետ
Ընծայ է անում իր բոլոր գոյքը
Իր նոր փեսալին և իր աղջըկան:
ԴՈՒԻՔՍ. Նա ալդպէս կանէ. թէ ոչ յետ կառնեմ
Իմ տըւած ներում:

ՊՈՐՅԻԱ. Յօժար ես, հրէալ
Ի՞նչ է քո խօսքը:

ՇԱՑԼՈԿ. Այն, յօժար եմ:

ՊՈՐՅԻԱ. Ատենադըպի՞ր, կազմեցէք իսկոյն
Ընծայգիրը:

ՇԱՑԼՈԿ. Խընդըեմ թոյլ տըւէք
Գընամ այստեղից, ինձ լաւ չեմ ըզգում.
Թուղթն ուղարկեցէք, ես կըստորագրեմ:

ԴՈՒԻՔՍ. Գնա, բայց կատարիր:

ԳՐԱՑԻԱՆՕ. Դու մըկըլտուելիս՝
Երկու կընքահայր պէտք է ունենաս.
Բայց գատաւորը թէ ես լինէի
Դու կունենալիր տասն էլ աւելի,

Որ քեզ տանէին դէպի կախաղան,
Ոչ դէպ աւագան ^{*)}: (Եպյուկը դուրս է գնում):

ԴՈՒԻՔՍ. (Պորյային). Պարոն, խընդըում եմ,
Որ բարեհաճէք ճաշին մեզ հիւր գալ:

ՊՈՐՅԻԱ. Խորին յարգանքով ներում եմ խընդըում
Զեր Բարձրութիւնից: Այս գիշեր ևեթ
Պէտք է յետ դառնամ դէպի Պադուա.
Ինձ հարկ է ուրեմն ճանապարհ ընկնել:

ԴՈՒԻՔՍ. Ցաւում եմ որ գուք ժամանակ չունիք:
Ուրեմն, Անտոնիօ, լաւ վարձատրեցէք
Ազնիւ պարոնին. գուք, իմ կարծիքով
Նատ էք պարտ նորան:

(Դուքսը եւ իր հետեւրդները դուրս են գնում):

ԲԱՍՍԱՆԻՕ. Յարգելի պարոն,
Բարեկամու և ես ձեր իմաստութեամբ
Փըրկուելու ենք այսօր մեծ պատուհասից.
Որի փոխարէն՝ առաջարկում ենք
Այն երեք հազար օսկին, որ հրէան
Ըստանալու էր՝ որպէս գոյզըն վարձ
Զեր ազնըւաբար քաշած նեղութեանց:

ԱՆՏՈՒԻՕ. Բացի դորանից ձեզ պարտ ենք մընում
Սէր և մեծարանք մինչև յաւիտեան:

ՊՈՐՅԻԱ. Ով գոհ է՝ նա լաւ վարձատըրուած է.
Ես ինքըս գոհ եմ ձեզ ազատելով.
Եւ այդ պատճառով ես ինձ հաշւում եմ
Լաւ վարձատըրուած: Երբէք իմ հոգիս
Զէ եղել վարձկան, աւելի քան այս:
Միան խընդըում եմ, որ ինձ ճանաչէք

^{*)} Այսինքն ասաներկու երդուեալ դատաւորներ, որոնք ըստ
անդիմական սովորութեան, պէտք է հաստատին ամեն մահուան
վճիռ: Եկապիր այստեղ վենետիկեան դատարանին տալիս է ան-
գլիական ձեակատարութիւն:

Երբ կրկին անգամ հանդիպինք միմեանց:
Մաղթելով ապա ձեզ ամեն բարիք՝
Հրաժեշտ եմ խընդրում:

ԲԱՍՍԱՆԻՈ.

Սիրելի պարոն,
Պէտք է ըստիպմամբ ձեզ ըըռնադատեմ,
Մեզնից ընդունել գէթ մի լիշտակ,
Որպէս հաւաստիք մեր մեծարանքի,
Ոչ թէ իբրև վարձ: Նընորհեցէք ինձ,
Խընդրեմ, երկու բան. մէկ չըմերժել ինձ,
Եւ երկորդ՝ ներել:

ՊՈՐՑԻԱ.

Շատ էք ըստիպում,
Եւ այդ պատճառով պէտք է տեղի տամ.

(Անտոնիոյին)

Տուէք ինձ ապա ձեր ձեռնոցները,
Եւ ես կըկըրեմ իբրև լիշտակ.

(Բասսանիոյին)

Իսկ ձեզնից, պարոն, ձեր սիրոյ համար
Ես այս մատանին կտոնեմ լիշտակ:—
Բայց ինչու ձեր ձեռքն ետև էք քաշում.

Սրանից աւելի ես չեմ ընդունի.
Իսկ դուք չէք մերժի, թէ ինձ սիրում էք:

ԲԱՍՍԱՆԻՈ. Տէր, այս մատանին մի չընչին բան է.
Ես կամաչէի, որ այդ ձեզ տալի:

ՊՈՐՑԻԱ. Ալ բան չեմ ուզում, այս մատանուց զատ՝
Կարծես թէ սիրտը հէնց դորան կըպաւ:

ԲԱՍՍԱՆԻՈ. Բայց սա ինձ համար աւելի թանկ է
Քան իր արժէքը: Ես ձեզ կընծալեմ
Վենետիկի բոլոր մատանիներից
Ամենաթանկը, որ գըտնել կըտամ
Յալտարարութեամբ. իսկ սորա համար
Խընդրեմ ինձ ներէք:

ՊՈՐՑԻԱ. Երեխ, պարոն,
Լոկ խոստումներով առատաձեռն էք:

Նախ ինձ ուսուցիք մուրացիկ լինել.
Իսկ հիմայ կարծեմ ուսուցանում էք՝
Ինչպէս բացասել մուրացիկներին:

ԲԱՍՍԱՆԻՈ. Տէր իմ, այս օղը կինս է ինձ տրեւել.

Երբ գըրաւ մատիս՝ ինձ երդուել տըւաւ,
Որ ոչ կորցընեմ, ոչ ծախեմ, ոչ տամ:

ՊՈՐՑԻԱ. Դա լաւ պատճառ է շատ մարդկանց համար
Երբ որ ուզում են չըտալ մի ընծայ:

Եթէ ձեր կինը չէ լիմար մի կին,
Երբոր նա լըսէ, թէ ինչպէս գորան

Արժանացել եմ՝ նա քէն չի պահի
Որ այդ մատանին ինձ էք պարզեցել:

Շատ լաւ, Տէր ընդ ձեզ:

(Պորցիա եւ Ներիսսա դուրս են գնում):

ԱՆՑՈՒԻ. Սինիօր Բասսանիօ, տըւէք մատանին:

Նորա մատուցած ծառայութիւններն
Եւ ձեր սէրն դէպ ինձ՝ թող զուգակըշուն
Չեր կնոջ պատուէրին:

ԲԱՍՍԱՆԻՈ. Գնա, Գրացիանօ,

Վազիր ետեկից և հասիր նորան.

Տուր այս մատանին, և թէ կարող ես՝
Բեր նորան քո հետ Անտոնիօի մօտ:

Վազիր, ըշտապիր:

(Գրացիանօն գնում է):

ՄԵՆՔ ԷԼ Երկուսով

Գընանք ձեր տունը, և վաղն առաւօտ
Կանուխ սըլանանք թռչենք ի Բել'մոնտ:
Եկէք, Անտոնիօ:

(Դուրս են գնում):



• մօմի թիւալուն զվերաստ հմց մաս
• զժ և առաջարկու նեծղաբ յանչ յան
• մէջդա յանչ առաջարկու յան
ՏԵՍԱՐԱՆ Բ.
• յացու հմց և ունդ զրո սրու և ոյ զի՞ Անթառա
• առաջ ամսուն հմց անոնի առաջ առ
• նուս չա և անուն չա և անուն չա զի՞
• յանաշ ընտիրուն սայ մանակու այս ամ Անթառա

ՊՈՐՑԻԱ. Հարցըու թէ ուր է հրէալի տունը,
Եւ տուր այս թուղթը որ ըստորագրէ.
Այս գիշեր և եթ ճանապարհ կընկնենք
Եւ մեր այրերից մէկ օր էլ առաջ
Մենք տուն կըհասնենք: Իսկ Լորէնցօլին
Ուրքան գիւր կըգալ կըտակալուղթը:
(Մոնում է Գրացիանօ).

ԳՐԱՑԻԱՆԾՕ. Գեղեցիկ պարոն, լաւ որ ձեզ հասալ:
Սինիօր Բասսանիօն լաւ մըտածելով՝
Ահա մատանին ձեզ է ուղարկում
Եւ աղաչում է, որ բարեհաճէք
Ճաշին գալ իր մօտ:

ՊՈՐՑԻԱ. Այդ կարելի չէ:
Նորա մատանին ես ընդունում եմ
Ենորհակալութեամբ. որը, խընդրում եմ
Յալտնէք իմ կողմից. բացի դորանից՝
Խընդրում եմ յուց տաք այս իմ գըրագրիս
Շալոկի տունը:

ԳՐԱՑԻԱՆԾՕ. Դատ լաւ, պատրաստ եմ:
ՆԵՐԻԱՍՍԱ. (Պորցիային). Տէր իմ, ուզում եմ ձեզ մի բառ ասել:
(Յած ծայնով)

ՊՈՐՑԻԱ. Ես էլ ջանք անեմ ամուսնիս ձեռքից
Մատանին կորզել, թէւ ես նորան
Երդուել եմ տուած, որ ցըմահ պահէ:
Երաշխաւոր եմ, որ կըլաջողես.
Ա.իս, ինչպէս նորա պինդ երդումներով

Ջանք են անելու մեզ հաւատացնել,
Թէ ալր մարդերի տուել են նոքա
Մատանիները. մենք էլ կըպընդենք
Եւ նորանցից խիստ երդումներ կանենք,
Թէ ճշշմարիտ չէ: Եկ գնանք, ըշտապիր.
Դու գիտես թէ ուր ես քեզ կըսպասեմ:
ՆԵՐԻԱՍՍԱ. (Գրացիանիօյին) Գնանք, ազնիւ պարոն, ցոյց տը-
ւէք խընդրեմ
ՀՐԷԱԼԻ ՏՈՒՆԸ:
(Գուրս են գնում):

Եմքուսարաց թե այժմա մմ զման
ազում մմ յմուս դիմրան զյու չե
գմքրցաց թ գմնն զյումիւսաւ
զմնան զմնեարց ամիս սցըմազում չե
դիմրաց գմուր թէ չե ամպանցց չե
նմանցաց թց ոմ զյու չե սմուր առ

ԱՐԱՐՈՒԱԾ ՀԻՆԳԵՐՈՐԴ

(Խանք մմ աղով)

ՏԵՍԱՐԱԿՆ Ա.

Մանում ևն ՀՈՐԷՆՅՕ և ԶԵՍԻԿԱ.

- ՀՈՐԷՆՅՕ. Ի՞նչպէս լուսնեակը շողում է պայծառ:
Ալսպիսի գիշեր, այն ինչ քընքօրէն
Հողմը ծառերին համբոյը էր տալիս,
Եւ նոքա բընաւ չէին սօսաւում,
Ալսպիսի գիշեր, կարծեմ, Տրոյիոս
Ելաւ Տրովալի ալարըսպի վերայ,
Եւ հոգու խորքից հառաջներ ուղղեց
Դէպի յունական տաղաւարները,
Որտեղ նընջում էր Կընիդն այն գիշեր:
ԶԵՍԻԿԱ. Ալսպիսի գիշեր երկչոտ քայլերով
Թիզբէն շըրջում էր գաշտի ցօղի վրայ՝
Երբ որ նա տեսաւ առիւծի ըստուերն,
Նախ քան առիւծին, և սարսափահար
Թողեց և փախաւ:
- Ալսպիսի գիշեր
Կանգնած էր Դիտոն, ձեռքին ուռի ոստ
Ծովի ամալի եղերքի վերայ,

Եւ նշաններով իր սիրականին
Կանչում էր կըրկին դէպի Կարթագէն:
ԶԵՍԻԿԱ. Ալսպիսի գիշեր պէտք է Մեղէան
Ժողովում լինէր այն դիւթիչ խոտերն,
Որոնք դարձըրին ծերուկ Յասոնին
Մատղաշ պատանի:

ՀՈՐԷՆՅՕ. Ալսպիսի գիշեր սիրուն Զէսիկան
Խոյս տըւաւ հարուստ հրէալի տընից,
Եւ իր անսլիտան սիրականի հետ
Փախան Վենետկից մինչեւ ի Բելմոնտ:

ԶԵՍԻԿԱ. Ալսպիսի գիշեր չահիլ Լորէնցօն
Երգուեց, որ նըրան սաստիկ սիրում է,
Եւ յափըշտակեց աղջըկալ սիրաը
Հաւատարմութեան շատ երգումներով,
Որոնց ոչ մէկը անկեղծ չէր սակայն:
ՀՈՐԷՆՅՕ. Ալսպիսի գիշեր սիրուն Զէսիկան,
Լինելով փոքրիկ մի չարաճըճի՝
Զուր տմբաստանեց իր սիրականին,
Որ նորան ներեց:

ԶԵՍԻԿԱ. Ես քո խօսքի տակ
Մնացողը չէի եթէ մարդ չըգար:
Բայց յուշ, լլսում եմ մարդու ոտնաձայն:
(Մտնում է Ստեփան),

ՀՈՐԷՆՅՕ. Ո՞վ է որ ալսպիս տըագ գալիս է
Ալս լուռ գիշերով:

ՄՏԵՓԱՆ. Բարեկամ մի մարդ:

ՀՈՐԷՆՅՕ. Բարեկամ մի մարդ, ինչ բարեկամ է:

ՄՏԵՓԱՆ. Անունը լալտնիր խընդրեմ, բարեկամ:

ՄՏԵՓԱՆ. Անունս է Ստեփան. և լուր եմ բերել,
Որ իմ տիրուհիս գեռ լոյս չըծագած
Բելմոնտ կը հասնի. նա ուխտի գընաց
Ալս շըրջակալքում, ուր կան սուրբ խաչեր,
Եւ ծունկ չոքելով աղօթում է նա,

Որմիք մօտալուտ ամուսնութիւնը

Բախտաւոր լինից զի նայմած

ՀՈՐԵՆՑՕ. Հետն ով է գալիս:

ՍՅԵՓԱՆ. Ոչ ոք, այլ միայն մի սռւրբ աբեղայ

Եւ իր նաժիշտը: Բայց խընդրեմ ասէք,

Արդեօք իմ տէրըս չէ վերադարձել:

ՀՈՐԵՆՑՕ. Ոչ, և նորանից ոչ մի լուր չունինք:

Բայց եկ, Զէսիկա, խընդրեմ տուն դառնանք,

Եւ շուտ պատրաստուինք փառքով և պատուի

Ներս ընդունելու այս տան տիրուհուն:

(Մտնում է Լամսըլո).

ՀԱԽՍՂԼՕ. Սօլ, լ'ա, սօլ, լ'ա, հօ, հա, հօ, սօլ, լ'ա,
սօլ լ'ա *):

ՀՈՐԵՆՑՕ. Ով է կանչում:

ՀԱԽՍՂԼՕ. Սօլ, լ'ա, արդեօք տեսէլ էք պ. Լորէնցօց-
ին և տիկին Լորէնցօցին, սօլ լ'ա, սօլ լ'ա:

ՀՈՐԵՆՑՕ. Թող այդ գոռում գոչումք, այ մարդ: Նո-
քա այստեղ են:

ՀԱԽՍՂԼՕ. Սօլ, լ'ա. որտեղ, որտեղ:

ՀՈՐԵՆՑՕ. Այստեղ:

ՀԱԽՍՂԼՕ. Աաացէք նորան որ մի սուրհանդակ է եկել
իմ տիրոջից, շեփորը լցրած ուրախ լրերով. իմ տէրս լոյսը
չըբացուած այստեղ կլինի:

ՀՈՐԵՆՑՕ. Արի իմ հոգեակ, տուն վերադառնանք,

Եւ նոցա գալուն ըսպասենք ալնտեղ:

Բայց ոչ, ինչ վընաս. ինչու ներս գընանք:

Խնդրեմ Ըստեփան, գընա և յայտնիք

Որ տան տիրուհին շուտով գալու է.

Դու էլ բեր քո հետ նուագածուներին

Այս բաց օդի մէջ:

(Գնում է Ստեփան).

) Լամսըլօ ակտեղ ուզում է ձեացնել սուրհանդակի եղջերա-
փողի ձանը, որ միշտ սուրհանդակները իրանց զից կախ էին տա-
լիս.

Staunton.

Ի՞նչպէս լուսնեակը

Նիրհած է անոյշ այս բըլլի վերալ.

Եկ նըստենք այստեղ, և թող ներս սահեն

Երաժշտութեան ախորժ հընչիւններն

Մեր ականջները: Մեզմ լըռութիւնը

Եւ խաղաղ գիշերն յարմար են գալիս

Երաժշտութեան անոյշ շեշտերին:

Նըստիր, Զէսիկա, և նայիր, ի՞նչպէս

Երկնակամարը խիտ սփարւած է

Ոսկեալ շողզողուն շըրջանակներով:

Զըկալ ոչ մի հատ, որչափ և փոքրիկ,

Այս քո նըշմարած երկնագընդերից,

Որ չըգեղգեղէ իր հոլովման մէջ

Որպէս մի հըշտակ, ձայնակից եղած:

Մատաղ աչքերով քերովբէներին:

Մի նոյնանըման ներդաշնակութիւն

Կայ անմահական հոգիների մէջ:

Բայց քանի այս փուչ կաւեալ հանդերձը:

Փակում է հոգին իր բերտ կազմի մէջ՝

Մենք այդ չենք լըսում:

(Մտնում են երաժիշտներ).

—Եկէք, Պիանալին

Զարթեցրէք քընից մի օրհներգութեամբ,

Եւ քաղցրամըրմունց մեղեդիներով

Գըգուեցէք ականջը ձեր տիրուհու.

Յանկուցէք նըրան երաժշտութեամբ

Դէպի իր տունը:

(Երաժշտութիւն):

Ես միշտ տըրտմում եմ:

Երբոր լըսում եմ մի քաղցր եղանակ:

Պատճառը այն է, որ ամբողջ հոգով

Դու համակւում ես: Պիտել ես երեկ:

Մի թափառայած և վարի նախիր,

Կամ կայտառ անսանձ քուռակների ջոկ,
Երբ թըռչկոտում են խօլ ոստիւններով
Եւ փըռընչում են, խըրխինջ արձակում.
Դա իրանց արեան հրատապ աւիւնն է:
Եթէ պատահմամբ փողի ձայն լըսեն,
Կամ մի եղանակ երաժշտական՝
Կըտեսնէք բոլորն յանկարծ կըկանգնեն.
Նոցա կատաղի և վայրագ աչքերն
Խսկոյն կըտանան մի հեզիկ նայուածք
Երաժշտութեան քաղցը ազդեցութեամբ:
Հէնց արդ պատճառով բանաստեղծները
Հէքեաթ շինեցին Որփէոսի վրայ,
Թէ նա քարշում է կոհակներ, ծառեր
Եւ քարաժայուեր: Զըկայ մի էակ
Ալնչափ անըգգայ, կոշտ և կատաղի՝
Որ գէթ մի րոպէ չըբընափոխուի
Երաժշտութեան ազդեցութեան տակ:
Ով իր մէջ չունի երաժշտառութիւն,
Կամ չէ ըզգածւում անոյշ ձայների
Համախըմբումից՝ նա ընդունակ է
Դաւի, նենգութեան, յափրշտակութեան.
Նորա հոգեկան յուզմունքը մութ է
Գիշերուալ նըման, իդձերը՝ մըսալլ
Որպէս Երեբոս: Հաւատ չընծայես
Ալդպիսի մարդու: Լաւ, հիմա լըսենք
Երաժշտութեան:

(Մտնում են Պորցիա և Ներիսսա):

ՊՈՐՑԻԱ.

Նայիր այն լոյսը

Որ երևում է. դահլիճիս մէջ է.

Տես, որչափ հեռու լոյս է տարածում

Այն փոքրիկ մոմը. այսպէս է փայլում

Նաև բարի գործն այս չար աշխարհում:

ՆԵՐԻՍՍԱ.

Քանի փայլում էր պայծառ լուսընկան՝

Մենք այս ճըրագը չէինք նըկատում:
ՊՈՐՑԻԱ. Այսպէս մեծ փառքը նըսեմացնում է
Աւելի փոքրը. այսպէս բըդեշիը
Փայլում է պայծառ որպէս մի արքայ,
Մինչեւ թագաւորն ինքն է գուրս գալիս
Եւ իսկոյն ևեթ բըդեշի շուքը
Անհետանում է, որպէս մի առուակ
Անհուն ծովի մէջ: Երաժշտութիւն.
Եկ, ականջ դընենք:
(Երաժտութիւն).

ՆԵՐԻՍՍԱ. Սոքա, տիրուհի

Զեր սեփական տան երաժիշտներն են:

ՊՈՐՑԻԱ.

Ամեն բան լաւ է երբ իր տեղին է:
Կարծես թէ հիմա երաժշտութիւնն
Աւելի քաղցը է քան թէ ցերեկով:

ՆԵՐԻՍՍԱ. Արդ քաղցրութիւնը լըսութեան մէջ է:

ՊՈՐՑԻԱ. Ագուաւն էլ նոյնչափ անոյշ է երգում

Որչափ արտուտը, երբ լըսող չըկայ.
Եւ, իմ կարծիքով, եթէ սոխակն էլ
Ցերեկով երգէր, երբ կըրկըռում են
Բոլոր սագերը՝ նա չէր համարուի

Լաւագոյն երգիչ քան թէ սարեկը:

Որչափ բաներ կան որ ըստանում են

Առանձին մի յարդ յարմար ըովէից,

Եւ լոկ այն ժամին գովեստի արժան

Եւ կատարեալ են: Բայց սուս. մի խօսիր.

Քընած է լուսինն էնդիմիոնի հետ,

Եւ չէ կամենում զարթնել իր քընից:

(Երաժտութիւնը դադարում է):

ՀՈՐԷՆՅՈՅ. Թէ չեմ սըխալում Պորցիայի ձայնն է:

ՊՈՐՑԻԱ. Նա ճանաչում է ինձ այնպէս՝ որպէս

Կոյրը կըկուին, նորա վատ ձայնից:

ՀՈՐԵՒՅԾՕ. Սիրելի տիկին, ձեզ գալուստ բարի:
ՊՈՐՅԻԱՆ. Գընացել էինք աղօթք անելու
 Եւ մեր սիրելի ամուսիններին
 Բարի յաջողում բարեմաղթելու,
 Եւ մենք լուս ունինք որ մեր աղօթքը
 Ազդու կըլինի: Վերադարձել են:
ՀՈՐԵՒՅԾՕ. Ո՛չ, դեռ չեն եկել, բայց մի սուրհանդակ
 Եկել յալտնել է, որ շուտով կըդան:
ՊՈՐՅԻԱՆ. Արի, Ներիսսա, իսկոյն տուն գընա,
 Պատուիրիր բոլոր իմ ծառաներիս,
 Թէ որևիցէ մի ակնարկութեամբ
 Չըլայտնեն նոքա որ այստեղ չէինք:
 Դուք էլ, Լորէնցօ, դու էլ, Զէսիկա:
 (Մի փող է Ռէյում)։

ՀՈՐԵՒՅԾՕ. Զեր ամուսինը հիմա կըհանի.
 Ահա լըսում եմ մի շեփորի ձախն:
 Տիկին, մեր մասին միամիտ եղէք.
 Մենք շատախօս չենք:

ՊՈՐՅԻԱՆ. Այս գիշերը ինձ
 Կարծես թըւում է մի հիւանդ ցերեկ.
 Մի քիչ աւելի գունաթափ է սա.
 Սա մի ցերեկ է այն օրերի պէս՝
 Երբ թագնըւած է արեն ամպի տակ:
 (Մտնում են Բասսանիօ, Անտոնիօ, Գրացիանիօ եւ հետեւորդներ)։

ԲԱՍՍԱՆԻՅՈ. Եթէ դուք շըրջէք երբ արև չըկա՞
 Հակոտնէից հետ կուսենանք ցերեկ:

ՊՈՐՅԻԱՆ. Կուզէի լոյս տալ, բայց լոյսի նըման
 Ես թեթև լինել չէի կամենալ.
 Զէ որ թեթև կիսն ամուսնու համար
 Մի ծանըր բեռ է. երանի երբէք
 Ես բեռ չըլինիմ ամուսնիս համար:
 Բայց յոյս առ Աստուած:— Բարեւ եկաք տուն,
 Իմ տէր ամուսին:

ԲԱՍՍԱՆԻՅՈ. Ամսերդիմք ունենորհակալ եմ,
 Տիկին, ողջունիր իմ բարեկամիս.
 Որին ես այն մարդը, ոա է Անտոնիօն,
 Որին ես այնչափ անսահման կերպով
 Երախտապարտ եմ:

ՊՈՐՅԻԱՆ. Եւ պէտք է լինիք
 Ամեն բանի մէջ, քանզի լըսել եմ,
 Նա էլ ձեր մասին շատ բան յանձն առաւ:
ԱՆՑՈՒՅԻՅՈ. Բայց ոչ աւելի, քան թէ հատուցի:

ՊՈՐՅԻԱՆ. Պարոն, մեր տանը բարով էք եկել.
 Պէտք է ցոյց տալ ալդ ոչ լոկ խօսքերով.
 Առ դո ընդի Ուրեմն բառացի այս մեծարանքը
 Ջայու մաս Թող համառօտեմ:

(Գրացիանօ էւ Ներիսսա այս միջոցին տաք տաք խօսում են).
ԳՐԱՑԻԱՆԻՅՈ. Ահա այն լուսնով
 Երդւում եմ, որ ինձ զուր էք մեղադրում:
 Հաւատացնում եմ որ այն տըւել եմ
 Եղբար Սլն դատաւորի ատենադպրին:
 Ի՞նչերքինի ինչը նա որին տըւի,
 Որ դուք, իմ հոգեակ, ալդքան ինձանից
 Չընեղանալիք:

ՊՈՐՅԻԱՆ. Վահ, ալդքան շուտով
 Կըռուեցիք արդէն. ինչի մասին է:

ԳՐԱՑԻԱՆԻՅՈ. Մի ոսկէ օղի, չընչին մատանու,
 Որը Ներիսսան ինձ ընծալել էր,
 Եւ նորա վերայ կար մի մակագիր,
 Որ ուղղըւած էր ամբողջ աշխարհին,
 Որպէս այն խօսքերն՝ որ փորտգրում են
 Զինագործները դանակի վերալ.
 «Սիրիր ինձ դու միշտ, մի՛ զատուիր ինձնից»:

ՆԵՐԻՍՍԱ. Ինչու էք խօսում մակագրի վերայ
 Կամ արժողութեան: Երբ տըւի ձեզ ալն՝
 Երդուեցիք՝ ցըմահ կըրել ձեր մատին,

Մինչև իսկ ձեզ հետ գերեզման տանել:
Ուրեմըն դուք այն, Եթէ ոչ սիրոյս,
Գէթ այն խանդավառ ձեր երդմանց համար՝
Պէտք էր յարգէիք և պինդ պահէիք:
Ի՞նչ. դատաւորի գըրագրին տըւիք:
Բայց ես քաջ գիտեմ, որ մազ չի բուսնի
Ալդ քարտուղարի կըզակի վերայ:
ԳՐԱՑԻԱՆՕ. Անշուշտ կըբուսնի, թէ այնքան ապրի,
Որ մի չափահաս տըղամտրդ դառնալ:
ՆԵՐԻՍՍԱ. Ալն, թէ երբէք մի կին կարող է
Տըղամտրդ դառնալ:
ԳՐԱՑԻԱՆՕ. (Չեռքը բարձրացնելով). Ալս ձեռքըս վկայ, որ ես
այն տըւի
Մի պատանեակի, մի խեղճ տըղայի,
Մի ինչ-որ փոքրիկ, չնչին տըղայի,
Հասակով քո չափ, որ քարտուղարն էր
Այն դատաւորի. շատախօս մի տղայ,
Որ իր վարձի տեղ մատանին խընդրեց.
Հոգիս էլ դուրս գար՝ ես չէի կարող
Նորան մերժել այդ:
ՊՈՐՑԻԱ. Պէտք է պարզն ասեմ
Դուք արժանի էք խիստ պարսաւանքի,
Որ ալդպէս դիւրաւ ձեռքից տըւել էք
Չեր նշանածի առաջին ընծան.
Մի բան, որ այնքան զերմ երդումներով
Չեր մատն էր գըրուած, որ ձեր մըսի մէջ
Ամբացըրուած էր իբր ուխտի նըշան:
Ես մի մատանի նըւէր եմ արել
Իմ սիրականիս և երդում տըւել,
Որ չըրաժանուի երբէք նորանից:
Ահա նա ինքը, ես նորա կողմից
Կարող եմ երդուել, որ չի տայ նա այն,
Եւ մինչև անգամ մատից չի հանի՝

Եթէ աշխարհի բոլոր գանձերն էլ
Տալին փոխարէն: Ճիշտը, Գրացիանո,
Դուք՝ վըշտանալու շատ անգութ պատճառ
Տալին էք ձեր կնոջ: Թէ ես լինէի՝
Կըխենթանալի:
ԲԱՍՍԱՆԻՕ (առանձին). Աւելի լաւ է
Զախ ձեռքըս կըտրեմ և երդում անեմ,
Որ այդ մատանին ես կորցըրել եմ՝
Երբ ուզում էի պաշտպանել նըրան:
ԳՐԱՑԻԱՆՕ. Սինիօր Բասսանիօն տըւաւ մատանին
Մի դատաւորի, որ խընդրում էր այն,
Եւ որ իսկապէս շատ արժանի էր.
Յետոյ մի տըղայ, որ քարտուղարն էր
Եւ որ նեղութիւն քաշել գըրել էր
Բոլոր թըղթերը՝ նա էլ իմն ուզեց.
Բայց թէ սպառնը և թէ իր ծառան
Ոչ մի ուրիշ բան չուզեցին առնել
Բացի այն երկու մատանիներից:
ՊՈՐՑԻԱ (Բասսանիօյն). Ի՞նչ մատանի է որ դուք տուել էք.
Ցոյս ունիմ, ոչ այն, որ ես ձեզ տըւի:
ԲԱՍՍԱՆԻՕ. Թէ ինձ հնար լինէր յանցանքիս վերայ
Մի սուտ էլ բարդել՝ ես կուրանալի.
Բայց դուք տեսնում էք, որ մատիս վերայ
Չըկալ մատանին. գնացել է ուրեմն:
ՊՈՐՑԻԱ. Նոյնպէս և չըկայ ձեր կեղծ սըրտի մէջ
Հաւատարմութիւն: Երկինքը վըկայ,
Էլ չեմ մտնի ես ձեր անկողնի մէջ՝
Մինչև մատանին չըտեսնեմ կըրկին:
ՆԵՐԻՍՍԱ. Եւ ես էլ նոյնպէս ձեր անկողնի մէջ՝
Մինչև որ ես էլ իմըս չըտեսնեմ:
ԲԱՍՍԱՆԻՕ. Անուշիկ Պորցիա, թէ գիտենալիք
Թէ ինչ մարդու եմ տըւել մատանին,
Թէ գիտենալիք թէ ում համար եմ

Տըւել մատանին, և հասկանալիք
Ինչի համար եմ տըւել մատանին,
Եւ ինչ վըշտով եմ տըւել մատանին,
Երբ չէր ընդունւում ոչ մի ուրիշ բան
Թէ ոչ մատանին՝ դուք կամոքէիք
Չեր բարկութիւնը:

ՊՈՐՅԻԱ. Թէ գիտենալիք,
Թէ ինչ զօրութիւն ունէր մատանին,
Թէ գիտենալիք կէս գինը միայն
Այն կընոջ, որ ձեզ տըւաւ մատանին,
Եւ գիտենալիք որ ձեր պատիւն իսկ
Հստիպում էր ձեզ պահել մատանին՝
Ձեռքից չէիք տայ դուք այն մատանին:
Ինչ մարդ է այդքան դժուարապահանջ
(Եթէ հաճէիք մի քիչ եռանդով
Պաշտմանել ինչ որ ձեզ տըւած էի),
Որ ուղէր ձեզնից, առանց շիկնելու,
Մի բան որ ձեր մօտ սուրբ էր համարուած:
Իրաւ, Ներիսսան ճշմարիտն ասաց,
Եւ ես էլ գիտեմ ինչ պէտք է կարծել.
Մեռնեմ ես, Եթէ մի կին չէ ստացել
Իմ այն մատանին:

ԲԱՍՍԱՆԻՕ. Ալդպէս չէ, տիկին.

Ոչ, հոգիս վըկալ, պատիւրս վըկալ.
Կընոջ չեմ տըւել, այլ մի դոկտորի,
Շատ քաղաքավար մի դատաւորի,
Որ երեք հազար ոսկի չընդունեց,
Եւ այն մատանին միայն պահանջեց:
Նախ ես մերժեցի, և նա բարկացած
Թողեց ինձ գընաց, նա, նոյն անձըն էր
Որ ամենաթանկ իմ բարեկամիս
Կեանքն էր ազատել: Հիմա, ասացէք,
Իմ չըքնաղ տիկին, ես ինչ անէի:

Պարտաւորուեցալ զըրկել մատանին
Նորա ետեից, մարդավարութիւնն
Եւ պատկառանքը ինձ տանջում էին.
Չէր կարող պատիւս ապերախտութեամբ
Դրան շաղախել: Ներող եղէք ինձ,
Բարեսիրուտիկին. ես երգւում եմ ձեզ
Գիշերի այս սուրբ լուսատուներով,
Որ եթէ այնտեղ եղած լինէիք՝
Կարծեմ մատանին ինձնից կտոնէիք
Եւ դուք ձեր ձեռքով ազնիւ դոկտորին
Կընըւիրէիք:

ՊՈՐՅԻԱ. Ուրեմն այսուհետ
Թող չըմօտենալ այդ դոկտորն իմ տան.
Հիմա որ իմ այն սիրած գոհարըս,
Որ երգուել էիք ի սէր իմ պահել,
Այդ մարդու մօտ է, ես էլ ձեզ նըման
Առատաձեռըն կլինիմ դէպի նա
Եւ ինչ որ ունիմ, չեմ մերժի նորան,
Ոչ իմ մարմինը և ոչ ամուսնուս
Անկողինն անզամ: Ուրեմըն տանից
Գուք ոչ մի գիշեր դուրսը չըմընաք.
Արդոսի նըման հըսկեցէք իմ վրալ:
Եթէ չըհըսկէք և մենակ մընամ՝
Երգւում եմ պատուօվս, որ իմս է դեռ ևս՝
Դոկտորին կտոնեմ իմ անկողիս մէջ:

ՆԵՐԻՍՍԱ. Ես էլ գըրագիին. ուրեմն ըզգոյշ կաց
Որ չըլանձնես ինձ իմ պաշտպանութեան:
ԴՐԱՑԻԱՆԻՕ. Լաւ, ալդպէս արէք. Բայց ճանկըս չընկնի,
Թէ ոչ մատղահաս այդ քարտուղարի
Գրիչը կըփըշեմ:

ԱՆՏՈՆԻՈ.

ՊՈՐՅԻԱ.

Ես անբախտըս եմ
Ալդ կըսիւների տեղիք տըւողը:
Ալդպէս չէ, տէր իմ, դուք մի վըշտանաք

Գուշք այդուհանգերձ սիրելի հիւը էք:
ԲԱՍՍԱՆԻՕ. Պորցիա, ների՞ր ինձ ակամայ մեղքը,
Եւ մեր այս բոլոր բարեկամների
Ներկայութեանը ես երդում եմ քեզ,
Մինչև իսկ քո այդ սիրուն աչքերով,
Որոնց մէջ ես ինձ տեսնում եմ հիմա ..

ՊՈՐՅԻԱ. Բահ, ականջ դըրէք. երկու աչքիս մէջ
Նա երկու դէմքով տեսնում է իրան,
Ամեն մի աչքում մի դէմք տեսնելով.
Երդուիր երկդիմի քո անձիդ վերայ.
Արժանահաւատ մի երդում է այդ:
ԲԱՍՍԱՆԻՕ. Ոչ, մէկ լըսիր ինձ. այս մեղքըս ներիր,
Եւ երդում եմ ես իմ հոգուս վերայ,
Որ ես քո առաջ երբէք երդմնազանց
Չեմ լինի այլես:

ԱՆՑՈՒԻՕ (Պորցիային). Մի անգամ, տիկին,
Գրաւ գրի ես ինձ նրա շահի համար.
Բայց թէ չըլինէր այնտեղ այն անձը,
Որ ձեր ամուսնու մատանին առաւ
Ես կորած էի: Կըրկին գալիս եմ
Գըրաւ տալ հոգիս, որ ձեր ամուսինն
Երբէք դէսի ձեզ ինքնակամ կերպով
Չի գըրժի այլես իր արած երդման:
ՊՈՐՅԻԱ. Երաշխաւորը դուք պէտք է լինիք:
Տըւէք այս նորան և պատուիրեցէք
Որ աւելի լաւ պահէք քան միւսը:
(Տաղով նորան մատանին):

ԱՆՑՈՒԻՕ. Սինիօր Բասսանիօ, առէք մատանին,
Երդուեցէք պահէլ:
ԲԱՍՍԱՆԻՕ. Երկինքը վըկայ,
Աս այն է՝ որ ես դոկտորին տըւի:
ՊՈՐՅԻԱ. Ես էլ նորանից ըստացել եմ այդ:

Ներիր, Բասսանիօ. Հէնց ալդ դոկտորը
Մատանու համար այս անցած գիշեր
Պառկած էր ինձ հետ:
ՆԵՐԻՍՍԱ. Գու էլ ինձ ներիր,
Քաղցրիկ Գրացիանօ. Հէնց նոյն այն տղան,
Դոկտորի գրագիր այն փուչ պատանին,
Սորա տեղ ինձ հետ պառկեց այս գիշեր:

ԳՐԱՑԻԱՆՕ. Վահ, սա նոյն բանն է՝ ինչ որ նորոգել
Ճանապարհները ամառ ժամանակ
Երբ նոքա լաւ են: Խնչ, միթէ արդէն
Եղջիւրներ ունինք, գեռ արժան չեղած:
ՊՈՐՅԻԱ. Մի խօսէք խընդրեմ այդքան կոպտութեամբ:
Ահա մի նամակ. Երբ ազատ լինիք՝
Կարող էք կարդալ. Պատուայից է.
Բելլարիօն է գըել. այդտեղ կըտեսնէք,
Որ այն փաստաբանն ինքը Պորցիան էր,
Եւ քարտուղարն էլ այս ներիսսան էր:
Ահա Լորէնցօն ձեր առաջ վըկայ,
Որ իսկոյն և եթ ձեր գընալուց յետ
Ես էլ մեկնեցի, և այս րոպէիս
Վերադարձել եմ, տուն էլ չեմ մըտել:
Սինիօր Անտոնիօ, բարով էք եկել:
Չեզ համար ունիմ այնքան լաւ մի լուր
Որ չէք ըսպասում. բացէք այս թուղթը,
Եւ դուք կըտեսնէք որ ձեր նաւերից
Երեքը հասել են նաւահանգիստ
Ճոխ ապրանքով լի: Ես ձեզ չեմ ասի,
Թէ այս նամակը որպիսի դէպով
Իմ ձեռքըս ընկաւ:

ԱՆՑՈՒԻՕ. Զարմանալիք է:
ԲԱՍՍԱՆԻՕ. Դուք էիք դոկտորն. իսկ ես ճանաչել
Չըկարողացա՞յ:
ԳՐԱՑԻԱՆՕ. Խնչալէս, դուք էիք

Այն քարտուղարը, որ ինձ միտք ունէր
Եղիւրներ շնորհել: Ա
ՆԵՐԻՍՍԱ. Այս ես էի
Այն քարտուղարը, որ ալդպիսի բան
Երբէք չի անի, մինչև ու ապրի
Եւ ալր մարդ դառնալ:
ԲԱՍՍԱԿԵԽՈ (Պորգիային). Գեղանի դոկտոր,
Ես ձեզ առնում եմ անկողնիս ընկեր.
Իսկ երբ ես չըկամ գուք իմ կընոջ հետ
Կարող էք պառկել:
ԱՆՑՈՒԽՈ. Գեղանի տիկին,
Գուք ինձ շնորհեցիք, և' կեանք, և' ապրուսում
Այստեղ կարդում եմ իբրև հաստատ լուր
Որ իմ նաւերը ապահովութեամբ
Եկել ու հասել են նաւահանգիստ:
ՊՈՐԾԻԱ. Իսկ դուք ինչպէս էք, սինիօր Լորէնցօ,
Իմ քարտուղարը նաև ձեզ համար
Լաւ լուր է բերել:
ՆԵՐԻՍՍԱ. Այս բերել եմ
Եւ ձըրի կըտամ:

(Տալուիմի Թաղթ Լորէնցօյին):
Ես տալիս եմ ձեզ
Եւ Զէսիկալին մի կըտակաթուղթ
Հարուստ հրէալից, որով մահից լետ
Իր բոլոր կալքը ձեզ է կըտակել:
ԼՈՐԷՆՑՈ. Սիրուն տիկիններ, ալդ մանանալ է,
Որ դուք թափում էք սովատանջների
Ճանապարհի վրայ:
ՊՈՐԾԻԱ. Լուսը բացւում է.
Բայց հաստատ գիտեմ, որ գեռ ուզում էք
Մանրամասնաբար ալս գիտուածներին
Երազեկ լինել: Եկէք, ներս գընանք

Այնտեղ կարող էք հարցուփորձ անել,
Եւ մենք ճշշտութեամբ պատասխան կըտանք:
ԴՐԱՅՑԻԱՆՈ. Լաւ, ալդպէս անենք. առաջին հարցը,
Որին ներիսսան պէտք է երդումով
Ճիշտ պատասխան տայ. այս է, թէ արդեօք
Ո՞րն է աւելի նորան ցանկալի,
Մինչ վաղը գեշեր ոտքի վրայ մընալ
Թէ իսկոյն և եթ նընջարան գընալ,
Քանի որ լուսին գեռ երկու ժամ կայ:
Եթէ մինչև իսկ ցերեկ լինէր ալժմ՝
Կըցանկանալի որ խաւար պատէր,
Որ ես դոկտորի քարտուղարի հետ
Նընջելու գնալի: Քանի կեանք ունիմ՝
Ոչինչ չեմ պահի ալճպէս երկիւզով՝
Որպէս մատանին իմ ներիսսայի:

(Պուրս են գնում):



շման հցութեացած քայլ քամի Ա
զմառով մասնաւոր ցնութեառցը գտն ա՛
զայլ մէջուո զման սերպու Հայ.

Խոհուրդ է գուհր մասնայմ մէջու
զուրու Ան և այս լուս մասնաւոր ուժու

միայնաց մուռու միաւ և այս Ա
բայց բայց կառ ուժուր պայ չափ Ա
զմաց մասնայմ Ան և մասն ՔՊ

զայ նու ուժու ուժ միարո զա իման
Ենիս ուժուր թօղու բայ մէջու Ֆեյ

այնուո զա ուն զա միամբառցը
առ միայնաց միայն ու զմ


իման զման իման միամբ այժմցը
յուրայլու ուժուր իման միամբ

յուրայլու ուժուր իման իման միամբ

միայնայմ նու ուժուր իման միամբ

միայնայմ նու ուժուր իման միամբ

(Անու մասն)





ՀՀ Ազգային գրադարան
NL0596480

